

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Գ.Հ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻՑ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ
ՀԱԱՀ
2015

ՀՏԴ 811.19(07)
ՊՍՏ 81.2 հ ց7
Կ 530

**Հաստատված է Հայաստանի ազգային ազրարային
համալսարանի գիտական խորհրդի կողմից**

Գրախոսներ՝

**բան. գիտ. թեկն.,
դոցենտ Օ.Մ.Խաչատրյան**

Խմբագիր՝

**բան. գիտ. թեկն.
Ն.Պ.Սարգսյան**

Կ 530

Կիրակոսյան Գագիկ Հակոբի

Գործնական վարժություններ հայոց լեզվից

**Ուսումնական ձեռնարկ Գ.Հ.Կիրակոսյան - Եր.: ՀԱԱՅ, 2015 -
120 էջ:**

Աշխատության մեջ առաջադրված բազմազան ու բազմաբնույթ վարժությունները կօգնեն գործնական պարապմունքները նպատակին ու արդյունավետ դարձնելուն, նյութի առավել խորը յուրացմանը:

Առաջին պլանի վրա են անթերի խոսք կառուցելու, բառապաշարը հարստացնելու, պատկերավոր լեզվամտածողություն զարգացնելու, մտքերը ճիշտ ու գեղեցիկ արտահայտելու հարցերը:

Վարժությունները կազմված են նպատակադրումին համապատասխան մակարդակով և գիտական բարեխղճությամբ:

ՀՏԴ 811.19(07)
ՊՍՏ 81.2 հ ց7

ISBN 978-993-54795-4

© Գ.Հ.Կիրակոսյան, 2015

© Հայաստանի ազգային ազրարային համալսարան, 2015

«Չայոց լեզու» առարկայի դասավանդումը պետք է հետապնդի հետևյալ խնդիրների լուծումը

- ✓ արդյունավետ բանավոր հաղորդակցում.
- ✓ արդյունավետ գրավոր խոսքի զարգացում.
- ✓ ճկուն լեզվամտածողության զարգացում.
- ✓ լեզվական միջոցների, կառույցների, լեզվական օրինաչափությունների և կանոնների գիտակցում.
- ✓ անսխալ ու վարժ գրելու կարողության ու հմտության ձևավորում.
- ✓ բառապաշարի հարստացում.
- ✓ ժամանակակից գրական հայերենով ինքնուրույն խոսք կառուցելու, իր խոսքը վերահսկելու, մտքերը բանավոր ու գրավոր ձևակերպելու կարողությունների մշակում.
- ✓ լեզվաքերականական գիտելիքները խոսքի կառուցման ընթացքում կիրառելու հմտության ձևավորում.
- ✓ բնագրի վրա կատարվող գործնական աշխատանքների միջոցով գրվածքի լեզվաոճական առանձնահատկությունները բացահայտելու կարողության ձևավորում.
- ✓ տարբեր բնույթի (գեղարվեստական՝ չափածո և արձակ, հրապարակախոսական, գիտահանրամատչելի և այլն) բնագրերի լեզվաոճական վերլուծության միջոցով լեզվական ճաշակի և խոսքի մշակույթի զարգացում.
- ✓ խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման կանոնների իմացություն:

«Չայոց լեզու » առարկան ուսումնասիրելուց հետո սովորողը պետք է կարողանա

- ✓ տիրապետել գրական լեզվի նորմերին.
- ✓ խոսքը օգտագործել տարբեր նպատակների համար (տեղեկացնել, շնորհավորել, զվարճացնել, համոզել, մխիթարել, արդարանալ).
- ✓ ընտրել հաղորդակցման իրավիճակին համապատասխան լեզվաոճական միջոցներ.
- ✓ խոսքը կառուցել լեզվական և բարեկիրթ հաղորդակցման կանոններին համապատասխան.
- ✓ ճիշտ ընտրություն կատարել հոմանիշների և հականիշների շարքում՝ հաշվի առնելով դրանց իմաստային, ոճական և արտահայտչական նրբերանգները՝ դրանք տեղին օգտագործելու նպատակով.
- ✓ տիրապետել խոսքի պատկերավորման և արտահայտչականության միջոցներին.

✓ գործածել բառերն իրենց ուղիղ և փոխաբերական իմաստներով.

✓ խոսել արտահայտիչ՝ պահպանելով խոսքի առանձնահատկությունները՝ ապրումի նրբերանգները, տոնը, տեմպը, շեշտերը, առանձնացվող բառերը, հանգը, ռիթմը և այլն.

✓ արտահայտել և հիմնավորել իր կարծիքը՝ ապացուցելով առաջ քաշած թեզերը.

✓ գրել տարբեր բնույթի գործնական գրություններ.

✓ ինքնուրույնաբար ուղղել խոսքային թերությունները, մտքի տրամաբանական խախտումները.

✓ ազատորեն օգտվել տարբեր տեսակի բառարաններից՝ բառապաշարը հարստացնելու, բառագործածությունը կատարելագործելու և խոսքը ոճավորելու համար.

✓ տարբերակել խոսակցական ու գրական բառապաշարը, ճանաչել հնաբանությունները, նորաբանությունները, բարբառային և ժարգոնային բառերը, օտարաբանություններն ու փոխառությունները.

✓ բնութագրել և դասակարգել ձայնավոր և բաղաձայն հնչյուններն ըստ տարբերակիչ հատկանիշների.

✓ բացատրել ցանկացած հնչյունափոխություն.

✓ բացատրել բառերի իմաստափոխությունը.

✓ բացատրել ածանց, արմատ, վերջավորություն հասկացությունները.

✓ գտնել բարդությունները, ներկայացնել ըստ տեսակների.

✓ տեղին կիրառել դարձվածքներն ու դրանց հոմանշային տարբերակները.

✓ տեքստում առանձնացնել բոլոր խոսքի մասերը, բացատրել դրանց քերականական առանձնահատկությունները, նշել քերականական կարգերը.

✓ տարբերակել գոյականի հոլովումը, դերանվանական հոլովումը, բայի խոնարհումն ու եղանակաժամանակային պարզ, բաղադրյալ և երկրորդական ձևերը, չթեքվող խոսքի մասերն ու դրանց առանձնահատկությունները.

✓ կատարել նախադասության ձևաբանական վերլուծություն.

✓ որոշել բարդ նախադասության տեսակը, բաղադրիչների հարաբերությունը.

✓ տալ պարզ և բարդ նախադասության գծապատկերը.

✓ կատարել նախադասության շարահյուսական վերլուծություն.

✓ կատարել բարդ նախադասության պարզեցում և դերբայական դարձվածով պարզ նախադասության բարդեցում.

✓ կատարել ուրիշի ուղղակի խոսքի փոխակերպում,

✓ ճիշտ կետադրել:

Վարժություններ ուղղագրությունից

Վարժություն 1 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում օ:

- 1 ա) աման-ր, մեղմ-ր-ր, բար-րություն, առ-րեական
բ) ամեն-րյա, բաց-թյա, բն-րրան, Աման-ր
գ) գիշեր-թիկ, երկար-րյա, մեղմ-րեն, թիկն-թոց
դ) հանր-գուտ, տրտմ-րոր, ոսկեզ-ծ, տափ-դակ

- 2 ա) բար-րություն, թիկն-թոց, ոսկեզ-ծ, ան-րսալի
բ) հանր-գուտ, ան-րակ, հնգ-րյակ, հանապագ-րդ
գ) մեղմ-րոր, գիշերուզ-ր, ականջ-դ, ան-րեն
դ) տափ-դակ, չար-րակ, հ-գուտ, ող-րկ

- 3 ա) ան-գուտ, դեղնագ-ծ, շուրջ-րյա, նրբ-րեն
բ) փորձան-թ, ան-րեն, թիկն-թոց, մեղմ-ր-ր
գ) օր-ր-ց, բն-րրան, միջ-րեն, ապ-րինի
դ) օրըստ-րե, տն-րեն, քնքշ-րոր, հ-դս ցնդել

- 4 ա) անդ-րր, սառն-րակ, կիրակն-րյա, սալոր-դի
բ) օր-ր-ց, վաղ-ր-ք, միջ-րեն, դ-դ
գ) հանապագ-րդ, ապ-րինի, հանապագ-րյա, տ-թ
դ) նոր-րյա, քնքշ-րոր, հանր-գուտ, նախ-րե

- 5 ա) ան-թի, ան-թ, ան-թևան, եղբ-ր-րդի
բ) ան-դ-ք, ան-րակ, երկվ-րյակ, արծաթագ-ծ
գ) թռչն-րս, ընդ-րինակել, ապ-րինի, արփիագ-ծ
դ) եռ-րյա, հն-րյա, հ-գուտ, տն-րեն

- 6 ա) մեղմ-րոր, մեղմ-րեն, տն-րեն, հ-դս ցնդել
բ) հանր-գուտ, նախ-րե, թիկն-թեց, գ-րուգիշեր
գ) բն-րրան, բարձր-րակ, շաբաթ-րյակ, հ-տնկայս
դ) ան-դոք, օրըստ-րե, վաղ-րոյան, վաղ-րոք

Վարժություն 2 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում ո:

- 1 ա) չար-րակ, բ-լ-ր, հատ-րյակ, հանապագ-րդ
բ) աման-րյա, անդ-րրություն, մեղմ-րեն, ամեն.րյա
գ) պարզ-ր-շ, տար-ր-շել, բար-րություն, փ-րձան-թ
դ) վատ-րակ, երկվ-րյակ, նրբ-րեն, արփիագ-ծ

- 2
- ա) բար-րակ, ան-թի, ան-դ-ք, առ-րյա
 - բ) ան-րսալի, հ-տնկայս, վաղ-ր-ք, փ-րձան-թ
 - գ) ան-րակ, մեղմ-րեն, հն-րյա, շ-ր-րալ
 - դ) քնքշ-րեն, հրան-թ, տ-թ, սև-րակ

Վարժություն 3 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում է:

- 1
- ա) միջօր-, որև-, մանր-, ելև-ջ
 - բ) ինչև-, դող-րոցք, ան-, առ-ջ
 - գ) հր-շ, լայն-կրան, երբև-, Սևանհ-կ
 - դ) ամենա-ական, այժմ-ական, ան-րկբա, երբև-
- 2
- ա) լայն-գր, ինչևից-, նրբ-րշիկ, երբև-
 - բ) որև-, չ-ինք, ջ-կ, ելև-ջ
 - գ) նոր-կ, գետ-զր, բազկ-րակ, մանր-
 - դ) գրեթ-, եղ-րերգ, նրբ-րշիկ, ան-րկյուղ
- 3
- ա) առօր-ական, ան-ական, ելև-ջ, վայր-ջք
 - բ) որևից-, Սևանհ-կ, հրշ-ջ, ան-ղծ
 - գ) մանր-, հյուլ-, միջօր-, օրըստօր-
 - դ) այգե-տ, դող-րոցք, ջր-ջք, երբև-

Վարժություն 4 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում ր:

- 1
- ա) ակ-նբախ, դր-մբոց, խոչ-նդոտ, մթ-նկա
 - բ) ակ-նթարթ, հետ-զհետե, գ-մռսել, դաս-նթաց
 - գ) չ-նկնել, օր-ստօրե, երկ-նտրանք, գահ-նկեց
 - դ) առ-նչվել, լուս-նկա, առ-նթեր, ան-նդմեջ
- 2
- ա) մեջ-նդմեջ, չ-նդունել, չ-նկճվել, օր-նդմեջ
 - բ) կոր-նթարդ, երկ-նչել, ան-նդհատ, մերթ-նդմերթ
 - գ) ակ-նթարթ, անակ-նկալ, գույն-գզույն, խոյ-նթաց
 - դ) վեր-նծյուղվել, չ-նդունել, չ-նդդիմանալ, առ-նչվել
- 3
- ա) ակ-նդետ, մթ-նկա, հատ-նտիր, վեր-նթաց
 - բ) համ-նկնել, ան-նտել, գործ-նկեր, առ-նչվել
 - գ) առ-նթեր, հյուր-նկալ, ճեպ-նթաց, նոր-նծա
 - դ) գիրկ-նդխառն, մակ-նթացություն, անակ-նկալ, խոչ-նդոտ
- 4
- ա) գործ-նկեր, ակ-նկալ, փոխ-մբռնում, սր-նթաց, ակ-նդետ
 - բ) ան-նչացք, հոտ-նկայս, ակ-նհայտ, ճեպ-նթաց, մթ-նկա

- գ) նոր-նտիր, երկ-նտրանք, լուս-նկա, վեր-նձյուղվել, ձեռ-նտու
- դ) ան-նդհատ, ամ-նթեր, հյուր-նկալ, խոչ-նդոտ

Վարժություն 5 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում չի գրվում ր:

- ա) խոչ-նդոտ, ակ-նթարթ, ձեռ-նտու, դր-մբոց
- բ) ակ-նբախ, կոր-նթարդ, հետ-զիետե, ան-նդմեջ
- գ) լուս-նկա, գույն-զգույն, որոտ-նդոստ, հոտ-նկայա
- դ) ամ-նչվել, ակ-նդետ, մթ-նկա, երկ-նչել

Վարժություն 6 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում յա:

- ա) աղավն-կ, Արաքս- , Էմիլ- , կր-
- բ) Լիլ- , Լյուս- , ոսպն-կ, որդ-կ
- գ) մատ-ն, Ման- , լուսն-կ, հեք-թ,
- դ) Անալ- , այծ-ն, Եղ-ն, էքսկուրս-

Վարժություն 7 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում իա:

- ա) Ազար- , ակադեմ- , բար-ցակամ, դ-կ
- բ) Անգլ- , Արփ-ր, Եղ- , կր-
- գ) օվկ-նոս, մում- , միլ-րոդ, Իլ- ,
- դ) Ջաքար- , Եղ-զար, Բյուզանդ- , կղզ-կ

Վարժություն 8 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում յ:

- 1
 - ա) վերարկու-ի, միջօրե-ի, վա-րկյան, թե-ի
 - բ) Կարո-ի, Մարո-ի, Երեխա-ի, խաղա-ի
 - գ) տու-ժ, հեռակա-ել, Միքա-ել, վաշխառու-ի
 - դ) երկրպագու-ի, հա-ելազարդ, ատամնաբու-ժ, մրջ.ուն
- 2
 - ա) շրջագա-ել, Անդրե-ի, մի-այնակ, խնա-ել
 - բ) հա-ելի, լեզ-ոն, Նա-իրի, հմա-ել
 - գ) հա-ելազարդ, վա-ելուչ, զգու-շ, Սոնա-ի
 - դ) բու-ի, թոպե-ական, տի-եզերք, վա-ելչագրություն

Վարժություն 9 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում բ:

- 1 ա) աղ -ակույտ, աղ-յուր, նուր-, գամ-ռ
բ) եր-նագույն, երեսար-իջ, դրմ-ոց, դա-նի
գ) եր-եմն, լիր-, խա-ել, ջրար-ի
դ) եր-ներանգ, քարակո-, սր-ավայր, տրո-յուն

- 2 ա) նր-ակազմ, շամ-ուտ, վիրա-, շեղ-,
բ) անխա-, Գա-րիել, գրա-ար, ջրար-ի
գ) անխա-ան, ող-ածայն, հուսախա-, բոր-
դ) հար-ել, դա-նեպսակ, ող-երգակ, Յամ-արծուն

- 3 ա) ուր-աթ, սր-ագրել, Սերո-, դար-նոց
բ) հրա-ուխ, համ-ույր, Յակո-, հղ-անալ
գ) ող-երգություն, Քերո-յան, տար-ողել, ջրար-ի
դ) հա-շտակել, կառա-նարան, նր-երշիկ, ող-անվագ

- 4 ա) թա-ք, եր-կիցե, դա-նի, գոմաղ-,
բ) բամ-, ար-շիռ, խա-կանք, ներ-ողել
գ) Ար-իար, հա-շտակել, տար-ողել, ճող-յուն
դ) ճամ-որդ, նր-ին, հար-եցող, Քերո-

Վարժություն 10 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում փ:

- 1 ա) քարակո-, տար-ողել, նր-անկատ, ս-րթնել
բ) ոսկեծու-, ճող-յուն, ճամ-որդ, դար-նոց
գ) անխա-ան, բամ-ել, գռ-ել, եր-ներանգ
դ) սթա-վել, շերե-ուկ, շամ-ուր, ջրար-ի

- 2 ա) ս-ռվել, Յռի-սիմե, հղ-անալ, Ա-խագիա
բ) խա-ել, կո-վել, կա-կա-ել, կառա-նարան
գ) Ծո-ք, լիր-, ա-սե, եր-ներանգ
դ) Ար-իար, գամ-ռ, թար-, հա-շտակել

Վարժություն 11. Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում գ:

- 1 ա) անկար-, անհո-ի, անօ-ուտ, հրմշտու-
բ) բազմահո-, բարեկար-, եր-ել, դիցու-
գ) ավա-անի, արտասու-, Բա-րատ, ա-ցան
դ) անօ-, բարեհո-ի, աներծա-, ճ-նավեր

- 2 ա) գո-ավոր, եղերեր-, երաշխի-, եր-ահան

բ) երկարածի-, երկրպա-ել, զի-զա-, սյու-
զ) ս-ավոր, մի-ապատ, մո-ական, քսու-
դ) հո-ոց, հրծի-, մո-ական, ավա-անի

3 ա) օրհներ-, պատրույ-, սու-, վարա-ույր
բ) Միսա-, մտահո-, մու-, շա-անակ
գ) նետածի-, ո-ելից, կարա-, ժանի-
դ) ուրա-, նորո-ել, Վարդ-ես, Օ-սեն

4 ա) ձ-տուն, ձա-ուկ, ձա-ար, զոր-,
բ) մար-արիտ, մար-արեություն, ճրա-ու, ճի-ուջանք
գ) հրծի-, հո-ոց, հո-նակի, մանրու-
դ) թա-ուհի, զու-արան, գո-ավոր, հերյուրան-

5 ա) ամո-իչ, անդրավարտի-, բեր-, զուգեր-
բ) զու-ս, իգական, ծե-, հա-նել
գ) հա-ուկապ, համակար-, հո-եքան, քսու-
դ) հա-ուստ, ի-ամուլ, հո-եվարք, ճա-ել

6 ա) չօ-նել, ճ-նաժամ, կար-ադրել, շոգեկառք, զու-ել, է-ուց
բ) հո-նակի, սևա-նած, միր-, մար-արե, ձա-, ծիր-, տե-ր
գ) հավա-ել, թան-արան, թան-ագին, հետած-ել, օ-ուտ
դ) ավա-ություն, բարեկար-ել, սար-ավորուն, նորո-ել, մարա-

Վարժություն 12 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում դ.:

1 ա) բեր-, բնոր-, բուր-, անու-
բ) գեղար-, գունազար-, դիմահար-ար, զար-ոնք
գ) ակնթար-, դր-ապատճառ, դրվագազար-, եր-իկ
դ) ադամոր-ի, աճուր-, անդա-ար, ան-ամ

2 ա) երիզոր-, զար-, զինադա-ար, զվար-
բ) ժողովուր-, լուր-, լաջվար-, լյար-
գ) ան-ամագրվել, անձրևոր-, ար-արացի, ար-ուզար-
դ) խեղան-ամ, խեղ-ուկ, խլուր-, եր-ևեկել

3 ա) զար-ասենյակ, ըն-ամենը, Ջվար-նոց, խր-իմ
բ) ան-ամալույծ, անջր-ի, ար-արև, ար-ուկ
գ) խորանար-, խոր-ենի, խոր-ուբոր-, խոր-
դ) խորհուր-, ծաղկազար-, կար-ալ, հար-ավայր

- 4 ա) անհաղորդ-, առաջնորդ-, ար-են, բար-ություն
բ) զար-ասեղան, ըն-հանուր, թակար-, հեր-
գ) խոր-ուբոր-, կեն-անի, կորնթար-, շողոքոր-
դ) հաղորդ-ում, հաշման-ամ, հաջորդ-ել, հար-ություն
- 5 ա) հոր-ահոս, հոր-ուկ, ճամփոր-, հեր-ական
բ) մար-, միջնոր-, նյար-, ճմռ-ել
գ)մեր-ընդմեր-, որ-ան կարմիր, որսոր-, մոր-ի
դ) հաջորդ-ել, Յար-ագողի ճանապարհ, հար-արել, հեծանվոր-
- 6 ա) պարապուր-, ջար-ուխուր-, Սե-րակ, վար-
բ) վար-ապետ, վարսահար-ար, վր-ովել, սփր-նել
գ) վար-ավառ, Վար-ևան, վարոր-, պար-և
դ) օ-ապարիկ, օրիոր-, քաջոր-ի, սաղար-
- 7 ա) Նվար-, հագուր-, դա-արել, կորնթար-, գմբեթար-, եր-ում
բ) որ-ատունկ, ստահո-, բացօթյա, խն-իր, լյար-, խոր-ուբոր-
գ) ան-ամ, կեն-անի, բր-ուճ, սաղար-, նյար-, հար-ակ
դ) սաղավար-, կար-ալ, հաղորդ-ել, ակնթար-, կոկոր-

Վարժություն 13 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում թ:

- 1 ա) հոր-, զվար., բր-ել(հրել), անդա-ար
բ) ակն-ար-, անո-, ար-ուն, զար-ոնք
գ) ար-նամիտ, անօ-, հար-ուկ, հար-(դարման)
դ) մոր-ել, գիր., զար-, լուր-
- 2 ա) մոր-ի, գ-ալ(խղճալ), Դավի-, գեղար-
բ) կորն-ար-, ակն-ար-, անգայ-, զվար-
գ) այգեկու-, անո-ի, լուր-, խոր-
դ) հոր-ուկ, հար-ավայր, մեր-ընդմեր-, միլիար-

Վարժություն 14 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում ց:

- 1 ա) ալր-ենի, ակնակապի-, աղ-ատվել, դա-ել
բ) ամբող-, անմի-ապես, ան-րոյի, ա-պարար
գ) ա-ափնյակ, առա-արկ, առա-, բա-կոն
դ) աղ-ամուղ-, անգի-ում, առա-մորդ, գաղ-
- 2 ա) այծեղ-յուր, անգի-ում, ա-լիկ, գո-ի
բ) աղ-իկ, անմի-ապես, ար-ուկ, գեղ-ուկ
գ) առա-նային, առող-, գա-ա-, վեր-
դ) թր-ոց, ի-նել, լա-վարդ, խո-կոր

- 3
- ա) անր-ել, առա-արկություն, առող-, թր-ել
 - բ) առա-նորդարան, ի-վածք, մե-ք, փախ-ել
 - գ) ամբող-, բաղար-, եղ-երու, զի-ել
 - դ) խառնի-աղան-, մի-ակ, մի-ոց, ուռ-անալ

- 4
- ա) ար-, փար-, չար-ի, մր-յուն, անուր-
 - բ) աղ-իկ, չղ-իկ, առող-, առա-, վայրէ-ք, վեր-ույթ
 - գ) թր-ել, կոր-ել, ստեր-, քա-ք, մի-ոց, ող-ույն
 - դ) առէ-ք, կանուր-, խուր-ին, դար-ին, մե-ք, ա-լիկ

Վարժություն 15 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում չ:

- ա) պ-րանք, ճռն-յուն, հա-ել, կնո-
- բ) մռն-յուն, հռ-ակավոր, կոր-ել, մր-յուն
- գ) թռ-ել, զեղ-ել, փար-, Սո-ի
- դ) միմ-և, դար-ին, ա-ք, զի-ել

Վարժություն 16 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում ծ:

- ա) ճղ-իմ, մխր-վել, պ-նանք, Սո-ի
- բ) ալո-ենի, ի հե-ուկս, ո-իլ, պարկու-
- գ) ակնակապի-, գա-ա-, գո-ի, ճան-
- դ) ալո., ճահի-, ալո-ենի, պ-նվել

Վարժություն 17 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում ծ:

- 1
- ա) ակաղ-ուն, ամբար-իչ, առա-գական, ատաղ-ագործ
 - բ) բար-րահասակ, բացար-ակ, բռուն-ք, գան-արան
 - գ) դար-վածք, դողերո-ք, երկնաբեր-, ընդար-ակ
 - դ) դեղ-ան, դեր-ակ, դրմբո-, խոտհուն-
- 2
- ա) խուր-, հանդեր-անք, հար-ակուն, լվա-ք
 - բ) ան-կալի, ար-ազանք, ար-ակագիր, փոր-
 - գ) բար-րամիստ, գեղ-, գլուխկոն-ի, դար-յալ
 - դ) դեղ-անիկ, լուսար-ակ, հեղ-ուցիչ, բռուն-ք
- 3
- ա) հանդեր-ապահ, հերար-ակ, հինավուր-, հն-ել
 - բ) հոր-անուտ, հուն-ել, մազապուր-, մանկաբար-
 - գ) ար-ակ, բազմափոր-, բար-ել, բար-իթողի
 - դ) բար-րուղեչ, դար-նել, դեղ-ենի, մածու-իկ

- 4 ա) հանդեր-արան, շողար-ակ, մեր-վոլգյան, կուր-ք
 բ) մղ-ավանջ, մոլու-ք, որ-աքար, պախուր-
 գ) մր-ակից, ջրահեղ-, վար-ակ, վար-ավճար
 դ) ար-ակուրդ, անփոր-, վերամբար-, բար-րադիր
- 5 ա) բար-ունք, հանդեր-յալ, մր-անակ, փղ-կալ
 բ) որ-կալ, որ-, հեղ-ուցիչ, վար-ու
 գ) վար-ել, տողադար-, տր-ակ, փղ-ուկ
 դ) արվար-ան, հարցուփոր-, ամբար-իչ, բար-րախոս
- 6 ա) խուր-, փոր-անոթ, որ-աքար, պախուր-, մր-ել, ընթեր-ել
 բ) դաղ-, դեղ., վեր-նել, դեր-ակ, ար-ունք, վր-ին
 գ) ար-ան, ար-ունք, ար-ակուրդ, տողադար-,տր-ակ
 դ) բացար-ակ, օ-ածուկ, վար-ակ, Համբար-ուն, հանդեր-անք

Վարժություն 18 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում ց:

- 1 ա) մր-ուն, քաղ-կեղ, ուր-, պախուր-
 բ)շորա-ու, մր-ավար, մտա-ածին, տողադար-
 գ) մոլու-ք, վեր-նել, բար-ունք, ասա-վածք
 դ) բռուն-ք, դար-յալ, լու-կի, կե-վածք
- 2 ա) տր-ակ, ցն-ել, վեր-նել, սերու-ք
 բ) կառու-ել, կեր-նել, կոր-նել, հանդեր-անք
 գ) կ-մցել, լռակյա-, խ-կել, դար-յալ
 դ)_հուն-ել, հար-նել, քաղ-ր, դեղ-ենի

Վարժություն 19 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում ծ:

- 1 ա) մա-ուցիկ, մտա-ածին, հալո-ք, դարձվա-ք
 բ) որ-կալ, մեղվաբույ-, հանկար-, նայվա-ք
 գ) կառամատույ-, գնա-ք, հանդիպակա-, փղ-կալ
 դ) կ-կվել, խ-կվել, ցն-ալ, ցն-ել

Վարժություն 20 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում խ:

- 1 ա) ակնբա-, աղե-արշ, բաբա-յուն, ա-ճատել
 բ) ա-տոտ, գ-տոր, դշ-ոյական, զմրու-տ
 գ) ա-քատ, թա-ծաղեն, թ-կենի, խա-տել
 դ) ա-տազերծել, Ա-թամար կղզի, աշ-ետ, ապերա-տ

- 2) ա) ատա-ծ, գրատա-տակ, դշ-ուհի, զմրու-տյա
բ) ըմբոշ-նել, արտագա-թ, թա-ծաժպիտ, թ-վածք
գ) ա-տահանել, ապաքա-տ, ապու-տ, բա-տակից
դ) ժանտա-տ, խա-տել, սանդու-ք, խրա-ճանք
- 3) ա) բա-կացուցիչ, դրա-տային, թա-անծել, թու-ս
բ) ա-տածին, բա-տավոր, արնաշաղա-, դժբա-տ
գ) թա-ծամրմունջ, բե-, ժ-որ, լա-տ
դ) խա-տված, խարիս-, Բարսե-, խոզապու-տ
- 4) ա) ա-տահարվել, բա-տ, բա-տակ, դժ-եմ
բ) դժո-ք, բոցամու-, երկնամու-, թա-իծ
գ) գե-ություն, թա-տ, բքա-ե-դ, թու-ս
դ) թ-ահեր, ժ-տել, խա-ուտ, գա-թական
- 5) ա) կմա-ք, կո-պեք, կո-կռտել, հա-ճապակի
բ) խրո-տ, նա-շ, կա-կանձ, կարմրա-տ
գ) կե-տ, կթ-ա, Հայկանդու-տ, տառե-
դ) նա-կին, ջա-ջա-ել, Ջավա-ք, ու-տադրուժ
- 6) ա) դժբա-տ, հա-ճապակի, ապու-տ, ջա-ջա-ել
բ) մ-կտալ, ա-բյուր, կ-տար, կմա-ք
գ) վ-տալ, ճե-ք, խա-տել, թ-պամած
դ) թ-սկան, բա-տակ, պանդ-տել, խե-դուկ
- 7) ա) դրա-տ, անե-ծ, դժո-ք, գ-տոր
բ) ու-տագնացություն, բո-կ, ճո-փյուն, կո-ք
գ) թու-ս, դժ-եմ, ընձու-տ, ե-կելի
դ) ա-տորոշել, երկնամու-, տա-տակամած, թա-տ
- 8) ա) ա-քատ, ա-տահանել, ս-տոր, զմրու-տ, կմա-ք, ու-տածագ
բ) ա-բյուր, խա-տել, սանդու-ք, թու-ս, հ-փանալ, ս-տոր
գ) ու-տադրուժ, կախա-ան, ա-ալ, վ-տալ, ծա-սել, թխկի
դ) դժո-ք, դրա-տ, ապու-տ, կմա.ք, ս-տոր, երա-տիք

Վարժություն 21. Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում դ:

- 1) ա) բա-ձալի, խե-դել, բո-կ, տա-տակ
բ) դժո-ք, հ-կել, սե-մել, հա-թել
գ) ա-քատ, փե-կ, մա-թել, սանդու-ք
դ) ո-կույզ, գա-ջ, գա-թոջա-, հա-ճապակի

- 2 ա) գա-թօջախ, սանդուղ-ք, կո-պեք, տա-տուկ
բ) տա-տակամած, ա-ճատել, ա-տոտված, կ-տար
գ) ու-տապան, ա-տորոշում, բո-կ, փայծա-
դ) հա-ճապակի, գա-տնի, ու-տադրուժ, պ-տոր

- ա) փ-ձուկ, քա-ցկե-, տու-տ, տա-տակամած
բ) քա-ցր, փո-ք, փո-կապ, փե-կ
գ) տա-տուկ, վա-ճան, Վա-թանգ, սանդուղ-ք
դ) սրա-ողխո-, սպանա-, սե-մել, ջրա-ե-դ

- ա) քո-տիկ, քա-հան, փայծա-, ու-տափուշ
բ) փտա-տ, փարսա-, փ-ձկալ, վ-տալ
գ) ջա-ջա-ել, պո-պատ, պ-տոր, ո-կույզ
դ) շ-թա, մ-կտալ, ներգա-թ, կմա-ք

Վարժություն 22 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում n:

- 1 ա) ոսկո-, պատ-վակ, ճա-պ, հ-ճվանք
բ) մ-մ-ալ(վերք), մ-սել, պո-թկալ, սահմ-կել
գ) մա-ախուղ, մատ-վակ, մո-թել, մ-մ-ալ(ծայն)
դ) ազ-ավ, ամպագո-գո-, բարբա-, զմ-սել

- 2 ա) զզվ-տոց, խա-նուրդ, խ-չակ, կ-թնել
բ) կ-ապաշտ, հ-չակել, հու-թի, ճա-պ
գ) կա-կա-ուն, հ-թի-, ճանկ-ել, մե-ժել
դ) ճմ-թել, ճ-ճ-ալ, ճ-վողյուն, մա-մա-

- 3 ա) եղե-ն, եղե-ական, ընթե-նելի, դա-նալ, բա-նալ, ու-կան
բ) հու-թի, ընթե-ցել, սպա-նալ, ա-նել, բա-ձել, ա-վույտ
գ) գա-նուկ, գո-գո-ալ, համա-դրեն, վա-վ-ուն, փ-փ-ալ (ծածան-վել)
դ) բարբա-, գ-գի-, թ-թու-, թ-թի-, մա-մ-ել, քա-որդ

Վարժություն 23 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում n:

- 1 ա) ա-համա-հել, թ-թու-, փ-փու-, մա-մա-
բ) թ-թի-, գ-գի-, մ-մու-, բա-բա-այից
գ) ճմ-թել, վե-ադա-ձ, ե-բեք, վե-ջույթ
դ) մ-թմ-թալ, կե-կե-ուն, դա-ձյալ, վա-ձ

- 2 ա) մ-սեւ, կ-թնել, կ-ճատել, հ-չակել
 բ) խա-ույկ, կա-թածող, զմ-սել, ազ-ավ
 գ) ք-տնաջան, մատ-վակ, որմնախո-շ, մա-ախուղ
 դ) հ-ճվանք, մո-թապաշտ, ա-համա-հել, ճա-պ
- 3 ա) ախո-ապետ, ապա-աժ, անա-ժան, կի-թ
 բ) ախո-ժակ, ականջալու-, անկի-թ, ա-ագիլ
 գ) ս-տատրոփ, ս-ս-թալ, սահմ-կել, պա-կ
 դ) ամպագո-գո-, շատ-վան, շա-ժում, ա-ժեք
- 4 ա) ա-ծիվ, քու-ջ, ք-տնաջան, փ-թկացնել
 բ) փ-փու-, փա-թամ, վագ-, ու-կան
 գ) լ-տես, կ-ճտացնել, մ-սել, սփ-թնել
 դ) տա-եխ, տապա-, սևե-ուն, փնտ-ել
- 5 ա) Բո-ժոմ, աղեխա-շ, անա-ժան, ճմ-թել
 բ) ե-եսուն, գ-ոշ, գո-տ, թ-ջել
 գ) ա-ծիվ, ա-ագիլ, կի-ճ, պա-կել
 դ) կ-ճատել, մո-թել, սա-սուռ, կա-ճել
- 6 ա) սփ-թնել, գոլո-շի, դ-ժել, գանգու-
 բ) զա-նվել, զա-թնել, ե-եսուն, կա-ք
 գ) կա-գ, գ-տնակ, ապա-ոշ, ապա-աժ
 դ) կա-կառել, փա-թամ, անա-ժան, մա-ախուղ
- 7 ա) մկ-ատ, մե-ժել, մա-մա-, ազ-ավ
 բ) թ-թու-, թ-ջել, խելագա-, կա-չել
 գ) ճո-տ, ճա-պ, դ-ժել, ե-եսուն
 դ) կ-ճտացնել, ճա-ճատյուն, կի-ճ, մա-ախուղ

Վարժություն 24 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում հ:

- 1 ա) նշխար-, աշխար-ահռչակ, ապաշնոր-, խոր-րդակցել
 բ) խոր-իմ, ընդ-ատել, ժպիր-, օր-մերգ
 գ) հայ-ոյել, հեղ-եղուկ, նիր-ել, խոնար-վել
 դ) ապաշխար-ել, պատե-ապաշտ, հով-անոց, խոտ-արք
- 2 ա) անշնոր-ք, անպատե-, աշխար-ագոր, ապաշխար-ել
 բ) ապաշնոր-, արհամար-ել, Բեթ-ովեն, ընդ-ուպ
 գ) ընդ-արվել, թո-ուբո-, խոր-իմ, խոտ-արք
 դ) խոնար-վել, խոր-ուրդ, հեղ-եղատ, թիկնապա-

- 3 ա) շնոր-ալի, ողջախո-, չնաշխար-իկ, նշխար-
բ) օր-ներգ, քաղ-ան, Յով-աննես, ընթ-անալ
գ) օր-նանք, մենաշնոր-, ընդ-ուպ, խոր-ուրդ
դ) ընդ-ունակ, ընդ-արծակ, ընդ-առաջ, ընդ-ամենը

Վարժություն 25 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում չի գրվում հ:

- ա) հայթ-այթել, անհեթ-եթ, անշնոր-ք, խոր-ուրդ
բ) ապաշխար-ել, նշխար-, հեղ-եղատ, հոպ-ոպ
գ) ընդ-ամենը, արհավիր-ք, ընդ-անուր, ճանապար-որդ
դ) ընդ-արծակ, հեղ-եղուկ, արհամար-անք, խոր-ին

Վարժություն 26 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում ել:

- 1 ա) գին-աճառ, հոգ-վիճակ, ագ-ագ, ուղ-որ
բ) ալ-որ, ալ-արս, ոսկ-ագ, հ-ասպառ
գ) կար-եր, ուղ-ճար, համա-րոպական, դափն-արդ
դ) վագ-ագ, գեր-արել, հոգ-որդի, տար-երջ
- 2 ա) այգ-ետ, ալ-որ, բ-եռ, տար-երջ
բ) վագ-ագ, ուղ-ճար, ոսկ-ագ, կար-եր
գ) հոգ-որ, հ-ասպառ, ոգ-որություն, ոսկ-արս
դ) ար-մտա-րոպական, գեր-արել, եր-ույթ, թեթ-
- 3 ա) հետ-ակ, եր-ույթ, -գինե, օթ-ան
բ) ուղ-որվել, ոգ-որություն, երթ-ելել, գին-ետ
գ) դափն-արդ, ոսկ-աճառ, ագ-ագ, հոգ-արք
դ) Ս-ան, -րոպացի, ալ-ետ, կար-որ

Վարժություն 27 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում և:

- ա) բար-ել, հոգ-որ, ս-եռել, պարգ-ել, այգ-ետ, հ-ք, իջ-ան
բ) եր-ույթ, օթ-ան, հար-ան, կար-եր, հետ-որդ, այլ-ս, ս-անալ
գ) հետ-ակ, սերկ-իլ, ոսկ-որել, ուղ-որ, ար-մուտք, ագ-որ
դ) գատ-որել, ոսկ-առ, իսկույն-եթ, թ-ավոր, ս-անալ

Վարժություն 28 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում մ:

- 1 ա) ճա-բար, շա-փուր, սի-ֆոնիա, ա-բիծ
բ) ա-բարտավան, ա-բավ, շա-բուտ, ա-բաստանել
գ) ա-բասիր, Դուշա-բե, բ-բուլ, ա-բար
դ) ա-բարիշտ, ա-փոփել, ա-ֆիթատրոն, թր-փալ

- 2
- ա) ա-փոփել, ա-բասիր, ա-բարիչտ, հա-բերել, Սա-վել
 - բ) սուսա-բար, տրա-վայ, ա-բիոն, ա-բարտավան, ա-պրոպ
 - գ) ը-պել, ա-պետք, հա-բույր, զա-բյուղ, դա-բարան, գ-բեթ
 - դ) խ-բվել, հա-պատրաստից, ա-պայման, ա-պատճառ, ա-պա-ճույճ

Վարժություն 29 . Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում \$:

- ա) աս-ալտ, ա-դան, պրո-եսոր, նա-թ, տոր-բ
- բ) Ա-րիկա, ֆոս-որ, հարա-, քու-թա
- գ) քե-, ա-տոմեքենա, պատե-ոն, սակա-դ
- դ) կարտո-իլ, ս-ինքս, վոլ-րամ, տու-ակերտ

Վարժություն 30 . Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում կրկնակ բաղաձայն:

- 1
- ա) հո-երգություն, ու-աթիռ, խորագ-ին, տա-որոշել
 - բ) հե-են, կե-ե, բե-ի, այ-ենարան
 - գ) ու-ամիտ, ըն—իմադիր, երե--րբիչ, հո-ասուն
 - դ) ի-երորդ, մ-կածուփ, տա-երային, ու-եզիր
- 2
- ա) տո-ա, Մե-ա, չո-որդ, տա-որոշել
 - բ) մո-եռանդ, մո-ա, գ-ել, ե-որդ
 - գ) ֆի-ական, տա-ալուծել, մո-ի, միատա-,
 - դ) բնօ-ան, մ-կածեծ, տա-ական, ու-ակի:

Կետադրություն

Նախադասության բազմակի անդամների կետադրությունը

Կետադրել ինքնուրույն

Հայ ժողովրդի Աստվածաշունչը գրվել է իր արյունով մանուկների երկյուղի լացով բոցավառված գյուղերի հրացուլքով:

Նա ողջակիզվող իր ժողովրդին պայքարելու ապրելու գոյատևելու կենսական ավիշ ոգի ու հուժկու հավատ ներշնչեց՝ փողհարելով ամենահաղթ նախնիների հերոսականությունը:

Կյանքը կարելի է արժեքավորել գեղեցիկ մաքուր հավատարիմ անձնուրաց ընկերություն անելով:

Հաջողությունը երջանկությունը հարստությունը և փառքը սիրո սպասավորներն են:

Մաքրությունը սրբությունը հավատարմությունը ծուլեցի իրար և այդ ամբողջությունը «Սեր» կոչեցի:

Մարդ պետք է ծովի պես ապրի՝ խոր ու մութ մաքուր և պայծառ մեղմ ու լուռ հուզող և փոթորկուն:

Մարդու ժամանակը աշխատանքը ազնվությունը գիտելիքները իրեն տիրապետելու ունակությունը ֆիզիկական մտավոր և բարոյական ուժերը հարստության միակ բաղադրիչներն են:

Մարդ պետք է լինի խելացի պարզ արդարացի համարձակ բարի և միայն այդ դեպքում նա իրավունք կունենա կրելու այդ բարձր կոչումը Մարդ:

Դաստիարակված մարդիկ միշտ ներողամիտ են մեղմ քաղաքավարի զիջող:

Մեր գանձերն են՝ առողջությունը կյանքի պարզությունը ազատությունը մարմնի և հոգու ամրությունը առաքինության նկատմամբ սերը հարևանների հետ համերաշխությունը մտերմությունն ընկերների հետ բարեկեցության մեջ մեղմաբարոյությունը դժբախտության մեջ անսասանությունը միշտ համարձակորեն ճշմարտությունն ասելու խիզա-

խութունը կեղծավորության հանդեպ ասելությունը:

Հասկանալ, թե ինչն է արդարացի զգալ, թե որն է գեղեցիկը ցանկանալ, ինչ-որ լավն է՝ ահա բնական կյանքի նպատակը:

Տրտմությունը թախիծը զղջումը հուսահատությունը անցողիկ ձախորդություններ են, որոնք արմատներ չեն գցում հոգում:

Ասպետը մոտիկից նայեց ջրին և ցնցոտիապատ մի արարած տեսավ այնտեղ մի հուրի-փերի մի աննման դիցուհի մի հավերժահարս մի չնաշխարհիկ էակ:

Աշխարհում ամեն մի տիաճություն ամեն մի ցավ ամեն փոքր ու մեծ դժբախտություն ողբերգություն իրենց ակունքն առնում են կարծրացած այն լեռից, որ կոչվում է անտարբերություն:

Սիրում են մեր երկինքը մուգ ջրերը ջինջ լիճը լուսե:

Բարձրացել է բարդին նաիրյան թե լույս թե մութ օրերում:

Ուռի ճիպոտը շառաչում էր թե մեղավորների թե անմեղների գլխին:

Դեմքով և հարազատ և բարի և սառը և խստաբարո և բարեկամի մեծան մտերիմ և անհողդողդ և մեղմ և անսահման ներող իմ ուսուցիչն էր նա:

Մութն իջնում ու ծածկում էր և ուղի ու արահետ և գյուղ ու քաղաք և սար ու անտառ:

Աշնան խաղաղ օրերին նրան հաճելի էր և սիմինդրի տերևների խշշոցը և վազերի օրորը և հնձանի դռնակի երգը:

Մոր սերն իմ մեջ կրկնապատկում է ամեն բան՝ և ապրելու իղձը և հոգու արիությունը և սրտի կորովը և դեպի իմ եղբայրակիցներն ու հայրենիքն ունեցած սերը:

Եվ գյուղում և բերդի գլխին ժամանակը սահում է դանդաղ:

Եվ իմ կամքի առաջ պետք է ոչնչանա ամեն ինչ՝ և զորք և կուռք և արքա և իմաստուն:

Օ՛, անձկալի ժամեր միայնության ընդվզումի խոհի ոգու ըմբուտության ու կորովի:

Պիտի խորհեր և որոներ կյանքի մահվան տիեզերքի անլույս խորհուրդների արմատը:

Այս խոհերի այս գրքերի այս մտքերի աշխարհում կա մի արև անեզրական:

Մանեն նայում էր նրա կեռ քթին թավամազ հոնքերին հին մագաղաթի պես չորացած ու ճաքճքած այտերին:

Նա չկարողացավ խախտել իմ հավատարմությունը թե՛ դեպի հայրենիքը թե՛ դեպի իմ թագավորը:

Պապս ուտում էր կամ մածուն կամ կաթ կամ ձու:

Կռվում էին կամ վրեժով լցված կամ հուսահատ քաջի նման կամ անտարբեր:

Դու կամ անմիջապես կկատարես պարտականությունդ կամ կհեռանաս:

Ոչ նորեկ գարունը ոչ նորելուկ լուսինը ոչ ճեմելիքում զբոսնող գեղեցկուհիները չէին գրավում նրան:

Ժամանակ գրեթե չուներ. թե աշխատում էր թե սովորում թե խնամում փոքրահասակ եղբորը:

Ոչ իշխանություն ոչ կռիվ ոչ կին Չեն հափշտակում հիվանդ իմ հոգին:

Գիտեի, որ ոչ ոք չի կարող խանգարել՝ ոչ հեռախոսի զանգով ոչ հայացքով ոչ սիրով ոչ ատելությամբ:

Նրանք այլևս չէին վախենում ոչ սրերից ոչ միզակներից ոչ տապարներից:

Ինչ ասես վաճառում էին շուկայում՝ էլ ընկույզ ու ձմերուկ էլ մեղրածոր դեղձ ու ծիրան էլ նուռ ու թուզ էլ խաղող ու սալոր:

Գնաց դրոշակը ձեռքին թուրը մեջքին չիբուխը բերնին գլուխը բարձր փափախը ծոծրակին հպարտ աղավայել:

Վագոնի մեջ մի անկյունում կկած լացակունած ամբողջ աշխարհի դեմ սրդողած լուռ ու մունջ գալիս էի տուն:

Երկար մեր երազները թափառեցին հեռավոր անտառների կապույտ գագաթների վրա դաշտերի ու անտառների շուրջը:

Իր բանակով ասպարեզ է մտել սպանելու ավերելու այրելու նպատակով:

...Որոնք հաճախ ժողովվում էին այդտեղ միմյանց տեսնվելու մտերմապես զրուցելու մայրենի լեզվով կարդալու հեռավոր հայրենիքից ստացված նորությունները միմյանց հաղորդելու երբեմն էլ իրենց ցավերի մասին կարծիք խորհուրդ հարցնելու:

Կգտնվեին օրիորդ Աշխենի նման ազնիվ զգացումներով ոգևորող քնքուշ պարկեշտ բարեսիրտ կարեկից աղջիկներ:

Ազատ օրը ազատ սերը ամեն բարիք իր ձեռքին, Տանջում տանջվում որոնում է ու դժբախտ է նա կրկին:

Մթին սևաթույր ամպերն իջան ծածկեցին քարավանն ուղին և դաշտերն անափ:

Մայրը ներս մտավ գլխի շորը մի քիչ իջեցրեց աչքերի վրա մոտեցավ անկողնուն երկու բարձ մեկնեց հյուրերին:

Միամիտ էի առողջ էի ուրախ էի. նա որտեղի՞ց եկավ լցվեց սիրտս:

Խորն է կյանքն այս երեկո Եվ պայծառ է և տխուր:

Նրանք պսպղում էին այն պարզ պայծառ թափանցիկ լույսով, որ սովորաբար լինում է ցուրտ պարզկա գիշերներին:

Նրա պես բարի խելոք անձնագոհ ազնիվ մարդ հազիվ թե գտնվի:

Այդ գեղեցիկ քնքուշ չքնաղ խելացի կինը պատիվ է անում այցելելու իրեն:

Ճանապարհին նրան ուղեկցում էր դժգոհողների գանգատավորների մի խումբ:

Օթյակներում՝ աթոռների վրա, գտնվում էին տերերի անշունչ ներկայացուցիչները՝ կանացի պայուսակներ շալեր գլխարկներ դիտակներ:

Նրա հայացքը սևեռած մնաց մխացող օջախին մոխրի մեջ չոքած կնոջը:

Մենք դարերով դիմադարձ ենք կանգնել Ասորեստանին Հռոմին Հունաստանին:

Ես չեմ կամենում անցած լույսերից Անցած հույզերից տառապել կրկին:

Ռշտունյաց աշխարհը անտառների մռայլով խոր ծործորների տանկությամբ բարձր լեռների լուսապայծառ ժպիտներով ձգվում էր Բզնունյաց ծովի հարավային ափերին:

Ես ու նա ամբողջ տարիներ մի դպրոցում մի ուսումնարանում մի համալսարանում ենք անցկացրել:

Սարերից դաշտերից անտառներից հովը բերում էր հազարավոր խոտերի բույրը:

Աչքերը անզղների պտույտների հետ էին նրանց թևերի հզոր շարժումի կեռ ու արնագույն կտուցների հետ:

Եվ քո բաց վճիտ կապույտ աչքերում Լույսի ճաճանչներ ճախրելով անցան:

Ֆետրե գլխարկով մարդը նկարեց պարիսպների փլվածքը սրածայր բուրգը պատերի հետքերը:

Ճանապարհին հոգնելու չափ խոսում էին պատերազմից ձիերի հավաքից օրվա չարիքներից:

Աշուն էր տերևաթափով արևի նվազ ջերմությամբ դառնաշունչ քամիով:

Հիշողության մեջ հավերժ մնացին Սոնան հնձանը լաջվարդ շապիկը արժաթե սուրմաները:

Նա ճրագը վառեց խոտի խուրճը գրկեց մտավ գոմը:

Հզորների ու մեծատունների հետ սեղան նստեց Գիտունների ու իմաստունների հետ վեճի մտավ:

Նա խոսում էր իրեն հատուկ վստահ հանդարտ եղանակով առանց բառերի մեջ շփոթվելու:

Ատում են նորից սերն ու կնոջը իր համբույրները՝ շողոմ ու դժնյա:

Բագրատյանը դիտակետից պարզ տեսնում էր թուրք զինվորներին նրանց հրամանատարներին իրենց տունը նրա մոտակայքի շինությունները:

Ամայի ձորում դեղնակարմիր անտառի հնձած խոտի վրա իջել էր մի պայծառ տխրություն:

Հացն էլ են փողով առնում եղն էլ կաթն էլ մածունն էլ փետն էլ ջուրն էլ:

Սերն է քառսից կյանք ստեղծել ծաղիկներին գույն ու բույր տվել թռչուններին երգող քնար ու սրինգ տվել:

Հայաստանի տասներկու մայրաքաղաքներն են՝ Վան Արմավիր Երվանդաշատ Արտաշատ Տիգրանակերտ Վաղարշապատ Դվին Բագարան Շիրակավան Կարս Անի Երևան:

Տրոհվող որոշչի կետադրությունը

Կետադրել հնթնուրույն

Կապույտ լուսյան մեջ սուզվել էին երկնածիգ լեռները արծաթագօծ ձյունապասակներով:

Անահիտը սլացիկ հասակով նրբիրան մի աղջիկ գերեց ներկաներին:

Ահա փոքրիկ լիճը աչքի պես վճիտ հայելու բեկբեկուն արփիափայլով:

Սիրուն աղջիկ էր շեկ կապուտաշյա ոսկեթույր մազերի գողտրիկ սանրվածքով:

Կանաչազարդ դաշտավայրը ցողված վարդագույն մարգարիտներով վառվում էր ծիածանի ամենամուրբ գույներով:

Իսկ ավելի ներքև բարձրանում էր մայր ճեմարանի սյունազարդ շենքը սպիտակ կրաքարից:

Երեսունի մոտ մաշված մի կին էր նա ճկուն մարմնով թախծալի ժպտի ցուլքերը խոշոր աչքերում:

Գույնզգույն թիթեռները գույնզգույն ծաղիկների նման ցանված էին օդի մեջ:

Նիհար սև-սև աչքերով մի մարդ էր նա փոքրիկ նեղ աչքերով ծխից դեղնած բեղերով:

Ռուզան Ամատունին Եվայի նման մի աղջիկ է հոնքերը բարձր հաստ շուրթերով:

Պատմում են, որ նա բարձր առաքինություններով օժտված մի մարդ էր թշնամի ամեն կարգի անարդարության և անհավասարության:

Ֆետրե գլխարկով մարդուն օջախի մոտ նստած կինը թվում էր քրմուհի եռոտանու առաջ ծխի շարժումները գուշակող:

Օրանջիայի ձորակում ամեն գարնան մասրենիներ են ծաղկում բացվում են վարդերը դեղին սպիտակ:

Այդպես էր Գորիսի հին շուկան խեղճ և խարխուլ: Բայց կան և լուրջ փողոցներ քարակուփ տներով և մայթերը սալափատակ:

Այո՛, հրաշք է աշխարհը, հեքիաթ է գեղեցիկ և անհուն զարմանալի:

Կարծես առաջին անգամ եմ տեսնում աշխարհը առօրյա և միշտ հիասքանչ աշխարհը հնօրյա և միշտ նորաստեղծ:

Խավարն է գրկել մեր հոգին այսօր և լռությունը հավետ մահապարտ:

Այդ դեմքը արևախանձ քամահար մոխրագույն խոտում էր պատերազմներում և աստանդական կյանքով ապրող ոչ տանու մարդու մասին:

Դարեր տեսած ընկուզենիներ կան ձորում հին ու հողմահար:

Վերջին ձիավորը քթի տակ մռմռում էր մի երգ մելամաղձոտ ու հուսահատ:

Նա ուներ խորունկ երկնագույն աչքեր քնքուշ ու տրտում:

Զզվելի եղանակ էր խոնավ ցուրտ մառախլապատ:

Նրանց առաջնորդում էր մի բարձրահասակ կին թխադեմ արծվաքիթ բարակիրան բարձրահասակ:

Մաշում է իմ սիրտն անդադար Հին երգ մի ծանոթ ու տրտում:

Երբեք չեմ մոռանա այդ դեմքը սփրթնած հուզված երկյուղած:

Թամարը ժամանակից շուտ ծերացած մի կին էր զարմանալի սպիտակ դեմքի խիստ համակրելի ազնիվ ու փափուկ գծագրությամբ:

Միջանցքում նրա դեմ ելավ մի զառամյալ կին եռանդուն դեմքով և կորովի շարժումներով:

Նա վանական եղբայր էր վառվռուն խանդավառ դեմքով:

Նրա երևակայության մեջ կանգնում է ռայկոմի մեքենագրուհին իր բարձր սլացիկ հասակով:

Չեղեղատի այն կողմը հին գյուղն էր իր տափարակ հողե կտուր-
ներով և ընդարձակ բակերով:

Չաջորդը բարձրահասակ մի գինվորական էր ծաղկատար խիստ
կարմիր այտերով և կապույտ աչքերով:

Նա հասակն առած մարդ էր համակրելի ուրախ դեմքով և փոքր-
ինչ դուրս ցցված փորով:

Մյուսը Մոկաց Արտակ նախարարն էր խոհուն թախժոտ աչքերով
նուրբ սևաթ հոնքերով:

Եթե առաջ նա գյուղ էր ծառազարդ ու կանաչապատ ապա ամառ-
վա այդ պահին այգեստան էր մառաններով լի:

Վերջալույսի մեջ համընթաց առաջ էր գալիս մի նորատի օրիորդ
սլացիկ ու նուրբ կազմվածքով:

Ճանապարհի եզրին վարսավոր ուռիներ կային թախժոտ ու մտա-
խոհ:

Թվում էր՝ նորից լսվում է երգը խրոխտ առույզ հաղթական:

Ի՛նչ անուշ է հոսում կյանքը լիքը սիրով ծաղկով երգով:

Տանտիրուհիս իտալուհի էր գեր առողջ ամրակազմ մի այրի մոտ
հիսուն տարեկան:

Կինը նրա բարձի տակից լռելյայն դուրս բերեց մի ծրար կարմիր
զմուռսով կնքված:

Մտքերը տանջալլուկ ու խառնիճաղանջ ալեկոծում էին նրա
սիրտը:

Ջգեստապահարանի հայելու մեջ արտացոլվեց Ռոմեոյի մարմինը
միջահասակ լայնակազմ:

Պատշգամբում երևաց մայրը ամբողջովին սևազգեստ:

Գիշերը անդորր ու բազմախորհուրդ փռեց իր սև թիկնոցը:

Կրթերը հագուրդ էին ստացել և տեղի տվել մտախոհության արհամարհանքի ինչ-որ շեշտով:

Պառավ Չեղնարը ցամաքած կուչ եկած մի բուռ դարձած որբևայրի էր դեմքի անհամար կնճիռներով:

Երևում էր Վանա հռչակավոր միջնաբերդը հաստաբեստ ատամնավոր պարիսպներով կիսավեր աշտարակներով որմնախորշերով հազիվ նշմարվող վիմավոր սենյակներով:

Նորից ծիածանի բոլոր գույներով զարդարվում էր քաղաքի վերընձյուղված կյանքը իր զվարթ առօրյայով:

Մի պատանի դպիր էր նա նիհար դեղնած դեմքով:

Դրանք գյուղացիների հյուղակներն էին զուրկ պատուհաններից նեղ փեղկերով փոքրիկ դռներով:

Շուտով այնտեղ հասավ տանուտերը միջահասակ ամրակազմ կորնթարդ քթով խոշոր դիմագծերով խելացի աչքերով:

Նրանց տները երկհարկանի էին ընդարձակ պատշգամբներով լայն բակերով պարսպապատ հուռթի այգիներով:

Շուրջը սարեր էին կարծես հարբած շարքերով պար բռնած արտեր են ծայրեփծայր երփներանգ թարմանուչ ծաղիկներով արտույտների կտցարների երգերով:

Սա մի բարձրահասակ ու հաղթանդամ տղամարդ էր ամուր կազմվածքով խոշոր ու ազդեցիկ աչքունքով

Տրոհվող հատկացուցչի և իմաստով չկապվող բառերի կետադրությունը

Կետադրել ինքնուրույն

Քամին սկսեց ֆռֆռացնել Մանուշի ծաղկեպսակի տակից դուրս եկած խոպոպները:

Աղջիկը գլուխը խոնարհում է տղայի մրրկածուկի զգացմունքից ելևէջող կրծքին:

Գուսանը մոլորվեց կիրճի օձի նման գալարվող քերթերում:

Հայն իր բնօրրանը համարել է Աստծու մեծ հոգածությամբ ու սիրով ստեղծած դրախտը:

Օշականի համայն հայությանը քաջ ծանոթ ճանապարհին քարե մի վիթխարի մատյան է կանգնած, որի կիսաբաց էջերի վրա դրոշմված է հայկական այբուբենը:

Հայի այլազգիների հետ չձուլվելու գաղտնիքը պիտի որոնել երեսունվեց տառերից բաղկացած այբուբենի մեջ:

Մաշտոցի լույս դարձած աճյունը ամփոփված է Օշական գյուղում:

Մատռվակը արծաթագօծ սկահակից մատուցում էր կավե կարասների արյունը թունդ հանող յոթնամյա գինին:

Ահա Մասիսի երկնի լազուրի մեջ կորած գագաթը վեհաշուք ու վեհատես:

Արտերի դեռ մանգաղի երես չտեսած ոսկին ծփում էր և ծածանվում:

Ապառաժի գույներից զրկված ու մթամած կերպարանքն ավելի ընդգծվեց երկնքի աչք շլացնող ոսկեգօծ կարմրի վրա:

Այդ խորհրդավոր լռության մեջ լսվում էր միայն ծղրիղի քաղցած մանկան լացի պես համառ ճռինչը, որ գրգռում էր նրա առանց այն էլ հոգնածությունից նվաղած նյարդերը:

Նա ինքն էլ կարծես զգալով իր ինձ վրա թողած ազդեցությունը սկսեց շարունակել խոսակցությունը:

Նայում էր Մանեի աստղերի պես պլպլացող աչքերին:

Նրանց արշալույսների նման շքեղ և շուշանների նման մաքուր հոգիները բարություն էին բուրում:

Անհաջողության մատնվեցին թշնամու ամրոցը գրավելու բոլոր ճիգերը:

Ձինվորները տեսնում էին միայն լուսնի լուսամուտի ապակիների վրա ցլացող շողերը:

Նա մոտիկից տեսավ հաշվապահի անքուն գիշերներից հիվանդագին ուռած կնճիռներով ծածկված դեմքը:

Սակայն Նենրուֆի Սերոբի կնոջ հետ սարերում թափառելը դուր չէր գալիս իր խմբի զինվորներին:

Այդ ժամանակ միայն Բաբեի խորշոմների ցանցով պատած արևախամ դեմքը անսահման բավականությունից ճառագեց:

Չարենցի տասնինը տարեկանում գրած «Աթիլա» պոեմը պարզապես անթերի ծնունդ է:

Հանդիպակաց ձյունածածկ լեռներից փչող ընդդիմադիր հովը համբուրում էր մեր արևից ու քամուց թրծված դեմքերը:

Ոտքերը հազիվ էր փոխում քաղաքի անձրևից ու փոշուց լպրծուն դարձած փողոցներով:

Կրակը լափում էր բուրգի ճարճատյունով բյուրավոր կայծեր դեպի երկինք արծակող տախտակները:

Նրա արևից կիզված և հողմախամ դեմքը պղնձի գույն ուներ:

Կեսօրից բավական անցել էր, երբ Սամվելի բոլորովին հոգնած ասպախումբը հասավ գոգավոր նավամատույցին:

Երևում էր միայն Բզնունյաց ծովակի հայելու նման նեղ շերտը:

Բացահայտչի կետադրությունը

Կետադրել ինքնուրույն

Բուն բացահայտիչ

Հայկական լեռնաշխարհը մարդկային հասարակության բնօրրաններից մեկը վաղնջական ժամանակներից հռչակվել է իր ադամորդու կյանքին անհրաժեշտ կենարար օդով պաղպաջուն ջրով սքանչելի բնաշխարհով:

Տառս ու պապս անձկությամբ պատմում էին մեզ իրենց թռռներին որ մենք ունենք մեր հայրենիքը Հայաստանը և մենք գիշերուզօր կարոտով երազում էինք մեր ոստանի Հայաստանի մասին:

Մի անգամ քրիստոնեական հավատի հետնորդներին պատժելիս նա տեսնում է մի անմահ գեղեցկուհու Չոփսիմե կույսին:

Նինոսը այդ խարդախ ու խաբեբա մարդը մտածում էր, թե ինչպես վրեժխնդիր լինի Հայաստանից իր նախահոր Բելի պարտության ամօրը Ասորեստանի ճակատից սրբելու համար:

Մեսրոպից վեց ամիս առաջ վախճանվել էր նրա մեծ գործակիցն ու հովանավորը Սահակ Պարթևը:

Հայոց մարզպանի Վասակի ամրոցում կրկնվում էր այն ամենօրյան, որ կրկնվել էր տարիների ընթացքում:

Նա հիշում էր իր մտերիմ ընկերուհու Հեղինեի հետ ունեցած խոսակցությունը և համոզվում, որ նա շատ ճիշտ բաներ է ասում:

Պատից կախված էին զենքի տարբեր տեսակներ թրեր դաշույններ որսի կենդանիների եղջերուի այծյամի գլուխներ:

Երջանիկ պատահականությամբ ես խոտորջուրցի պատանիս դուրս պրծա արյունոտ սպանդից:

Քնած ամրոցը Ողականը զառիվերին կառչած առյուծի պես փակել էր աչքերը:

Ամեն ինչ թե՛ ահասարսուռ լեռները թե՛ մթամած ձորերը թե՛

քարածերպերը ծածկվել է կանաչ վերմակով գմրուխտ անտառներով:

Հայոց արքան Խոսրով Մեծը հրաման է տալիս զորավարին Վաչե Մամիկոնյանին երկրից հարավային գավառներից մեծաթիվ գործավորներ նշակներ ու վարպետներ հանել Արարատյան գավառում անտառներ տնկելու համար:

Ամեն ինչում պետք է հետևել երեք սկզբունքի ճշմարտության ազնվության օգտակարության:

Հայոց թագաժառանգը Պապը յուր կնոջ Ջարմանդուխտի և երկու որդիների Արշակի և Վաղարշակի հետ պահված էին Կ. Պոլսում:

Կենտրոնը կազմում էր տանտիրուհուս դուստրը քսան տարեկան Լուիզան:

Այո՛, սրանք այս երիտասարդները և՛ ուժ են և՛ հույս և կյանք և՛ ուրախություն:

Լուսինը ամոթխածորեն թաքնվում էր հրաշեկ արեգակից ցերեկային լուսատուից:

Ղեռ հայոց ամենահին և ծերունի Աստվածը Արեգը ամեն գիշեր հանգստանում էր Վանա ծովակի մեջ:

Էդպես է ասել հնուց էդ մասին Ֆարսի բյուբյուլը անմահ Ֆիրդուսին:

Աբու-Լալա Մահարին հռչակավոր բանաստեղծը Բաղդադի տասնյակ տարիներ ապրեց խալիֆների հոյակապ քաղաքում:

Աստղիկը Աշտիշատի գեղեցիկ դիցուհին ամեն օր վաղ առավոտյան լողանում էր Եփրատի ալիքների մեջ:

Մենք մի բուռ հայերս դուրս ենք եկել օսմանյան հզոր պետության դեմ:

Երկիրն էլ ինձ նման սպասում է լուսնին իր գիշերային պահապանին:

Կղզին հայ հոգևորականության այս հինավուրց ճգնատեղին

դուրս է ցցվել ծովակի հատակի միջից:

Քեֆ էին անում և ուրախանում Մեր հսկա պապերն ու մեր հայրերը Գյուղի տերերը:

Ես նզովում եմ իշխանությունը հազարաճիրան մոլի բորենին:

Երեխաներին այդ թոկից փախածներին պետք է զբաղեցնել դասերով և խաղերով:

Աշակերտները տոն օրերին վարժապետի համար բերում էին ընծաներ գինի արաղ յուղ պանիր և նման բաներ:

Ամեն ոք մեծ թե փոքր հասակավոր թե երեխա կանգնում և գլուխ էին խոնարհում:

Գաղթի ճանապարհին նա կորցրել էր ամբողջ ընտանիքը հորը մորը քույրերին:

Երեխաները կանայք տղամարդիկ ողջ բազմությունը ծնկի իջավ:

Աշակերտները ուսանողները մտավորականությունը բանվորները գյուղացիները ամբողջ հայ ժողովուրդը սգում էր իր հանճարեղ բանաստեղծի Յովհաննես Շիրազի կորուստը:

Հայոց ձորով անցնելու ժամանակ հայը միշտ հիշում է իր նախահոր Հայկ դյուցազնի այն մեծ հսկայի կռիվը տիտանների դեմ:

Հրամայեց Շնավոնը առյուծաբաշ նժույգի նախկին հեծվորը միջախասակ նիհար շեկ պեպենոտ երեսով մի երիտասարդ:

Գլխավոր մթերքները այսինքն հացը միսը շաքարը առատ են:

Զգուշացիր քո ամենամեծ թշնամուց այն է կրթերից:

Այդ միտքը նրա մեջ հրահրում էր Մացակ ապերը Գրիգորի աչքին ամենահեղինակավոր մարդը:

Դա հանգուցյալի երկրորդ որդին էր Միքայելը:

Քույրերս Մարիամը և Մագթաղը դեռ փոքր էին:

Ամենից առաջ եկավ հաշվապահը բարձրահասակ կուրծքը ներս ընկած քիչ կուզիկ քառասունի մոտ մի երիտասարդ:

Սաթոն մի քիչ խելքը թռցրած գզգզված մազերով կեղտոտ շորերով մի աղջիկ հետևեց նրանց:

Վերցնելով իր գլխին տեղացող անձրևից մի կաթիլ մի ծաղիկ երգչուհին սեղմեց սրտին:

Երկու գինվոր երկու աժդահա դուրս եկան ճամբարից:

Ամեն բանի մեջ ուտելում խմելում հագնելում սաստիկ խնայողություն էր անում:

Մինչև մահ նա ձեռքից բաց չթողեց իր կառավարության գավազանը ահագին փայտյա շերեփը:

Սայրաքաղաքի այդ ուրախ հանգիստը փոխվեց տագնապի, երբ արքայից արքան Շապուհը բարեկամության դաշինք կնքելու պատըրվակով Տիգրոն հրավիրեց Արշակին հայոց թագավորին և Վասակ Մամիկոնյանին սպարապետին:

Ամբողջ օրը նա ջանում էր միայն մի բան անել իրագործել Ավետարանի պատվիրանները:

Մասնական բացահայտիչ

Ջայրույթը որպես խորհրդատու սպանիչ է. նա սպանում է ոչ միայն բանականությունը, այլև խիղճը:

Որպես ուսուցիչ նա անփոխարինելի էր որպես գործընկեր հոգատար ու հուսալի որպես սեղանակից հաճելի ու հետաքրքիր:

Տեր Յուսիկը որպես գյուղական համայնքի հոգևոր հովիվ ճամբարում իր առանձնահատուկ դիրքն ուներ:

Որպես խելացի ու գործնական կին զգաց, որ բանն արդեն չափազանցության է հասնում:

Արարատյան ընդարձակ դաշտավայրը որպես մի հսկայական

բուրվառ խնկարկում էր յուր վաղորդյան անուշահոտությունը:

Մատենադարանը որպես հիմն ու նոր մշակույթների խորհրդանշան հուշարձանի պես վեր է խոյանում Երևանի վրա:

Նա ազնիվ է որպես նորածին և զգայուն որպես քնարի լար:

Նա որպես մի հրեշտակ երևաց ու անհետացավ:

Նրան որպես անառակ որդու թողնում են դրսում:

Երկու մանրիկ աչքեր որպես սև ձիթապտուղներ փայլում էին:

Նոր տարվա գիշերը շատ իրեր իբրև անպետք հնություն դուրս են թափում:

Այդ գեղեցիկ ու բուն քրիստոնեական սովորությունը մոռացության է տրվել իբրև անպետք հնություն:

Իբրև հայր չունեցող տղայի մենք քեզ ազատել ենք բոլոր տեսակի վճարներից:

Իբրև արքա խոսրովը ազնիվ էր ու հայրենասեր իբրև հայ ճշմարիտ քրիստոնեա:

Պատրիկյանը իբրև պարապ մարդ և իբրև ձրի աշխատակից խմբագրության ամենօրյա այցելուն էր:

Իբրև ընտանիքի հայր Գաբրիել Բագրատյանը պետք է հոգ տանի ընտանիքի անդամների անվտանգության մասին:

Իբրև հայ երգիչ ես իմ պարտքը համարեցի այցելել ձեր խմբագրություն:

Նա իբրև զորական և քաղաքական անձ պարզ էր պատկերացնում փոթորկի վերհասը:

Այդ էր պատճառը, որ նրանք իբրև երկու մոլորակ թեև գնում են միևնույն ուղղությամբ, բայց այնպիսի զուգահեռական գծերով, որ բնավ միմյանց չէին հանդիպում:

Մենք իբրև նորածանոթներ առաջին օրը խոսեցինք քաշվելով ու

կցկտուր:

Իբրև ռեալիստ գրող Բակունցը կարևոր է համարում կյանքի մարդկանց, երևույթների նկարագրման հավաստիությունը:

Իբրև ամենայն հայոց կաթողիկոս Ներսեսը պիտի օծեր Արշակա-վանը, բայց իբրև ողջախոսի մարդ նա խորհուրդ տվեց քանդել քաղաքը՝ կանխորոշելով նրա ապագան:

Իբրև գյուղական քահանա նա մինչև անգամ ավելի շատ բան գիտեր, քան սպասելի էր:

Մուկուչի իբրև պատգամավորի պահվածքից շատերն են դժգո-հում:

Իբրև հեղինակի առաջին գործ դա կարելի է համարել գոհացու-ցիչ:

Վանքը իբրև մռայլ ուրվական մայում էր խավարի միջից:

Օտյանի իբրև մարդու բնութագիրը արտահայտիչ գծերով տվել է Ալեքսանդր Շիրվանզադեն:

Մասնավորող պարագայական կամ կոնկրետացնող բազահայտիչ

Նրանք մի շքեղ գորգ փռեցին ճանապարհից դուրս ավազի վրա:

Օրու հայրական տունը գտնվում էր գյուղի ծայրին մի բարձրա-դիր տեղ:

Չեռվում հորիզոնի վրա բարձրագահ բազմել են սիգապանծ լեռ-նագագաթները Լալվարը Չաթինդաղը Սևխաչը Քոշաքարը:

Ներքևում անդնդախոր ձորերի մեջ շառաչյունով հոսում էր Որո-տանը՝ խախտելով կիրճի անդորրը:

Չեռվում գիշերային շղարշների մեջ նիրհում էին հինավուրց լեռ-նագագաթները:

Այգու կենտրոնում փոքրիկ հարթակի վրա կանգնած էր ցեխաշեն մի հյուղակ:

Դպրոցի առջև մի հաստ գերանի վրա նստել էին գյուղի զառամյալ ծերունիները և ցածրաձայն զրուցում էին:

Վաղարշապատում Զոհիսիմե կույսի զոհված վայրում այժմ բարձրանում է սքանչելի մի հուշարձան Զոհիսիմեի վանքը:

Դեռվում հանդիպակաց լեռներից վերև կապտին էր տալիս Սյունյաց վիթխարի լեռնաշղթան:

Բակում ջրհորի մոտ թթենու տակ նստած Մարիամ տատը գուլպա էր գործում:

Իր ընդարձակ օթևանում նեղ պատուհանի զոգին նստած էր Փառանձեմ տիկինը:

Դին Բագրևանդ գավառում Նպատ լեռան ստորոտին ընկած էր հայկական մի փոքր գյուղ:

Սատուռի մոտ կածանից քիչ հեռու հողի մեջ խրված էր ծխից սևացած մի խաչքար:

Վեներցիայում դոժերի ջրանցքների և գեղարվեստների այդ հրաշակերտ քաղաքում ապրում էր գեղեցիկ Ջուլիետան:

Այնտեղ Արտաշատում և այստեղ Ռշտունիքում լուրջ գործեր էին կատարվում:

Բազմել էր դիվանին փափուկ խալու վրա:

Դորիզոնի վրա մշուշի մեջ հազիվ նկատվեց մի կիսականար:

Այնտեղ քսանինը երեսուն քայլ հեռու արդեն մերկացավ երկրորդ բուրգը:

Արևելյան մի քաղաքում փոշոտ փողոցի ստվերոտ անկյուններից մեկում միջօրեի շոգին պառկած էր մի ծերունի դերվիշ:

Գյուղից ներքև հնձված արտերի մեջ նրանց դիմավորեցին Սեթոն և Արմենը:

Ես երբեք չեմ եղել Դայաստանում այդ զարմանալի և հրաշք

երկրում բայց Հայաստանը ճանաչում են ոչ միայն նրա դասականներով ինչ ժամանակակիցներով այլև երիտասարդներով նոր արվեստագետներով:

Լճի մոտ քարակոփ բարձր ժայռի վրա կանգնած էր մի մարդ:

Ներսուն խավարի մեջ մի քանի հոգի ողբ ասող կանանց նման աղիողորմ հեծկլտում են:

Գյուղի կենտրոնում հաստաբուն ընկուզոնու տակ հավաքվել էին ծերունիները և զրուցում էին անցած-գնացած օրերի մասին:

Վրանի մուտքի առաջ օջախի կողքին մի փոքրիկ տղա սունկ էր խորովում:

Դիլան դային նստել էր հնձանի պատի տակ ընկուզենու չոր կոճղին:

Իրիկնաժամին նստում են մենակ կանաչ առվի մոտ ուռիների տակ:

Իսահակյանը վախճանվել է 1957 թվին հոկտեմբերի 17-ին թաղվել է Երևանում Կոմիտասի անվան պանթեոնում:

Այդ կսկիծն առաջին անգամ նա զգաց շատ վաղ մանուկ հասակում:

Այդ դեպքը կատարվել է շատ հին ժամանակներում մեզանից դարեր առաջ:

Ձմռանը ցուրտ գիշերներին մենք հավաքվում էինք օդաներից մեկում և կրակը թեժացնում:

Գարնանը մայիսի կեսերին մենք մեր վրանները խփում էինք այդ չքնաղ սարահարթում:

Երեկոյան մութն ընկելուն պես հասանք տուն:

Առավոտյան դեռ լույսը չբացված ուղևորվեցինք Տիգրոն:

Թագավորն իսկույն ևեթ մունետիկներ է ուղարկում երկրի բոլոր

ժայրերը և հաջորդ օրը վաղ ծեփին բեռնված քարավանները հասնում են ծովափ:

Վաղը այս պահին կլուսավորվեն ամրոցի բուրգերը գույնզգույն երանգներով:

Մի անգամ լուսնկա մի գիշեր կեսգիշերային միրհի մեջ բանաստեղծը պատի հետևից հանկարծ ոտնաձայներ լսեց:

Մյուս օրը վաղորդյան արևը դեռ չծագած աղջիկը դարձյալ հայտնվեց:

Ապրիլին մի կիրակի Կոմիտասը մեզ կանչեց լսելու «Ծիրանի ծառ, բար մի տար» ժողովրդական երգը:

Հետևյալ օրը կեսօրից առաջ Մանեն սկսեց նամակ գրել ամուսնուն:

Մյուս օրը առավոտյան գնացինք տեսնելու Փարվանա լիճը և նրա ճերմակ ամրոցը:

Սովորական ժամին այսինքն առավոտյան ժամի ութին արթնացավ:

Խոր աշունքին Լոռվա սարերով անցնելիս մի գյուղում մութը վրա հասավ:

Տրոհվող դերբայական դարձվածի կետադրությունը

Կետադրել հնքնուրույն

Նախադաս

Արարատի ճերմակափառ հայացքի տակ ծխելով ծուխն իր հայրենի տան բարձրանում է դարերից եկող դարեր գնացող համայն հայերի հանգրվան ու օթևան մի երկիր:

Հովի գրույցին ունկն դնելով Աբու Մահարին խոսում էր անձայն:

Ոչ մի բառ ռուսերեն չիմանալով նա մտերմացել էր միայն նրա փոքր աղջկա հետ:

Պապերի ավանդական օրինակին հետևելով Ձենոբը երկաթ էր հալում և սասունցոց համար շինում էր տնային գործածության իրեր:

Ճյուղերը ջարդոտելով խոտերը խշխշացնելով մեկը առաջ է գալիս:

Տեսնելով զորականին նրանք կարճ ուղիով բարձրացան բլուրը:

Պարսիկներին ճանապարհ դնելով Վասակը խորասուզվեց ծանր մտքերի մեջ:

Ընկերներից ու բարեկամներից բաժանվելով նա առանձնացավ ապաստանեց գրքերին:

Հրաժարվելով պաշտոնից նա ավելի մեծ պաշտոնի հասնելու ծրագրեր ունեւր:

Պայքարելով դավաճանների ու դասալիքների դեմ մենք փրկում ենք մեր պատիվը:

Նամակն ուղարկելով աղախնի միջոցով նա պատասխանի էր սպասում:

Հարգված լինելով համայնքի բոլոր անդամների կողմից Տեր Հայկազունը խորհրդում առանձին դիրք էր գրավում:

Ձիովորական երկար շինելի փեշերը հողին քսելով նա տիրաբար մոտեցավ քուռակին:

Երեխաների վրա գոռգոռալով մայրը շարունակում էր դասավորել ճամպրուկները:

Արտասանելով այս խոսքերը Հայրապետը օղու բաժակը միանգամից դատարկեց:

Ճամպրուկն ու բարձր դնելով այնտեղ Շահյանն շտապով մոտեցավ կառքին:

Հիմնվելով իր հետազոտությունների արդյունքների վրա նա պնդում էր իր ասածը:

Մացակ ապորը մտասույզ վիճակում տեսնելով հագիվ լսելի հազաց ու տեղավորվեց թախտի ծայրին:

Եվ հանձնելով իմ կյանքը հերոսական կամքիդ ես այրեցի երգերս՝ մի երեկո գրած:

Միմյանց դեմ ունեցած ամեն մի գժտությունն մոռանալով եկան ժողովվեցին իր շուրջը:

Ծնվելով լեռների գրկում սնվելով ռազմական դաստիարակի հոգեկան կյանքով հեռու մայրաքաղաքի մարզպանական ու այլ պաշտոնական մթնոլորտից նա չէր մտածել այս մասին:

Աշխատելով ազատել եղջուրները ամեհի ցուլը կատաղորեն ուստոստաց:

Սրինգի ձայնից դյուքված մոռանում էին իրենց վշտերը:

Մաճից կախ ընկած սուր դանակը ձեռքին աշխատում էր մի մարդ:

Այդ անհաջողությունից մոլեգմած թշնամին որոշեց անցնել պաշարման:

Մարխի լույսը վերև բռնած դուրս եկավ մի սրամորուք և կորովի վանական:

Հենված պատշգամբի ճաղերին Էլուշը խոսում էր ներքևում կանգնած գործակատարի հետ:

Նախագահի հանդիմանական հայացքից ազդված նստածները վեր կացան:

Բնության տեսարաններով հրապուրված բանաստեղծն ստեղծեց անգուզական բանաստեղծությունների մի շարք:

Անքնությունից ու գիշերվա կերուխումից թուլացած նա հազիվ էր ոտքի վրա մնում:

Պարսպի վրա դարսված գերանների վրա նստոտած զրույց էին անում մի խումբ մարդիկ:

Ձեռքերը վերարկուի թևքերի մեջ կոխած Շահյանը ապուշի պես նայում էր նրա կենսուրախ դեմքին:

Անիմաստ մաքառումից հոգնած նա վայր դրեց իր զենքերը:

Չնայած անտանելի շոգին ու թեժ արևին Բաղդադի փողոցները լիքն էին ժողովրդով:

Բազմած լուսնի նուրբ շողերին Յովի թևին թռչելով Փերիները սարի գլխին Յավաքվեցին գիշերով:

Յաղթ բազուկները կրծքին ծալած նա խրոխտ կանգնեց:

Քաղցր խեժի բույրով արբած իշամեղուն թռչում էր ծաղկից ծաղիկ:

Միջադաս

Կանաչազարդ դաշտավայրը ցողված վարդագույն մարգարիտներով վառվում էր ծիածանի ամենանուրբ գույներով:

Սպիտակ արագիլը կարմիր ոտները հորիզոնական դիրքով ուղիղ մեկնած լայն թևերը թափահարելով շտապում էր դեպի Արաքսի մորուտները:

Անտեսանելի կոհակները ասես կարոտով մինյանց գրկախառնըված իրենց զմայլելի խշշոցով թավալվում էին ոտքերիս տակ:

Այրին ամուսնու արհեստից զզված ու տանջված ութ տարեկան Լևոնին հանձնում է մի ատաղձագործի և ինքն սկսում ուրիշների համար ճերմակեղեն լվանալ:

Չոր ու դալուկ տերևները հողմի բերանն ընկած սարսուռով քշվում էին այս ու այն կողմ:

Պապը ծանր հիվանդությունից թուլացած հագիվ քայլում էր սենյակում:

Բազմության միջից մեկը ձիու սանձը բռնած առաջ է գալիս:

Վրաններից մի մարդ մանգաղը գոտու մեջ խրած գլուխը կեղտոտ թաշկինակով փաթաթած բարձրացավ բերդի քարափով:

Սմբատը մեջքը պատին հենած գլուխը թեքած կրծքին շրթունքները կրծոտում էր անխնա:

Ուսանողը գլուխը վերմակով սուտ ծածկած ճաղերի արանքից դիտում էր նրան:

Ձիերը անգղների կռնչոցից վախեցած խլշեցին ականջները:

Սևամերկ դաշտավայրը կենսաթրթիռ գարունքով զարթնած դիմավորում է բնության զարթոնքը:

Սարգսգետինը պճնված հիասքանչ ծաղիկներով ու թավիշ կանաչով մի քանի ժամ հետո պիտի տրորվեր զինվորների ոտքերի տակ:

Օմար խայամը ոսկեղեն նարգիզների մեջ նստած աշխարհի ունայնությունը մոռանալու համար գինի էր խմում:

Առավոտից մինչև կեսօր առանձնացած իր փոքրիկ սենյակում գրքերից իմաստություն էր քաղում:

Չետկյալ օրը վաղ ատավոտյան գյուղացիների մի մեծ խումբ նախկին զվարթությունը կորցրած Կաղնուտից ճամփա ընկավ դեպի կայարան:

Ամբողջ բնությունը կարծես լսողություն դարձած ականջ էր դնում այդ հնչյուններին:

Թուրվանտա Քորոն կառքում գլուխը հպարտորեն բարձր բռնած ուզում էր որ ամեն մարդ տեսնի իրեն:

Շենքի վրայով գրեթե քսվելով տանիքին ճախրում էին ծիծեռնակները:

Ձահերը պատռելով խավարը իրենց լույսն էին սփռել աջ ու ձախ:

Բազմահաղթ ու ըմբոստ իշխանը նախընտրելով մնալ իր հայրենիքում մերժել էր կռվել կայսրության թշնամիների դեմ:

Ամբոխը սանդուղքի վրա տեսնելով իր տիրոջը աղաղակեց հրճվանքից ու հիացմունքից:

Ուղիղ հիսուն տարի առաջ թողնելով իր աննշան ծննդավայրը եկել հաստատվել էր այս քաղաքում:

Վերջադաս

Պրոֆեսորն սկսեց քայլել մանր և համաչափ քայլերով ձեռքեր մեջքին բռունցք արած:

Սարտիրոս Սարյանի կտավները գույների մրրիկ են մանրապատկեր շրջանակում պարփակված:

Որսորդը նստեց ծառի տակ մի փոքր դադար առնելու մի կտոր հաց ու պանիր ուտելու մի կուն ջուր խմելու:

Ըմբռնչմանում էր նրա բյուրեղային մաքրությունը ծիրանավառ վարդերի թերթերի վրա ընկողմանած:

Ամբողջ կյանքն անց է կացրել անդուլ գործունեությամբ խիղճը հանձնած երկաթե սնդուկին և հոգին գրպանը դրած:

Բարակները վազում էին նրա ետևից լեզուները կախ օգած:

Արաքս գյուղը գեղանիստ է շրջապատված անտառներով:

Երկար նստարանի վրա պառկած էր մի երիտասարդ ձմեռվա տաք վերարկուի մեջ կողովված:

Ներսից դուրս եկավ մի բարձրահասակ վանական սևազանգուր հոնքերը աչքերին կախված այտերը թավամազի մեջ կորած:

Ու թվում է՝ տեսնում ես նրան իր բնօրրանի սքանչելիքներով ներշնչված աստվածային երազների մեջ խորասուզված:

Ուժեղ ցնցումներ էին պետք ինձ այդ անտարբերությունից և

անզգայությունից հանելու համար:

Միքայելը մահն արհամարհեց ուրիշին մահից փրկելու համար:

Առաքել կաթողիկոսը շատ ջանք ու գործ դրեց ծանրացած հարկերը փոքր-ինչ թեթևացնելու համար:

Ջինվորների մի քանի սրընթաց խմբեր գնացել էին դեպի գանազան կողմեր բռնելու ըմբոստ խռովյալներին:

Ջրտուքի այդ գիշերներին լուսինը շողք էր գցում առվի մեջ ջրվորի պողպատ բահի վրա արծաթազօծ փայլով պսպղացնելով նրան:

Հարյուրավոր էլեկտրական լամպեր փայլատակում էին հովտի երկայնքով իրենց պայծառ լույսն անդրադարձնելով մթամած երկնքում:

Հասակավոր տիկինը լռությամբ գնաց նրա կողքից չսպասելով այլև նոր գրույցի:

Եզը ցավից բառաչեց հեռանալով խոտի շուրջը խռնված լծկաններից:

Սարսափելի էր շնչելով Արարատի ցուրտ մառախուղը և տեսնելով խորանդունդ վիհերը:

Մայրամուտի արևը պռունկն արդեն քսում էր ծովի շրթունքին բոցավառելով նրա լազուրը:

Սպասումի վառած մոմերը հանգչում են հիասթափության քամուց վերածվելով մոխրի շաղախված անտարբերությունից ու անորոշությունից:

Ով շատ է մտածում նա քիչ է խոսում ձգտելով հնարավորինս շատ մտքեր խցկել սակավ բառերի մեջ:

Նա դուրս նայեց պատուհանից զգալով անորոշ մի կսկիծ:

Շարունակեցին սեղանը պատրաստել միմյանց հետ աշխույժ գրուցելով ու կատակներ անելով:

Նա կրկին ժպտաց քնքուշ հայացքը շրջելով բոլորի վրա:

Բա մեռած հո չենք, ապրում ենք, էլի ամեն մեռնողին երանի

տալով:

Նրանք պատրաստ են իր դեմ գործել միջոցների մեջ խտրություն չդնելով:

Ախոռապանը դուրս եկավ ախոռից հետևից դժվարությամբ քարշ տալով թամբած քուռակը:

Ասաց վանականը խելացի հայացքը ուղղելով վանականի հայացքին:

Ամենքը լարվեցին սպասելով մի մեծ աղետի:

Խսրի վրա մեկնվեց և կինը թաղիքի տակ ծածկելով տղային:

Լևոնը խոսում էր ձիու հետ նրա սանձն ամուր հավաքած ձեռների մեջ:

Մայրաքաղաքից եկել էր մի բարձրաստիճան անձ տեղում գործերի վիճակին ծանոթանալու:

Դավիթը Շուշանիկին կանչեց քաղաքից եկած հյուրերի համար սեղան պատրաստելու:

Գնալու է մայրաքաղաք ուսուցչական կուրսերում կատարելագործվելու:

Գիլանց Մուքին և Առաքելը առաջ ընկան ամբոխի մեջ գտնելու հարևան գյուղերի մարդկանց:

Ձեռնված դեղբայով դեղբայական դարձված

Ներս մտավ Գրիգոր Սահակյանը ձեռքին մի շիշ օղի մի ավսե կարագ:

Պարտեզում այգեպանի սուր դանակը ձեռքին աշխատում էր մի մարդ:

Ձորամիջյան վերընթաց կածանով լռեյայն բարձրանում էր Խողեղանը ուսին հովվական մախաղ:

Դիրքերից դուրս եկան երեք հոգի հրացաններն ուսերին:

Երբեմն այս ու այն այգուն երևում էր մի ժերունի հին կողովը ձեռքին, կամ մի պառավ գոգնոցի փեշերը բռան մեջ:

Դարավոր փորձությունները չընկճեցին հայի ոգին, և նա հակառակ բոլոր արհավիրքների հասավ նոր ժամանակների լույսին:

Պառկում եմ դեղնականաչ խոտերին մեջքս Մխիթարի գերեզմանին:

Հայացքը հեռուներին նա չգիտեր՝ երջանկություն էր սպասում իրեն, թե՞ դառն հիասթափություն:

Պանինը սատանայի պես քրքջում էր ոտքն արջի դիակի վրա:

Գլխատված հավերը ձեռքին Ավագյանը դուրս եկավ հավաքնից:

Հանգստանում էր հողմը բացատում ականջն ամպրոպի ազդանշանին:

Մի քիչ հեռու կանգնած էր մի աղջիկ պարանի չափ բարակ ճյուղը ձեռքին:

Ականջներիս մեջ ձեր երգը վայրի մտնում եմ նորից անտառը մայրի:

Ու հավիտյան էլ մնացին քնած Դավին անտեղյակ ցավին անտարբեր:

Գիշերը ամբողջ հիվանդ խելագար Ես երազեցի արևի մասին:

Արմունկները պատմեչին գլուխն ափերի մեջ աչքերը հառել էր բեմին:

Հարևանը ժպիտը դեմքին անկյունում նստած էր:

Թոնրի մոտից հեռանում է մի քանի լավաշ կռան տակ:

Տարբեր շարադասությամբ դերբայական դարձվածով նախադասություններ

Արևածագի լոգանքը կիսատ թողած ավագանի վարդաջրից դուրս է նետվել թագուհին և մերկությունը ծածկելով մինչև կրուկները հասնող

գիսակներով հուսահատ ընկել հուլունքը փախցրած հայ իշխանի ետևից:

Աստղիկը Տարոնի դիցուհին դուրս էր գալիս Աշտիշատի տաճարներից և շրջապատված յուր անթառամ նաժիշտներով իջնում էր Քարքե լեռան բարձունքներից Արածանիի արծաթափայլ ալիքների մեջ լողանալու:

Կրծքից արծակելով գղջման դառը հառաչանք դողդոջուն ձեռքով բացասական տխուր շարժում էր անում կարծես հեռացնելով իրենից օրիորդի գեղանի կերպարանքը:

Ոսկեղենի մեղուն կնճիթը թաթախում էր քաղցր նեկտարի մեջ և նրա բույրով արբած թռչուն էր լողանալու արևի շողերով:

Գրիչները լուռ ու ինքնասույզ իրենց սեղաններին խոնարհված հայոց սքանչելի տառերը դրոշմում են մագաղաթին իրենցից հետո եկողներին հաղորդելու Աստծո խոսքը:

Մեկ-մեկ հիշելով անցյալում Արշակի հետ պատահած բոլոր դեպքերը ծերունին ոտքերին գոռ էր տալիս որքան կարելի է շուտ հասնելու գյուղ:

Հագիվ մի քանի քայլ արած կանգ առավ բարձրացրեց գլուխը և մոլեգին աչքերով նայեց հասարակությանը հետո գլուխն իջեցնելով նայեց դիմացը կանգնած զոհին և նոր հիշելով անելիքը սրընթաց արշավեց:

Անցնելով գրականության մեջ ձեռք բերելով ժանրային նոր հատկանիշներ կենդանապատում հեքիաթը վերածվում է առակի ավելի ցայտուն դարձնելով իր հիմնական հատկանիշները այլաբանական-երգիծական բովանդակությունը սեղմությունը բարոյախոսությունը:

Անտառապանը տան շեմին նստած շան գլուխը ծնկին առած մտածում էր հայացքը անորոշ մի կետի:

Մենք կարող ենք նշանակալից երևալ մեր արժանիքներից ցածր մի պաշտոն գրավելով բայց ավելի հաճախ չնչին ենք երևում մեր կարողություններից բարձր մի պաշտոն զբաղեցնելով:

Նժույզը պտտվեց և սամձը ծամելով թռավ տեղից:

Լույսը դողաց և ճոճվելով վանքի պատերին աստիճանաբար ան-

հետագավ:

Փոթորկված վայրկենական հուզմունքից ես սկսեցի հետ ու առաջ քայլել ինքս ինձ ուղղելով միևնույն հարցը:

Մի ձեռքով ճակատից գլորվող քրտինքը սրբելով մյուսը թուլացրեց ազատելով հույճի վիզն ու կոկորդը պրկվելուց:

Պարսից արքան լսելով կատարվածի մասին շնորհակալություն հայտնեց Վասակ զորավարին զարմանալով նրա քաջասրտության և մեծ ու աննահանջ վճռականության վրա:

Յոդի հյուսիսից ուժ առած որթերի բաց կանաչ ծայրերը ոլորվել էին զսպանակի պես կարծես պատրաստվելով շարտվել ավելի առաջ:

Որսորդները մրրիկի սաստկությունից շփոթված կորցրին միմյանց և տարածվեցին կղզու զանազան կողմերը ապաստանի տեղ գտնելու:

Երկար շրջում էր նա շաղոտ թմբերի մեջ, ապա թուլություն զգալով նստեց հնձանում փոքր-ինչ հանգստանալու:

Տեղ-տեղ ճանապարհից անջատվելով դեպի աջ ու ձախ ձգվում էին նեղ կածանները այգիների զույգ պարիսպների միջև սեղմված:

Նեղ հունի մեջ խեղդված գետը մոլեգնորեն ծառս էր լինում բարձրաբերձ ժայռերի դեմ և անզոր հոսում հոխորտալի դղրոյունով խախտելով կիրճի անդորրը:

Սրան-նրան հարցնելով վերջապես գտանք ամառանոցը և դեռ շեմքին չմոտեցած լսեցինք գնդացրային հատուկենտ համազարկեր:

Ուղղակի տեղահանվել էր մայրաքաղաքի ողջ բնակչությունը և մարդկային հեղեղ դարձած լցվել փողոցները:

Մեջբերվող ուղղակի խոսքի և կոչականի կետադրությունը

Կետադրել ինքնուրույն

Ճանաչել զիմաստությունը և գիտատ իմանալ զբանս հանճարոյ ահա մեսրոպատառ առաջին նախադասությունը:

Էրենբուրգը Սատենադարանի մասին գրել է հիացած են հայ ժողովրդի մշակույթի վեհությունը ցույց տվող հին ձեռագրերի ժողովածուով և երբեք չեն մոռանա այն ինչ տեսել են այնտեղ:

Ու մտքերի մեջ խորասուզված խորհում էր նա կյանքը տառապանք է, սակայն ապրելու կամքը ավելի տառապանք է:

Ստքերի մեջ խորասուզված մտմտում էր ես այլևս չեն կարողանում այդ մարդու ասածները լսել և հաստատ գիտեն որ էլ չեն դիմանա այդ փորձությանը:

Որտեղ հանդիպել Գարեգինին խորհում էր մանկամարդ օրիորդը ինչպես հայտնել սրտում օրըստօրե կուտակվող վիշտն ու նրմուռը:

Բնությունը կնոջն ասել է գեղեցիկ եղիր եթե կարող ես իմաստուն եղիր եթե ուզում ես բայց շրջահայաց դու անպայման պետք է լինես:

Ծանր մտորումների մեջ էր իշխանը ես ի՞նչ անեն ու՞մ դիմեն որ ինձ հասկանան և օգնեն:

Նա ինքն իրեն ասում էր ես պետք է ամուր լինեն պետք չէ ենթարկվել այդ մարդկանց ազդեցությանը:

Երվանդի հեռագրում ասվում էր տեղեկացրեք հարյուրապետին մեզ դիմավորելու անհրաժեշտության մասին:

Ես ամեն ինչ լավ են հասկանում հավատացրեց ծերունին տղային և նրա աչքերում կասակծ տեսնելով բացատրեց երբ ես երիտասարդ էի իմ մեջ էլ նման ձգտում է եղել:

Մեր մեջ քեզ բարիք անելու ձգտում կա միայն ու մենք խնդրում ենք լրիվ չխմես մեզ թողնես հետ գնանք ասում էին ծովի ալիքները ավազին բայց ավազը չէր լսում չէր հասկանում:

Սուրբ գիրքն ասում է եթե իմաստուն ես քեզ համար ես իմաստուն եթե ծաղր անող ես միայն դու ես վնասը քաշելու:

Մեղուն ասաց իմ նախորդ կյանքում ես ծաղիկ եմ եղել և դա հպարտանալու բան է:

Ի՞նչ պիտի լինի իմ գործը Դվինում հարցրեց վեհափառը և տարակուսած ավելացրեց ինձ համար անհասկանալի շատ բան կա այդ հապճեպ որոշման մեջ:

Թագավորը հրամայեց Սահակ իշխանին խոսիր Սարգստունու հետ և արդյունքը հայտնիր ինձ իսկ թե ինչ որոշում կկայացնենք մենք մեր գործն է:

Ինչու՞ ես ինձ ուղարկում այդ վրեժխնդրությանն ընդառաջ դիմելով իշխանին տարակուսած հարցրեց վեհափառը և ապա ավելացրեց չեմ հասկանում ինչ օգուտ կարող է բերել քեզ իմ մահը:

Երբ Սարյանը նկարում էր Ջոն Սթայնբեքին գրողն ասաց Ձեր ձեռքի շարժումներն իմ մեջ երաժշտություն են ծնում ես երաժշտություն են լսում կոմիտասյան ու բեթհովենյան երաժշտություն:

Մի օր Սարոյանը խորհուրդ տվեց իր երիտասարդ բարեկամին եթե դու լսես իմ մահվան լուրը մի հավատա գնա Հայաստանով մեկ շրջագայելու և ամենուր կտեսնես ինձ:

Ես քեզ առաջին անգամ եմ տեսնում ասաց ծաղիկը թիթեռին և հարցրեց ո՞վ ես դու բարեկա՞մ ես թե՞ թշնամի:

Վարպետ Մարգարը հուշադրյուրի վրա խաղաղության աղավնու տակ փորագրեց թող էլ ոչ մի ծնող չկորցնի իր որդուն չլինի պատերազմ:

Պարզությունն ու ճշմարտությունը այնպիսի գեղեցկություններ են որ ամեն բանի մեջ կփնտրվեն ամեն բանե առաջ ասել է Հակոբ Պարոնյանը:

Կյանքը կախարդական ջահի նման ինչ-որ բան է ասել է Բեռնարդ Շոուն որը մի ակնթարթ ընկել է իմ ձեռքը և ես ուզում եմ նրան ստիպել բոցկլտալ հնարավորին չափ ավելի պայծառ նախքան գալիք սերունդներին հանձնելը:

Եղբայները վիճեցին. ավագն ասաց չես գնալու կրտսերն ասաց գնալու եմ:

Մեկն ասաց ոչ մյուսն ասաց այո:

Արամ սեպուհ դու մոռանում ես քեզ հանկարծ տեղից վեր թռչելով բացականչեց իշխանը դու պարտավոր ես զանազանել հայրենասերն արեղայից:

Մտտենալով Կոմիտասին Դեբյուսին ծնկի եկավ նրա առաջ խոնարհեց գլուխը և ասաց Հայր Կոմիտաս խոնարհվում եմ Ձեր հանճարի առջև:

Ա՛խ ինչքա՛ն ինչքա՛ն կարոտել եմ ձեզ Սիգապանձ լեռներ հայոց աշխարհի Վազել եմ հոգնել ձեր լանջերում ես Իմ լեռներ լեռներ լեռներ հայրենի գրել է Արամ Մերանգուլյանը:

Ա՛խ որքա՛ն ուրախ եմ որքա՛ն երջանիկ եմ ես սիրելի Սամվել ասում էր կարոտյալ մայրը որդուն բաց չթողնելով յուր գրկից: Դու ժամանում ես քո հայրենական անրոցը մի այնպիսի բախտավոր թուպեում երբ քո մայրը կատարում է գարնանամուտի տոնախմբությունը:

Ներքին վրդովմունքից խոր թառանջ արձակելով նա մրմնջաց նախախնամության աջը կօգնի ինձ և այն ժամանակ վա՛յ քեզ ապերախտ Բյուզանդիոն...

Դու ո՞վ ես որ քեզ սիրեմ ամբարիշտ քամի արհամարհանքով պատասխանեց արմավենին: Մի՞թե նա չես որ գիշեր-ցերեկ առավտոից իրիկուն անընդհատ վայում է ամայի ուղիների վրա:

Բարձրանու՞մ ես ապշեց հնօրյա կաղնին: Խելագար իսկույն ևեթ իջիր ձորը ուր սառնորակ ջուր կա սննդարար ճահիճ:

...Աշխարհը իրեն ճամփով կընթանա է՛յ վիրավոր սիրտ դու մի գազազիր:

Սիրուն կակաչներ արևի զավակներ ավելի լավ չէ՞ր ձեզ մոտ բերեի իմ ոսկեծամիկ աղջկան:

Քո շնորհած վարդերը ով դրախտի աղջիկ աշխարհի ամենաչքնաղ վարդերն են եղել միշտ և երբեք չեն թառամել:

Տո կոպիտ արջ տո վայրենի էս տեսակ էլ բա՞ն կլինի:

Եվ իզուր չէ որ եվրոպացի մի նշանավոր ճարտարապետ այցելելով Ադթամար գրել է Եթե ինչ որ հրաշքով կենդանան աշխարհի յոթ հրաշալիքների հեղինակները իրենց գլուխները կխոնարհեն հայկական հազարամյա այս տաճարի առջև. նրա քանդակագարդ պատերի յուրաքանչյուր մետրը համճարեղ արվեստի անձնագիր կարող է դառնալ ամեն մի ժողովրդի համար:

Պապ ասեմ քանի աշխարհամաս կա

Ասա գառ ջան

Եվրոպա Ասիա Ամերիկա Ավստրալիա է մեկը մոռացա: Դժվար անուն էր

Տուն համարյա գոռալով ասաց պապը:

Ի՞նչ զարմացավ Հակոբիկը:

Տուն Հակոբիկ ջան տուն: Էդ աշխարհամասի անունը ոչ մի գրքում էլ գրած չի բայց ամենամեծ աշխարհամասն է ամենասիրունը ամենախսկակն ու ամենաթանկը: Գրքում գրում են էն աշխարհամասի անունը որը նվաճել են, իսկ տունը չնվաճված աշխարհամաս է:

Վանատուր Աստված մարդուն ի՞նչ տվեց անհատույց:

Ոչ մի բան էլ չտվեց մարդ պետք է ամեն ինչի դիմաց նի բան տա: Պիտի հող հերկես ու ցանես որ բերք ստանաս պիտի ծառը ջրես ու խնամես որ միրգ տա և այսպես ամեն բան առնում ես ու տալիս տալիս ու առնում:

Նույնիսկ սե՞րը:

Այո պիտի սիրես որ սիրվես:

Վանատուր ստացվում է որ մարդը ամբողջ կյանքում առատուր է անում:

Այո աշխարհը մեծ շուկա է մեկը ծախում է մյուսն առնում չես կարող ասել ով ում է խաբում համենայն դեպս մարդկանց մեծ մասը շուկայից դուրս է գալիս խաբված:

Կոչականի Կետադրությունը

Կետադրելի ինքնուրույն

Ողջույն քեզ արև ողջույն քեզ գարուն:

Ինչու՞ ապշած ես լճակ:

Օրհնված եք դուք սեր ցնորք ու ցավ Օրհնված եք դուք երկիր երգ ու կյանք:

Դու կաթողիկոս հորինե կոնդակ դու հայ զորապետ գթա հայերուն:

Սիրելի որդի լսիր քո հոր խրատները:

Ասա Վարդապետ ո՞վ է քո սերը բախտի պես թաքուն Քո սիրո տերը:

Շուտ մատռվակ ոսկի թասով վարդի գույնով գինի բեր:

Դու ասացիր՝ հող կդառնան շահ ու նոքար Յաֆիգ:

Սիրուն աստղեր անուշ հովեր Յարս ուր՞ է ես գիշեր:

Չիշուն եմ դեմքը քո ծեր մայր իմ անուշ ու անգին:

Մնաք բարով իմ հայր Սիփան եվ դու իմ մայր Վանա ծով:

Քեզ երբեք սիրտս չի մոռանա Իմ մաքուր առաջին իմ անուրջ:

Մա՞հն է արդյոք թե նինջը քեզ Պատել պայծառ Նաիրի:

Ահով ահա կանչուն եմ քեզ Ցոլա ցնորք Նաիրի:

Չե՛յ ու՞ր ես Դավիթ հայոց պահապան Քարը պատռվի՝ դուրս արի մեյդան:

Եկե՛ք քույրե՛ր սեզ սարերի չքնադազեղ ոգիներ:

Քեզ մոտ եմ գալիս իմ հին տրտմությունն Վեհափառ դայակ մանուկ օրերիս:

Լսու՞մ ես դու սիրուն տիկին Այ նազանի անճման:

Միթե՞ արդար է այս ով անաչառդ պարզկիչ:

Այ պաղ ջրեր գուլալ ջրեր որ գալիս եք սարերից:

Դուրս իմ տանից սևերես:

Աղջի աղջի մտիք արեք էս ի՞նչ տեսիլք ես տեսա:

Սիրուն աղջիկ ինչ ես լալիս էդպես մենակ ու տխուր:

Է՛յ հին ծանոթներ է՛յ կանաչ սարեր Ահա ձեզ տեսա ու միտս ընկան:

Սևորա՛կ աչքեր սևորա՛կ աչքեր Հալածում եք ինձ դուք օր ու գիշեր:

Գարուն ամեն տեղ նոր կյանք ես վառել:

Ես քեզ կպատմեմ ոսկե հեքիաթներ իմ սիրուն մանուկ իմ քնքուշ մանուկ:

Ավերված ես դու հայրենական տուն:

Լեռներ ներշնչված դարձյալ ձեզանով թնդում է հոգիս աշխույժով լցված:

Դուք էլ սարի սիրուն ծաղկունք թաքուն մի ցավ ունիք լուռ:

Քո քաղցր վիշտը սիրտ իմ մենավոր քո վիշտն է փռված անհուն աշխարհում:

Վայ քեզ Չարենց լավ իմացիր ականջ արա սիրեկանին:

Ոգևորության հզոր թևերով Քեզ մոտ եմ գալիս Հայրենիք իմ հեք:

Սարեն կուգաք նախշուն հավքեր Ա՛խ իմ մորը տեսել չե՞ք, Օովեն կուգաք մարմանդ հովեր Ախըր բարև բերել չե՞ք:

Չեյ պարոններ ականջ արեք Թափառական աշուղին Սիրուն տիկնայք ջահել տըղերք լավ ուշ դրեք իմ խաղին:

Ա՛խ մնաք բարև չեն ասուն ես ձեզ իմ հոր գերեզման օրոցք մայրական Իմ հոգին հավերժ խռով է ձեզ հետ հայրենական հարկ հուշեր մանկական:

Չիմա ո՞վ է ձեզ հանբուրուն Ծովասարիս ծաղիկներ Ի՞նչ որսկան է ձեզ ցած բերուն Իմ Սիփանի եղնիկներ:

Ո՞ր շահն ունի այդքան ոսկի ու անգին քար Սայաթ-Նովա Չի ունեցել քեզ պես շռայլ խալխի նոքար Սայաթ-Նովա:

Դարդս լացեք սարի սմբուլ ալվան ալվան ծաղիկներ Դարդս լացեք բաղի բլբուլ Ամաշող երկնուց զով հովեր:

Ա՛յ թուխ մագերով աղջիկ Ա՛յ սարի սովոր աղջիկ ջիգյարին գյուլլա դիպչի՝ քեզ սիրի ով որ աղջիկ:

Տրոհվող բառերի և բառակապակցությունների կետադրությունը

Կետադրել ինքնուրույն

Այդ մարդուն անշուշտ ուրիշ մտքեր են հուզում:

Եղբայրը սակայն ուշադրություն չէր դարձնում:

Դու կարծեմ նրան չնկատեցիր:

Չորեղբայրդ այնուամենայնիվ ժամանակին օգնության հասավ:

Իհարկե դու այդ մասին չպետք է հայտնեիր նրան:

Եղբայրդ հիրավի չսխալվեց որ նրան ընտրեց:

Դու ըստ երևույթին ինձ չհասկացար:

Ես իհարկե չզնացի այլ դուրս եկա պատշգամբ:

Սակայն մենք այնուամենայնիվ պետք է ձգտենք բարեհամբույր
լինել:

Չիրավի անձրևը կարծես միտք չուներ կտրվելու:

Ես էլ ավաղ սեփական ուժերով անկարող եմ բացել այս դուռը:

Այս ծանր տառապանքներն արդարև կոփեցին քեզ:

Քո գրածները բարեբախտաբար շատ օգտակար եղան մեզ
համար:

Այս ամենը համենայն դեպս միայն նրանց էր վերաբերում:

Քո մտադրությունը ճիշտն ասած սովորական չէ:

Նա լսում էր անտարբեր և ըստ երևույթին ձանձրույթով:

Այժմ ինչ խոսք սքանչելի կթվա ամեն ինչ:

ճաշկերույթն ուրախ անցավ թեև ես ճիշտ ասած չհավանեցի մասնակիցներին:

Դու նախ և առաջ մի հավատա նրան:

Եվ այժմ փառք Աստծու նրանք տակավին իրենց լավ են պահում:

Տուն ու այգի ցավոք սրտի միասին կռվի դիրք էին դարձել տանտիրոջ ու այգեպանի համար:

Երաժշտասերների հետաքրքրությունը ինքնըստինքյան հասկանալի է օրըստօրե ավելանում էր:

Այդ արարքը ընդհակառակն բազմապատկեց նրա հեղինակությունը և նա թերևս դարձավ թաղի ամենահարգված անձնավորությունը:

Դվինը իրոք այնպես չէր ավերվել ամբարիշտ նվաճողների կողմից ինչպես Հայաստանի մյուս քաղաքները:

Նա գնում էր առջևից մանր բայց ամուր հաղթ քայլվածքով ու չգիտես ինչու շատերն աշխատում էին ընդօրինակել նրան:

Ի դեպ ես ամենևին չէի շտապում որովհետև հետաքրքիր էր դիտել ծովային վերջալույր: Ջուրը կարծես լերդ կամաչ էր կտրել: Տեսարանը անշուշտ հմայիչ էր: Մութը դժբախտաբար արագ թանձրացավ և ալիքների խաղը անտարակույս առաջվա պես չէր երևում:

Բարյացակամ վերաբերմունքը անշուշտ մարդկանց պարտավորեցնում է: Եթե փորձեք այսպես կոչված բարեհամբույր վերաբերվել մարդկանց ինքներդ կհամոզվեք: Իհարկե ինչպես ամեն ինչում այստեղ էլ կարող են հիասթափության դեպքեր լինեն: Սակայն մենք այնուամենայնիվ պետք է ձգտենք բարեհամբույր լինել:

Անհոգ ու անտարբեր ծյունը հայտնվեց նախալեռներում: Այնուամենայնիվ դեռևս ծմեռ չէ: Առաջին ծյունը անշուշտ կանցնի գորշ ամպերը կցրվեն և թեթև ամպերի փրփուրների մեջ բացված լուսաշերտերից իբրև գարնան նշան կփայլի անբիծ լազուրը: Այժմ ինչ խոսք սքանչելի կթվա թափանցիկ փափուկ ցրտամած օդը:

Աքաղաղները միայն ողջունում էին նոր օրը և լուսաստղը ցավոք սրտի թախծում էր անտառներին ու անդունդներին ուղղելով իր հավիղ ճառագայթները:

Մայիսի 3-ի երեկոյան հուրախություն հայության հայ զինվորները գրավում են բռնության գլխավոր ամրոցը Հաջի Բեքիրի զորանոցը մագլցում Վանի պատմական բերդի բարձունքները և անտարակույս քաղաքի վրա պարզում հաղթանակի դրոշը:

Մի անգամ այդ մեր հարաբերությունների խզման հինգերորդ տարում էր փողոցում բոլորովին պատահական կերպով երես առ երես հանդիպեցի նրան: Այդ հանդիպումն իրոք անսպասելի էր ինձ համար: Ըստ երևույթին նա սաստիկ վախեցավ այդ անակնկալ հանդիպումից և ինչպես նկատեցի սկզբում չճանաչեց ինձ: Իսկ նա ամենևին չէր փոխվել կամ ավելի ճիշտ փոխվել էր դեպի այնքան լավը որ ոչ մի նկարիչ չէր կարող նրա գեղեցկության մեջ որևէ պակաս գտնել: Նախկինում շատ լավ հիշում եմ նա մի նիհար ու չարաճճի աղջիկ էր որն այժմ իրոք դարձել էր բարձրահասակ փարթամ մի գեղեցկուհի: Ապշության հետ այնուամենայնիվ ինձ տիրեց ականա մի վարանում:

Մի երեկո էլ սովորական ժամին դա անմոռանալի պահ էր պատանի արտիստը հոյակերտ ապարանքի բարձր պատուհանի տակ կանգնած իզուր աշխատում էր իր դյուբակյան հնչյուններով դուրս կանչել հավերժահարսին: Պատուհանի փեղկերը սակայն փակ էին և տունը ավաղ ամայի էր թվում: Պատանի երաժիշտը այնուամենայնիվ չէր հուսահատվում: Այնուամենայնիվ երբ ջութակն իր վերջին հուսահատական ճիչերն էր արձակում պատուհանի մի փեղկը ո՛վ զարմանք կիտով չափ բացվեց. նախ մի դրամ զնգաց գետնին, և ապա որքան էլ անսպասելի էր թղթի մի կտոր օդի մեջ պտտվելով ցած ընկավ պատանու ոտքերի առջև: Կարդաց բնականաբար առժամանակ շանթահար մնաց տեղնուտեղը արձանացավ իհարկե հետո ցնցվեց ուժգնորեն մի կայծակնացայտ հայացք նետեց դեպի ազնվական ապարանքի բարձունքը թուղթը ուզեց պատահ-պատահ անել բայց զսպեց իրեն խնամքով ծալեց դրեց ծոցը ոտքով դեն շարտեց գետնին ընկած դրամը սիրտը լցված էր և հեռացավ:

Ձայնարկության կետադրությունը

Կետադրել ինքնուրույն

Ախ տվեք ինձ քաղցր մի քուն Կյանքից հեռու սլանամ:

Ախ քո տեսքին անուշ լեզվին Կարոտել եմ մայրիկ ջան:

Ոհ ինչ սև վիճակ քեզ բաժին ընկավ:

Չեյ ով կուզի թել ու ասեղ...

Օ ինչ ասեղ իսկն օձի քիստ...

Վույ թանկ է խիստ...

Է մի խոսի քույրիկ եղպես...

Աման հողեմ գլուխը շահի:

Ախ ե՞րբ պիտի մին էլ տեսնենք՝ Մեր անեծքը երկինք հասնի:

Ախ Անուշ Անուշ եղ ինչ ես ասում...

Տըզզ են կողմից մի ճանճ գալի, Էս կաթիլին վեր է գալի:

Վայ ձեզ մատաղ ասլան շունս...

Օ գրքերի աշխարհը տիեզերք է անհուն:

Վուշ-վուշ Անուշ վուշ-վուշ քուրիկ վուշ քու սերին քու յարին:

Վայ փախեք եկավ ...հայ հարայ եկավ:

Պահ դրանք հո գելեր են,-անցավ մտքովս:

Ով լուսեղեն դռներդ բաց:

Էյ հորեղբայր իմ հերահոտ:

Ախ վերջ կունենան մեր տանջանքները:

Վայ խեղճ տղաս ոչ մի տեղդ չցավա՞ց:

Վայ դու կրակ ուտես տղա որտեղի՞ց այդ բանը հնարեցիր:

Վախս իմ մայր մեկ էլ տեսնեմ քեզ:

Վախս տղաս այդ ինչ օրն ես ընկել:

Վույ քոռանամ ես ինչու՞ ես այդքան միհարել:

Ահ ժամանակակից երիտասարդությունը լրիվ փչացել է:

Վայ-վայ վույ-վույ ինչի՞ համար եկա էս սար:

ՕՖ սիրտս մաշվել է:

ՈւՖ գլուխս պայթում է:

Օյ ոտքս ցավում է:

Աման էլ չեմ կարող դիմանալ:

Օհ երբ պիտի դրա ձեռից ազատվեմ:

ՕՖ էլ հանգիստ քուն չունի մարդ էս անհրավ մոծակներից:

Ուհ էլի եկավ:

Փիե եդ լակոտը մեզ խայտառակ կանի:

Էհե թագավորի անուն ունես մեր տղա:

Հայ ես քո մարդ ասողին:

Պահո մի զարկով երկու գել է սպանել:

Հի-հի ուսյալ ես հա:

Պահ պահ պահ մենակ դու էիր պակաս:

Էյ աշխահ քեզնից բան չհասկացանք:

Էյ ջահելություն անցար և քեզ հետ տարար ամեն ինչ:

Ավաղ այս անցավոր փառքին:

Ավաղ այն օրերն էլ ետ չեն դառնա:

Էյ գիղի օրեր որտե՞ղ եք կորել:

Չեյ վախ կյանքս ցավով ու վշտով անցավ:

Ինչ կեղտոտն է թյուհ:

Փուհ անտաշ վայրենի:

Ֆու այստեղ ամեն ինչ ապականվում է:

Ի գետինը մտնես դու:

Մին էլ ըհը աղվեսն եկավ:

Օհո դեղնած խոտերի վրա սառած արյուն կա:

Ահ ուրեմն նա ազատվեց:

Ջան հայրենի ծղրիղներ ով է արդյոք լսում ձեզ:

Չեյ ջան հեյ ջան լանջեր մարջան:

Էյ ջան հայրենիք ինչքան սիրուն ես:

Օխայ ինչ լավ ջուր է օխայ սիրտս հովացավ:

Ախ լավ պատժվեց:

Ա եկա՞ր մեր տղա:

Ու շատ լավ բան ես բերել:

Այ ձի մի աշխարհ արժի:

Օ ինչ գեղեցիկ առավոտ է:

Օհ ինչ վեհապանձ տեսարան է բացվում մեր առաջ:

Խելոք մնա, կժծծեն հա:

Ա ուրեմն ինձ չե՞ս լսում:

Դե բավական է էլի:

Սիրտ չունեն ուՖ:

Օյ գլուխս մի տարեք:

Չայ-հայ մոտիկ տեղից եկա:

Չեյ ուլատեր հեյ գամնատեր ելեք շուտով բացեք դռներ:

Օգնեցեք հեյ:

Չեյ զարթնեցեք առյուծ քաջեր Պահապաններ Թաթուլի:

Էյ ջան սարեր Սասնա սարեր:

Այ տղա քեզ ինչ է պատահել:

Ով բարեգուր քեզ եմ խնդրել:

Ի՞նչ ես ներս խցկվում տո լածիրակ գնա քո բանին:

Տո լաճ տնավեր:

Քա ես ի՞նչ իմանամ:

Դե գնա քեզ մատաղ Աստված բարի ճամփա տա:

Դեհ ասա բոլորն ասա այս թոպեխ:

Ջու ջու ջու լսվեց Մայրանուշ տատի քաղցր ձայնը:

Չո հո եզո ջան մի քիչ էլ համբերի ասեց Աթագ ազին ու դուրս եկավ գոմից:

Միջանկյալ նախադասության կետադրությունը

Կետադրել ինքնուրույն

Նա բարկանում էր երբ խորհում էր որ Արևիկին խաբել են և նա ինքնըստինքյան հասկանալի է խարդավանքի զոհ է դարձել:

Միայն մի մատուռի մեջ ծխում էր յուղի կանթեղը և որպես տխուր հոգու թախծալի արտահայտություն տարածում էր իր շուրջը աղոտ լուսավորություն:

Նախարարներից մեկը որի անունը դժբախտաբար հայտնի չէ ամոթ ու նախատինք նրան դավաճանաբար այդ բոլորը հայտնում է թշնամուն:

Առավոտները երբ Մարտին ապերը դուրս էր գալիս ծառերին ու մեղուներին նայելու այգում հիմա մնացել էին միայն ձմեռվա խնձորները Նունուֆարը ինքնատեղ դնում էր պատշգամբի ծայրին:

Մինչև գնալս ես էլի պաշար պատրաստեցի նորից հավ ձու եփեցի մի երկու կտոր ոչխարի լավ պանիր առա Աշոտը էդ պանիրը շատ էր սիրում և գնացի կայարան:

Չար լեզուները պատմում էին որ բազազ Սերգոն կամ ինչպես անվանում էին նրան ոճանք Սերգեյ Ավետիչը մեկ կամ երկու անգամ սնանկացել է:

Մանկությունը հիշելով՝ չգիտես ինչու նրա բոլոր օրերն էլ քեզ երևում են լուսազարդ:

Մի պահ տեսնում են փոքրիկ անհանգիստ մանուկների դա բնական զգացում է որոնք վազվզում են փայտե ձիեր հեծած:

Նա միշտ մեր տուն կգար նրա սովորությունն էր և երկար զրույց կաներ հորս հետ:

Նա դեռ փոքր հասակում կարծեմ ընդամենը ութ տարեկան էր զրկվել էր ծնողներից:

Առաջին անգամ սկսեց մտածել արդեն տասնհինգ տարեկան էր թե ինչից ինչ դառավ:

Կիրակի օրը առավոտյան ժամը յոթին կարծեմ հենց այդ ժամին էլ մենք պայմանավորվել էինք ընկերներս եկան մեր տուն:

Որոշել էինք էքսկուրսիա կազմակերպել դեպի մոտակա բլուրը՝ նախաճաշել այդ բարձունքի վրա դա էլ իր հետաքրքրությունն ուներ և մեկ-երկու ժամից հետո ցած իջնել:

Մեր ընկերներից մեկը Արմենը հրաժարվեց մեզ հետ գալուց նա շատ կամակոր տղա էր և մեր տրամադրությունն ընկավ:

Տրակտորիստները կոմբայնավարները և ուսանողները վերջինները եկել էին քաղաքից նստած էին բեռնատարերի թափքերին:

Երևանի Ուղղիչ Տունը նախկին նահանգական բանտն էր որը որքան ինձ հայտնի է հին բանտարկյալների պատմածներից ցարական ամենադաժան բանտերից մեկն է եղել:

Չէ՞ որ ինչքան ես գիտեմ ծննդյան տարեդարձը սովորաբար նշում են սեփական հարկի տակ:

Նախքան ինձ մոտենալը ես դրանում չեմ կասկածում նա մանրագնին ստուգում էր թե արդյոք շուրջն ամեն ինչ հանգիստ է:

Երբ ես ծանոթացա որոշմանը ինձ պետք է խոստովանեմ համակեցին ծանր զգացումներ ու ապրումներ:

Այդ քանդակը ուրախությամբ պետք է արձանագրել վերջին տարիների նրա լավագույն ստեղծագործություններից է:

Գաղիշոն հեռացել է ինչպես ծերուկ տնտեսն ասաց Արտակ Ռշտունու հետ:

Բայց ինչպես հայտնի է աշխարհում ոչ մի գաղտնիք չի մնում գաղտնիք:

Պլանն ընդհանուր առմամբ ճիշտ էր թեև ինչպես հետագայում պարզվեց նրանում հաշվի չէր առնվել հակառակորդի պահեստային ուժերը:

Բայց նա նրանց չի համակրում և որքան նկատեցի ես մինչև անգամ զգվում է նրանցից:

Այդ պահին ինչպես հեքիաթներում է լինում դուռը բացվեց և ներս մտավ չնաշխարհիկ մի գեղեցկուհի:

Կյանքն այստեղ ինչպես ասում են հորդում է աղբյուրի պես:

Իսկ Սևանի գոյությունը եթե խորը մտածենք Հայաստանի գոյությունն է:

Եզդիները եթե ընթերցողը հիշում է քրդերի այն ցեղն էին որ կրոնքով տարբեր էին:

Նոր քարազանգվածի վերին շերտը մոխրագույն է իսկ ստորինը որը բացառիկ երևույթ է կանաչ ու կարմիր:

Երբ շոգը նվազեց իսկ դա արդեն կեսգիշերին էր մենք արդեն նստած էինք խարույկի մոտ:

Սև սարի այսպես էր կոչվում մթին անտառների համար Յոթնակնյա աղբյուրի մոտ մի մեծ խարույկի առաջ նստած էին նրանք:

Տարիներ են անցել ավելի ստույգ ասեմ տասնինը տարի և ես կրկին իմ հյուրընկալ օջախում եմ իմ հայրենի քաղաք օրրանում:

Հայոց աշխարհի Բզնունյաց ծովում այդպես էր կոչվում Վանա լիճը դեռ ոչ մի կռիվ չկար:

Նա մատը վերին շուրթին դրած այդ նրա հատուկ սովորույթն էր նայում էր դեպի բակ:

Ուզում էի որ անունը կրակոտ աչքերի համար Հրաշյա լիներ բայց բանից դուրս եկավ որ Քալի էր վրացերեն քալի նշանակում է աղջիկ:

Ռաբբի Շիմոնի այդպես էր կոչում իրեն քավոր Պետրոսը ցավալի պատմությունները գրավեցին հարուստ սեղանակիցների սիրտը:

Բայց տեսնելով երևի դա անկարելի է այլևս պարսիկները բավական առաջ էին անցել Բագրատունին իր մոտ կանչեց գորավար Բաթ Սահառունում:

Այդ պատճառով և վերջինս ինչպես առաջ էլ հիշեցի հոժարությամբ տեղի տվեց յուր առույգ և երիտասարդ որդուն:

Մեր քաղաքում որքան ինձ հայտնի է չորս հոգի կան որ կարող են մասնակցել աճուրդին:

Պճնասեր եսամոլ և հպարտ կանայք ինչպես այդ լինելն է միշտ նախանձուն էին նրա գեղեցկությանը:

Երեսուն օր անընդհատ գերմարդկային լարումով կռվում էր Վանը Վասպուրականի մայրաքաղաքը մի հզոր բերդ ամրոց էր դարձել կռվում էր փոքրաթիվ հրացաններով ինքնահնար ռումբերով:

Ես շատ էի հարգում նրան խնդրեմ չծիծաղես վրաս այնքան որ երբ նա բարձրանում էր պատշգամբ հեռացնում էի երեխաներիս:

Կանայք ու հարսները ջուր ու կերակուր էին հասցնում կռվողներին ով չի լսել վանեցու կնոջ հավատարմության և նվիրվածության մասին իսկ պատանիները կենդանի հեռախոս դարձած դիրքից դիրք էին վազում և անշուշտ բոլորին հասցնում զինվորական ղեկավարության հաղորդումները:

Երբ հինավուրց ծառը դրոյունով ընկավ փտած ծառը ի վերջո ընկնում է և տունը նկատելիորեն ցնցվեց նկարիչը վերցրեց վերարկուն ցուրտ եղանակին վերարկուն անհրաժեշտություն է ձեռնափայտը և հապճեպ իջավ բակ:

Այդ հարցի մասին թվում է ինչ-որ մի տեղ խոսվել է:

Ոչ մեկը կարծում եմ դեմ չէ նրա թեկնածությանը:

Նա քո նկատմամբ ես դրանում համոզված եմ լավ է տրամադրված:

Նա այդ մասին ինձ թվում է որ չեմ սխալվում հատուկ հողված է գրել:

Մեծ տիկինը ինչպես երևում է կարևոր գործով էր եկել Ռշտունիք:

Եվ իմ մոլոր ուղիներում ով գիտե գուցե մի օր դու երևաս լուսերես:

Ընկերս զարմանալի է նույնիսկ այդ մասին հիշել մինչև հիմա Սևանը չի տեսել:

Ամեն մարդու հոգում ով է ասել իր ժողովրդի մանրանկարն է:

Բարդ համադասական նախադասության կետադրությունը

Կետադրել ինքնուրույն

Անցյալը պահում է ապագան անհանգստացնում է ներկան փախչում է:

Ապրենք ներկայով նայենք ապագային չմոռանանք անցյալը:

Անհնար է միշտ լինել հերոս բայց միշտ կարելի է մարդ մնալ:

Չափը ոսկե սանձ է մարդ երբեք ձեռքից բաց չպետք է թողնի:

Երբ ծովը մարտի է բռնվում քամու հետ խորտակվում է նավը:

Գեղամա լեռները ժպտացին Սևանի տեսքից հուզմունքից արտասվեցին և նրանց ուղղաձիգ լանջերով արծաթյա առվակներ գլորվեցին դեպի ցած:

Մի ակնթարթ նրա դեմքը պայծառացավ իսկույն ևեթ վեր թռավ տեղից փոքր-ինչ թեքվեց դեպի դուռը մի պահ կարկամեց և ջղային արտահայտությամբ նստեց տեղը:

Կյանքը հրաշքների հրաշքն է և մարդ իր համար սահմանված այդ կյանքը պարտավոր է ապրել մաքուր խղճով գեղեցիկ ու երջանիկ:

Ես մենակ մնացի այս կյանքում և իմ հավատարիմ ընկերները դարձան դառը արցունքները:

Իմաստունը սովորում է ուրիշի սխալների վրա խելացի մարդը սովորում է իր սխալների վրա հիմարը ոչինչ չի սովորում:

Թռչուններն էլ են մեկ-մեկ լաց լինում բայց դրանք մարդկանց երգ են թվում:

Երբեք ցեխ մի շարտիր հնարավոր է թիրախին չկպչես ու քո ձեռքերը կեղտոտ կմնան:

Ընկերությունը գրավ դրած դրամագլուխ է և դրա տոկոսները երբեք չեն կորչում:

Բարակ ամպերը մաղում են ոսկի Ջրերը անուշ հեքիաթ են ասում
Կարոտ է սիրտս մտերիմ խոսքի Յոզնատանջ հոգիս բախտ է երագում:

Մեղմիկ սոսափում էր ուռենիին և ջրադացն անուշ մտնտալով
ասես հին օրերից մի հին հեքիաթ էր պատմում:

Դռնակն անդադար բացվում էր նոյեմբերյան քամին ներս էր
փչում օրորվում էին եղեգները և ճրագների լույսը դողում էր:

Կա Մեծարենց կա Տերյան և բազում ուրիշ պոետներ կան բայց
Թունանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության:

Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ
մնամ Ախր ես ինչպե՞ս ապրեմ առանց ինձ:

Հնամաշ մախաղն ուսին սազը ձեռքին նա շոջում էր գյուղից
գյուղ պատմում հինավուրց գրույցներ բարի ազնիվ գործերի մասին և
քաղցրալուր ձայնով հյուսում արդար ու պայծառ ապագայի իր երգը:
Ոգեշնչվում էին պատանիները նրա երգից ճշմարտի հանդեպ լցվում
սիրով մեղմանում էր քարացած սիրտը քնած խիղճը արթնանում:

Աստղերը չքացան արշալույսը վառեց իր խարույկները լեռների
գագաթներին
թռչունները զարթնած ճախրում էին օդում:

Գուսանը մեղմիկ զարկում էր լարին և հեծկլտում էր լարը և
պատմում էր լարը սիրո մի փոքրիկ վեպ:

Միանգամից ոչ մի կարպետ և ոչ մի գորգ չի պատռվում
Միանգամից բերդ չի շինվում ու չի քանդվում միանգամից միանգամից
ծյուն չի գալիս և չի փչում անգամ քամին:

Ծաղկանոցով անցավ աղջիկն առավոտյան Ու ծաղիկներն ամեն
ելան քնից Եվ նայեցին լացած մանուկների նման Ցողի շիթեր կախված
աշիկներից:

Ծառերից օրորվելով ընկնում են տերևները աղեկտուր կանչում է
մոշահավը և բլրորովին մոտիկ դեղնած սաղարթների մեջ կտցարը
թմբկահարում է ծառի կեղևը:

Հոգնած արևը թեքվում է դեպի Աբու լեռը գագաթները հրդեհվում
են և դժգունանում անրջային կիսալույսերով կամաց-կամաց իջնում է

մթնշաղը նախիրը տուն է դառնում հանդից վառվում են տների ճրագները գյուղի աղմուկները լռում են սակավ առ սակավ հանգչում են բոլոր շշուկները:

Սերը կյանքի մեծագույն զարդարանքն է նա բնությանն ստիպում է ծաղկել խաղալ գույներով երգել ամենահրաշալի երգերը պարել սքանչելի պարեր:

Սերը հնազանդեցնում է հպարտ սրտերը մեծամիտներին սովորեցնում է զիջողամտություն բայց նրա գլխավոր հատկությունը ամեն ինչ վեհացնելն ու վսեմացնելն է:

Կաքավաբերդի գլխից ամպը հսկա խխունջի պես սողաց դեպի վրանները խոնավություն կաթեց քարերի վրա մամուռների վրա և մակաղած ոչխարների բրդի վրա նստեց գիշերային խոնավությունը:

Ոչ մի ծաղկով զարուն չի գա ոչ մի գույնով ծիածանը Ծիածանը գեղեցիկ է յոթ գույներով անկործան Ոչ մի գույնը ոչ մի գույնից վեր կամ վար չէ իմացիր Վարդն անուշ է բայց ծաղկեփուջն ավելի է քաղցրածայն:

Ես ի սրտե սիրում եմ հայ ժողովրդին և փառք ու պատիվ եմ համարում աննշան ավազահատիկ լինել նրա զանգվածում:

Հայրենասիրությունը հայրենիքից իր անբաժանելիության գիտակցումն է և նրա երջանիկ ու դժբախտ օրերը նրա հետ միասին անբաժանելիորեն վերապրելը:

Եթե խոսենք կյանքի գեղեցկության մասին ապա հենց հայրենիքի համար անձնուրաց պայքարն է գեղեցիկ կյանքի բարձրագույն դրսևորումը:

Հայրենիքից դուրս երջանկություն չկա թող յուրաքանչյուր ոք արմատներ գցի հարազատ հողում:

Արժանիքները սովորաբար պատված են համեստության քողով թերությունները քողարկված են կեղծավորության դիմակով:

Կարողացիր կողքիդ զգալ մարդուն կարողացիր զգալ նրա հոգին կարողացիր նրա աչքերում տեսնել նրա հոգևոր աշխարհը՝ ուրախությունը փորձանքը դժբախտությունը վիշտը:

Մեծ չարիք է ստորացնել մարդու արժանապատվությունը իրեն համարել հարգանքի արժանի մարդ իսկ ուրիշին՝ «մանր փոշեհատիկ»:

Դրանը թանկ է մարդկային կյանքը էլ ավելի թանկ է իսկ ժամանակը ամեն ինչից թանկ է:

Երեկոն կապույտ թևերով բարձրացավ ձորից քայլեց ողջ անսահման դաշտով ամբողջությամբ ծածկեց գյուղը և բարձրացավ սարը:

Յե՛տյալը գլխին ոսկեհուռ սաղավարտ ուներ դրած գեները և շորերը ոսկեգօծ էին ու շլացնում էին մարդու իսկ ինքը ջահել էր խաժակն ու զվարթ:

Երեկոյան դեմ աստղերը դեռ աղոտանում են շարժվում երկնի կապույտում կարծես տիեզերքի անհուն խորքից մոտենում մեզ:

Քամին փչում էր մեղմիկ ոսկեգույն հասկերն օրորվեմ էին հեզանազ արտերը ծփում ու ծածանվում էին ծովի պես:

Այս կողմերում Արաքսը ելնում է իր ափերից վարար ջրերը տիղմ են փռում լայն տափարակի վրա և առափնյա եղեգնուտները դառնում են կանաչ կղզիներ:

Էլի քամի էր փողոցում քամին ձյուն էր շարտում և պատուհանի ապակիները զնգում էին կամացուկ:

Եվ հնչում էր երգը և գնում է երթը և ձուլվում են բազում ձայներ ու թվում է օդում խնդություն է հորդում:

Եվ հույս կար և կյանքի սեր կար և կռվելու ձգտում կար:

Թե կացինը լավ չէր կտրում թե փայտն էր պինդ թե աշխօրն էր քիչ ու դատարկ դժվար աշխատանք էր:

Ոչ հասակակից ընկերները կան Ոչ պատանության իր մտերմուհին Ոչ գառ ու զմրուխտ հավքերն այն գարնան Ոչ Արփաչայի ուռիները հին:

Կամեցիր և քո ցանկությունները կկատարվեն:

Ձեռք մեկնեց մեծատուններին և կոշտացած ափի մեջ դրին անարգանքի թուքը:

Չետաքրքիր էր ոչ միայն նրա կյանքն իր բոլոր մանրամասնություներով այլև նրա հայացքներն ու խորհրդածություններն արվեստի շուրջը նրա խոսքը թատրոնի վարպետների մասին:

Ցածր անպամածությունը և թանձր մառախուղը ոչ միայն խանգարեցին ավիացիայի օգտագործումը այլև նվազեցրին հրետանու կրակի արդյունավետությունը:

Առաջ հայրենական տունը մեզ համար ցանկալի էր իսկ հիմա տենչանք:

Չազարացիները հուսահատության աղաղակներ բարձրացրին մինչդեռ հայերն ուրախության ու ցնծության ձայներ էին արձակում:

Այս գիշեր թշնամու բանակը կարծես սուգի մեջ էր մինչդեռ Բյուրականը հաղթության տոն էր կատարում:

Ընկալելով այս ամենը ես պետք է որ հաճույք զգայի մինչդեռ հեռավոր մի տազնապ համակում է ինձ:

Եվ ազգեր կորան մինչ քեզ դարերում Վառ պահեց լույսի երազանքդ վեհ:

Այդ հեղուկն օր օրի պիտի ավելացներ Ալիմյանների հարստությունը այնինչ Սմբատը նրա խշշյունների մեջ անգամ լսում էր.- Դու դժբախտ ես:

Բարակ ծուխը խառնվել էր գիշերվա մշուշին և չեն երևում ոչ քարակոփ տները ոչ Կյորեսի հին եկեղեցին այլ միայն նշմարվում են ժայռերի կատարները մշուշի մեջ:

Կամ ժայռերն են իրենց վիթխարի ուսերը խրում գետի ալիքների մեջ կամ ձորերն են կտրատում ծոմռում նրան կամ վերևից եկող լեռնալամջերն են պատերի պես սպառվում ցցվում նրա վրա:

Կուչ էր գալիս խղճալի Օջախի շուրջն օտարի Կամ թափառում մեն-մենակ Մեր հանդերում շարունակ:

Գյուլնազը մի բան պատմելիս պարապ չէր նստում. նա կամ գուլպա էր գործում կամ իլիկ մանում և կամ երեխաների պատռտած շորերն էր կարկատում:

Բարդիները օրորվում են ջրերի վրա կանաչը ծփում է ձորում կաքավը լռում է մացառոտ ժայռերի մեջ:

Ցաված սիրտս երգեր հյուսեց երգեց անուշ ու տխուր Վիշտըս հալվեց արցունք հոսեց Վճիտ ինչպես ջինջ աղբյուր: Հավքերի պես երգերս թռան Հովերի հետ գնացին Արցունքներըս ցողեր դառան Վարդի ծոցում շողացին:

Շարքերն առաջ էին նետվում օդի մեջ կրակում փռվում գետնին դարձյալ կրակում վեր թռչում փոքր-ինչ առաջ վազում նորից պառկում:

Դա գրգռեց Սմբատի նյարդերը և նա հոգու խորքում նորից զգաց ջերմություն դեպի անցյալը:

Կեսօրվա տապին խիստ ծարավ զգաց արյվում էր սիրտը բարկ արևից բայց շուրջը կատարյալ ամայություն էր և չկար մի պուտ ջուր՝ պապակը հագեցնելու:

Պատուհանի տակ կամացուկ աղմկում էր ջրհորդանը և ջրի ցայտերը բաց փեղկից անընդհատ թռչում էին սենյակ:

Մարդ մեկ անգամ է աշխարհ գալիս և իր այդ մեկ կյանքը պետք է ապրի մաքուր խղճով:

Բարդ ստորադասական նախադասության կետադրությունը

Կետադրել հնքնուրույն

Առաջադաս երկրորդականով

Եթե այստեղ էլ հաղթեց դա կլինի ստույգ վերջը մեր ազգային գոյության:

Երբ զորքը հեռացել էր Մելիք Բաղրը և Մխիթար սպարապետը փաշաներին հրավիրեցին Բաղրի ամարաթը:

Ինչքան մթնում էր այնքան մոտ էին թվում այդ լուսատուները:

Որքան մոտենում էր կոմբինատի շենքին այնքան նրա տազնապն ալվելանում էր:

Եվ երբ լեռան կատարից դիտել են արևածագը երբ իմ գնդակը սուլել է փախչող այծյամների հետևից ճչացել են ես մանկան բերկրանքով:

Որ այլևս չէր կարող հանդուրժել հենց այս պահից հասկացավ:

Երբ անտառում հողմ կամ փոթորիկ է փչում ծառերը մեջք մեջքի տված խշշում են օրորվում:

Յենց որ ցողի հատիկները կաթում էին կակաչները շտկվում էին ուղղվում ու ժպտում արևին:

Ով սիրում է բնությունը կենդանական աշխարհը նրա սրտում չարությունը տեղ չունի:

Ով ձեռք է բարձրացնում մեր երկրի վրա նա Աստծու թշնամին է:

Որ Առաքելի խելքը կարող էր խախտված լինել հավանական էր թվում շատերին:

Թե Վարուժանը մեծատաղանդ բանաստեղծ է դա անվիճելի է:

Որ նրանք գյուղը լքել են որ իրենց ազգանունը անասնապահի իրենց շորերի հետ թողել են գյուղում որ նրանք չեն ուզում Մնացականյան լինել՝ այդ քամահրանքը տղային ուշ տասնամյակներ հետո խոցեց:

Ուր էլ լինեն չեն մոռանա ես ողբածայն երգերը մեր:

Միջադաս երկրորդականով

Ամեն առավոտ երբ ծագում էր տվնջյան լուսատուն նրա առաջին ճառագայթները ողջունում էին շինական աղջիկների աշխատանքը:

Բայց մի անգամ երբ խաղընկերները դարձյալ ուզում էին բռնել նա հանկարծ թրմփաց մի սուր ճիչ արձակելով:

Մի ակնթարթում եթե Արաբոն չլիներ կընկնեի հորձանուտը:

Յակադրությունը որ գոյություն ուներ Կարմրաքարի և նրա հանդերի միջև բնությունն ավելի էր խորացնում:

Այն ժողովրդի ոգին որ ապրել է ցանկանում անգամ ցեղասպանությամբ չի ոչնչացվի:

Նրանց ոգին ու երազանքը ովքեր դեպի լույսի աղբյուրն են ընթանում անհնար է սպանել:

Այն տունը ուր գրքեր չկան նման է հոգուց զրկված մարմնի:

Խոսքերս որ ամեն օր կրկնում էի զանազան ձևերով դյուբական ազդեցություն ունեին նրա վրա:

Նա ով թերագնահատում է քննադատությունը իրեն նախօրոք դատապարտում է ծախողման:

Բոլոր նրանք ովքեր ազատ էին մարտական գործողություններից ծխում ու հանգստանում էին խրամատներում:

Այն կտակը որով դու տիրացել ես հարստությանը ապօրինի է:

Վերջադաս երկրորդականով

Մեղմ զեփյուռը իր ամենօրյա հեքիաթն էր պատմում անտառին որ կամաց-կամաց արթնանում էր նիրհից:

Ավարայրի ճակատամարտում հայ ժողովուրդն անմնացորդ նվիրվածությամբ նվաճեց իր գոյության իրավունքը որովհետև գիտակցում էր որ կյանքը մահով է անցնում իր գոյը հետագա:

Առվակի բյուրեղային ալիքները երգում էին այն ոսկեշող ամպերի մասին, որ պսակում են լեռների ադամանդե ճակատները:

Ընտանեկան կյանքը կարող է մեծ երջանկություն տալ եթե այն կապված է փոխադարձ սիրով:

Ծուլությունը այնքան ծանր ու դանդաղ է քայլում որ աղքատությունը անմիջապես հասնում է ետևից:

Անխելք է նա ով հարուստ մեռնելու համար աղքատ է ապրում:

Մեր ճակատագրերը մենք ինքներս ենք կերտում որտեղ կյանքը հանդես է գալիս դիզայնի դերով:

Չպետք է խախտել չափի զգացումը որովհետև հակառակ դեպքում սերն ու բարությունն էլ կարող են դժբախտություն բերել:

Կյանքի ամենամեծ ուրախությունն է նա է որ քեզ զգաս մարդկանց համար պիտանի:

Մի խուսափիր նրա կարիքները հոգալուց ով նեղության պահին քեզ ձեռք է մեկնել:

Ես հավատում եմ որ անհնար է արևը բանտել երկնակամարի զարդերը քանդել:

Բուն ճշմարտությունն այն է որ չար ծառը բարի պտուղ չի տա:

Ուրեմն եկ փառաբանենք փայլեցնենք թրի նման Որ զրնգա արևի տակ հավետ պայծառ հայոց լեզուն:

Չի կարող լինել ճշմարիտ հայրենասիրություն առանց այն սիրո որ մարդ տածում է սեփական լեզվի նկատմամբ:

Ես ոչ մի պայմանով չեմ լքի նրան ով թշվառության մեջ ինձ է ապավինել:

Ամենացավալին այն է որ սեփական միայնությունն ու անօգնականությունը խորությամբ ըմբռնում ես:

Պատուհանի միջով երևում էր երկնքի մի կտոր ուր աստղերը կանաչավուն և կապտավուն գույներով գրում էին իրենց հավերժի գիրքը:

Բարությունը մի հատկանիշ է որի շայլությունը չի վնասում:

Ամենանրբին բավականությունը նրանում է որ բավականություն պատճառես ուրիշներին:

Պատմության փորձը շատ է անհրաժեշտ որ ներկան գնահատենք և գալիք ճանապարհներն ավելի հստակ տեսնենք:

Ոչ մի արտաքին գրավչություն չի կարող լիակատար լինել եթե այն չի գունեղանում ներքին գեղեցկությամբ:

Պոկեցիին իմ ժողովրդին իր պապենական հողից ինչպես մորը փարված մանկանն են ուժով պոկում մայրական կրօքից:

Հայրենիքն այն է որ չեն որոնում:

Գիր չգիտե մայրիկս թող անգրագետ մնա որ չկարդա երգերս վիշտս չիմանա:

Ինչ ասեմ այս մարդուն որն իր հոգին մինչև հատակը բացել է իմ առաջ:

Ակնարկն այնքան հանդուգն էր որ Սմբատը չկարողացավ իրեն զսպել և բարձրաձայն գոռաց:

Բայց ճշմարտությունն այն է որ աղբյուրի ճանապարհին է կուժը կոտրվում:

Ոչ ոքի մտքով չէր անցնում թե ինչ պատահած կլինի Առաքելի հետ:

Ինձ համար շատ սոսկալի է երբ մարդկանց արյուն է թափվում երբ հայր ու մայր փնտրում են իրենց կորած որդուն:

Ձարմացուցիչ են հայոց լեռները որոնք ասես երկնքի կամարները պահում են իրենց գագաթների վրա:

Արևը մայր է մտնում ինչպես մեռնում է դյուցազունը:

Գլխավորն այն է թե ինչպես է վերջացնում մարդն իր կյանքը:

Ինձ կանչում է երկիրն այն գեղամի ուր մարդը մեղմ է խիստ բարձր է ու խոր:

Մի՞թե լռել է լեզուն այն ճարտար Որով մեր փառքն էր խոսում վեհորեն:

Չի ներվում և այն ինչը կոչվում է առավելություն:

Լուսաբացին թռչունների երգը ուրախ է լինում որովհետև ամբողջ գիշեր թառած ծառին լույս են երազում իսկ երբ լույսը բացվում է ճովողուն են լույսի ուրախությունից:

Հաջողությունը հարկավոր է չափել ոչ այնքան այն դիրքով որին մարդ հասել է կյանքում որքան այն խոչընդոտներով որոնք նա հաղթահարել է ձգտելով հաջողությամբ:

Արդարամիտն այն մարդը չէ որն անարդարություն չի կատարում այլ նա որը հնարավորություն ունենալով անարդարացի լինելու չի

ցանկանում այդպիսին լինել:

Արևը մտնելու մոտ էր երբ մեր հոգնած ճանապարհորդը հասավ ճանապարհի ճյուղավորմանը: Դա մի երիտասարդ էր որի տարիքը նոր էր մոտենում երեսունի: Ճակատի վրա երևում էր մի խոր սպի որը նրա վայրենի դեմքին խստություն էր տալիս: Երիտասարդը ոչինչ չէր զգում որովհետև իր սրտի և արտաքին աշխարհի միջև ոչ մի առնչություն չկար:

Սմբատն զգում էր որ իր կյանքը կատարելապես թունավորմած է որովհետև ընտանեկան անընդհատ ընդհարումները հետզհետե սաստկանում էին:

Ամենամռայլ թախիծն է պատում ինձ երբ հիշում եմ որ իմ անկարգության պատճառով կաթկթել եմ մորս արցունքները և ուզում եմ՝ մեկն ինձ անգթորեն պատժի իմ սխալների համար որպեսզի խաղաղվի մշտնջենական ողբն իմ հոգու:

Հրամայական եղանակի բայերի կետադրությունը

Կետադրել ինքնուրույն

Եվ այնուամենայնիվ գլխավորն է՝ սիրիր սիրիր ու սիրիր հայրե-
նիքդ:

Մարդիկ եղեք մարդկային. դա ձեր առաջին պարտականությունն
է:

Կշռադատիր արածդ գործը և միշտ նայիր հեռուն դու ջինջ:

-Էս է, որ կա... ճիշտ եմ ասում. թասդ բեր: Էս էլ կերթա՝ հանց
երազում, թասդ բեր:

Առ էս մորթին ու ինձ համար Մի գդակ կարիր գլխիս հարմար:

Քո պայծառ գահից մեղմորեն իջիր Մազերդ փռիր հոգնատանջ
կրծքիս Անուշ երազով սիրտս պաճուճիր Յնորք հուշերով ամոքիր
հոգիս:

Ուրախ կաց տիկին մի տանջիր սիրտդ այդ դառն հիշողություն-
ներով:

Որպես փոթորիկ իջեք ավերիչ Եվ խորտակեցեք աշխարհն այս
զազիր Փոշի դարձրեք այստեղ ամեն ինչ:

Ջարդեցեք անդուլ անգութ անխնա Ջնջեցեք աշխարհն ապական
ու հին:

Տարեք սրանց ամենքին գլխատման հրապարակ:

Ել դենդկրատիա խոր ու խնդուն աղմկիր ամեն կողմ Դուրս
թափվիր մութ խուցերից և որոտա որպես հողմ:

Արթնացիր երկրի դարավոր մշակ Վառեցեք ջահեր փողեր
հնչեցրեք: Շողա նոր կյանքի արյունավառ ծեգ Ծածանվիր ազատ
կարմիր դրոշակ:

Երգ իմ ձուլվիր խրոխտ այս շարքերին ահա:

Շեփոր դարձիր նրանց շոթունքների վրա եվ նրանց հետ քայլիր դեպի ճամբար:

Լաց վերջին լացդ սիրտ իմ մենավոր վերջին արցունքդ հեկեկա թափիր Սիրտ իմ հանդարտիր:

Լիլիթ հոգուս հոգի այդպես լուռ ու տխուր մի նայիր ինձ: Ժպտա խոսիր:

Վեր կաց նանի հաց տուր մեզ:

Դու մի հավատա ժպտուն աչքերին... Դու շատ մի խաբվիր ժպտուն աչքերից:

Մի վախենար սիրուն քուրիկ... Փախիր գնա... ինչպես մրրիկ:

Վերջը ոտքդ քարին կգա հորդ խոսքից մի անցիր Յոր անեծքը մոր անեծք չէ հոր անեծքից վախեցիր:

Համեցեք դարիբ ախպեր նստիր հաց բերեն հաց անուշ արա:

Արիացիր սիրտ իմ ել հավատով տոկուն Կանգնիր հպարտ որպես լույս լեռն է մեր կանգուն:

Ոչ տրտունջ ոչ մրմունջ սգավոր Հեռացիր մոռացիր ինձ հավետ:

Լավ հսկե ինքզինքիդ աբեղա աղոթե:

Աչքերդ բաց արեք անգետ միք մնա Ձեր թշնամին բարեկամը հասկացեք:

Իմացած եղիր որ սուրբ Մաշտոցի գիրն էլ մեր թագավորն է:

Ձեռնարկ ստորագրված նախադասության կետադրությունը

Կետադրելի հնքնուրույն

Դիմացը գետն էր, հանդիպակաց ափին կիսահունձ արտը, ու ականջիս մանկիկի լացախառն ձայնը:

Միշտ զվարթ էր գարնան արևի պես միշտ թրթռուն թիթեռնիկի պես միշտ չարաճճի կայտառ երեխայի պես:

Օրը ծագած արև է գիշերը հանգած ցերեկ:

Ջահելությունը իմաստության յուրացման ժամանակն է ծերությունը այն կիրառելու:

Գազանը անգութ է երբ սոված է մարդը երբ հղփացած է:

Գիշտ են ասել որ չի սազուն ագռավին վարդ էշին կոտոշ:

Տան պսակը աստվածապաշտությունն է գեղեցկությունը կանոնավորությունը փառքը հյուրասիրությունը օրհնությունը գոհունակությունը զարդը հյուրերը:

Պատերազմը փորձում է քաջին զայրույթը իմաստունին կարիքը բարեկամին:

Չայաստանի մի մասը գտնվում էր պարսից իշխանության տակ մյուս մասը բյուզանդական:

Ոմանք խոսում էին ոմանք լսում մի քանիսն էլ մերթընդմերթ միջամտում:

Երկու ամիս առաջ այդ խցերից մեկում Ավետիքն էր մնացել մյուսում Վարդգեսը:

Բոլորը քնել էին իսկ Պետրոսը ոչ: Նրա սրտում ցավ կար ուղեղում մեզ-մշուշ:

Լռվա ձորում անտառ կա վայրի վայրի անտառում մութ կա

սնկաբույր Սնկաբույր մուժուն ծառեր վիթխարի Ու ծառերի տակ վճիտ մի աղբյուր:

Իմ կնունքին երկինքը ժամ արևը ջահ սրբազան Ծիածանը նարոտ եղավ ամենքի սերն ավազան Սարը եղավ կնքահայրս ցողը մյուռոն կենսավետ ու կնքողս նա ինքն եղավ ու սահմանեց ինձ պոետ:

Ծաղկավոռու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք էր թվում աշխարհը ծիրանագույն բուրաստան:

Ֆետրե գլխարկով մարդը տետրի նոր էջի վրա նկարեց պարսպի մի մասը պարսպի ոտների տակ ալպիական մանուշակներ:

Հողին արևն է գեղեցկացնում մարդուն աշխատանքը:

Շունը շապիկ է հագել կատուն վարտիք:

Սովածը հաց է տեսնում երազում ծարավը ջուր:

Լեզու կա գերող է լեզու կա խայթող:

Խելոքին մեկ անխելքին հազար ու մեկ:

Որքան վայելչագեղությունն է սազում մարմնին նույնքան խորիմաստությունը մտքին:

Աղքատը հացի է կարոտ հարուստը ամեն բանի:

Վարժություններ հոմանիշներից, հականիշներից, համանուններից

Վարժություն 1. Գրել տրված բառերին մեկ հոմանիշ:

ա) թավ, հորդ, բոկոտն, սրտատրոփ, կոհակ, շղարշ, նզովք, շանթ, թիրախ, անհեթեթ, դեռատի, անտերունչ, ախտ, շողոքորթ, աղտ, շրջմոլիկ, ունայնություն, ցնծալ, երկչոտ, ոստյուն, ստեպ, ստեպ-ստեպ, պատգամ, գայթել, անգայթ, քանքար, հռետոր, խոհածին, անծուկ, խոնջանք, սեթևեթել:

բ) շնդալից, տարագիր, խամաճիկ, աղավաղել, անպատշաճ, անվրեպ, անքակտելի, բոթ, գիրգ, գաղջ, գեղանի, գերեվարել, գլխահակ, դաշույն, դրվատել, մեծատուն, ջեննաթ, շեղջ, ժահր, խոլական, ժանոտ, նախճիր, ելուզակ, եսամուլ, զարտուղի, զերդ, ըմպել, ընծայել, ընծյուղ, կարկանդակ, թռչուն, մանուկ:

Վարժություն 2. Գրել տրված բառերին երկու հոմանիշ:

ա) մլար, որոգայթ, նողկալի, սրընթաց, աճապարել, պաճուճանք, բանբեր, տարտարոս, անդորր, ծպտյալ, մելամաղձիկ, ոխ, ավյուն, ժրաջան, մոլի, ցնծալ, պճնվել, զղջալ, արտևանունք, անարգել, հողմ, հոգեզմայլ, սթափվել, անպարտ, ցասուն, անակնկալ, սուրալ, ակնածանք, քինախնդիր, տառապել, գիրթ, հապաղել:

բ) տոկալ, կենարար, հեզ, գամվել, ուրույն, հոծ, ամեհի, անդրդվելի, անքթիթ, արահետ, դյուրահավատ, բալասան, լլկել, երևելի, երերուն, երփներանգ, զեխ, զմայլվել, զուգս, ընթռչխնել, ընդարմանալ, թերահավատ, թյուր, ի դերև, իսպառ, իրավացի, իրարանցուն, խաբկանք, խուճապ, ձի:

Վարժություն 3. Գրել տրված բառերին երեք հոմանիշ :

ա) տվայտանք, ապաքինվել, ոսոխ, անաղարտ, շամանդաղ, վայրագ, սարսափ, խարտյաշ, հուժկու, տարակուսել, կքել, պարթև, նեցուկ, ռանչպար, արյունարբու, գռեհիկ, դյուրաբեկ:

բ) բիրտ, խոլ, կերտել, անեղծ, սրտառուչ, գինարբուք, արբշիռ, գառամ, ընչաքաղց, իրավ, մագ, դարձյալ, արև, երևի, հայրենիք, երագ, թագավոր, քնել, խմել:

Վարժություն 4. Գրել տրված բառերին չորս հոմանիշ :

խորհել, հար, խանդաղատանք, ամոքել, հյուծված, փափագ, անձկալի, ողորմելի, անողորբաբար, ապարդյուն, խինդ, ուշիմ, անեանալ, պերճ, կապույտ, խիզախ, անդուլ, աչալուրջ, դժխեմ, իղձ, տխուր, հասկանալ, գող, ուրախանալ, դժբախտ, թշնամի, քամի, ջարդ, բարկանալ

Վարժություն 5. Տրված բառակապակցությունների իմաստն արտահայտել մեկական հոմանիշ բառով:

ա) թև տալ, ուշքի գալ, ամոթանք տալ, ընծա տալ, միտք անել, լեզու գտնել, հոգոց հանել, փակագծերը բացել, հոգի տալ, սիրտ առնել, սիրտն առնել, սիրտ տալ, հոգին տալ, աչքին ընկնել, աչքի ընկնել, գլուխ բերել, գլխի ընկնել, գլուխ տալ, գլուխ տանել, սիրտն առնել, միտքն ընկնել

բ) մտքից ընկնել, միտք անել, մտքերի մեջ ընկնել, միտն ընկնել, միտքը բերել, գլուխը կախել, լաց լինել, ձայնը կտրել, խոսքը կտրել, ականջ դնել, ոտքերն ընկնել, ձեռք բերել, ձեռք մեկնել, քար կտրել, անց կենալ, տանջահար անել, բաց անել, թույլ տալ, խորասույզ լինել, ուշքից գնալ, ձեռք առնել:

Վարժություն 6. Գրել տրված արևմտահայերեն բառերի արևելահայերեն հոմանիշները:

ա) աղջնակ, աղվոր, հեռատեսիլ, ակռա, մանչ, քով, ճերմակ, կարգվել, էրիկ, գոցել, հավկիթ, քարյուղ, խածնել, սառնամույշ, լմնցավ, աղեկ, յուր, ասիկա, անիկա, երթալ

բ) հեռաձայն, ասանկ, ճերմակ, ատիկա, գամ, հոս, հոն, կանուխ, գեշ, անդին, կաղանդ, պաղ, մելան, պագ, էրիկ, սմբուկ, դրացի, պզտիկ:

Վարժություն 7. Բացատրել տրված բառերի իմաստը և յուրաքանչյուրով կազմել մեկական նախադասություն:

մազ, հեր, վարս, ծամ, աղվամազ, ձար, ստև, խոզան, այծյա, բուրդ//ասր//զգաթ//գեղմ:

Վարժություն 8. Գույն արտահայտող տրված բառերով կազմել հոմանիշների շարքեր:

ճերմակ, մոխրագույն, շեկ, լաջվարդ, բոսոր, թուխ, մաղոշիկ, դեղձան, զմրուխտագույն, արնագույն, կաթնագույն, երփներանգ, գորշ,

ոսկեգույն, մավի, դարչնագույն, գույնզգույն, սրճագույն, ալ, ծավի, բիլ, դեղին, կանաչ, լուրթ, կարմիր, շագանակագույն, սպիտակ, վարդագույն, գունագեղ, սև, շառագույն, կանաչ, լագուր:

Վարժություն 9. Գրել տրված բառերի հոմանիշները:

մազ, դեմք, աչք, ականջ, այտ, շրթունք, ատամ, բեղ, ծնոտ, վիզ, կուրծք, բռունցք, ազդր, կրունկ, ոտնատակ, փոր, մեջք, անութ, քիմք, բերան, ձեռք, հետույք:

Վարժություն 10. Տրված բառերը և բառակապակցությունները ո՞ր բառի զգայական, վերաբերմունքային երանգ արտահայտող հոմանիշներն են:

գնալ ի վերին Երուսաղեմ, ոչ ևս է, արևը խավարել, հոգվոց հանգուցելոց եղավ, սատկեց, գյոռը իջավ, հոգին ավանդեց, վախճանվեց, լույս գերեզման իջավ, գնաց խառնվեց հարյուր տարվա մեռելներին, հոգին տվեց, շունչը փչեց, մահկանացուն կնքեց, նալերը տնկեց, շունչը տալ, շունչը փչել, աշխարհից հեռանալ:

Վարժություն 11. Գրել ուտել, խմել, երկյուղել բառերի այնպիսի հոմանիշներ, որոնք զգայական, վերաբերմունքային երանգ են արտահայտում (նախորդ վարժության հակառակը):

Վարժություն 12. Տրված բառերով կազմել անձերին արտաքուստ բնութագրող հոմանշային շարքեր:

գեղեցիկ, գրավիչ, տգեղ, անհաճ, գաճաճ, գեր, միհար, կռնատ, սիրուն, ոյութիչ, տգեղադեմ, այլանդակ, թզուկ, պարարտ, վտիտ, անթև, չքնաղ, հրապուրիչ, կոպտադեմ, տձև, կարճահասակ, չաղ, նվազ, անձեռն, չնաշխարհիկ, հմայիչ, կոպտերես, անճոռնի, սիրունատես, կարճլիկ, մսեղ, ցամաք, թևատ, առինքնող, սիրունադեմ:

Վարժություն 13. Տրված բառերով կազմել անձերին ներքուստ բնութագրող հոմանշային շարքեր:

քաջ, վախկոտ, ուժեղ, թույլ, համեստ, մեծամիտ, հավատարիմ, անհավատարիմ, արի, երկչոտ, կորովի, անզոր, պարկեշտ, գոռոզ, վստահելի, անվստահելի, կտրիճ, վեհերոտ, զորեղ, անուժ, առաքինի, հպարտ, անկեղծ, դավաճան, խիզախ, անարի, հզոր, անկարող, հեզ, սնապարծ, անդավաճան, խարդախ, աներկյուղ, թուլամորթ, տոկուն, տկար, խոնարհ, սնափառ, մտերիմ, տիրադրուժ, արիասիրտ, մորթա-

պաշտ, դիմացկուն, անարի, հնազանդ, ինքնահավան, անվեհեր, պատվավոր, պարծենկոտ, քաջակորով:

Վարժություն 14. Տրված հիմնաբառերով կազմել մտածական բայերի հոմանշային շարքեր:

մտածել, խորհել, հիշել, մոռանալ,

Վարժություն 15. Տրված հիմնաբառերով կազմել զգացական բայերի հոմանշային շարքեր:

ուրախանալ, տխրել, վշտանալ, լալ, սիրել,ատել:

Վարժություն 16. Կազմել բառերի հոմանշային շարքեր, որոնց անդամները արտահայտեն գործողության, երևույթի ուժգնության տարբեր աստիճաններ:

օրինակ` խնդրել-աղաչել-աղերսել- պաղատել- ուղբերն ընկնել:

Վարժություն 17. Կազմել բառերի հոմանշային շարքեր, որոնց անդամները արտահայտեն իմաստներով խաչաձևվող հասկացություններ:

օրինակ` գրող, վիպասան, դրամատուրգ, նովելիստ, բանաստեղծ, հեքիաթագիր...:

Վարժություն 18. Կազմել բառերի հոմանշային շարքեր, որոնց անդամներն արտահայտեն որակական հատկանիշների աստիճանավորումներ:

օրինակ` գեղեցիկ, չքնաղ, աննման...:

Վարժություն 19. Կազմել բառերի հոմանշային շարքեր, որոնց անդամներն արտահայտեն առարկաների տեսակային տարբերություններ:

օրինակ` եղնիկ, վիթ, կխտար, պախրա...:

Վարժություն 20. Տրված բառերով կազմել հոմանիշների տասը զույգ:

ա) գավաթ, դրասանգ, անդուլ, գոմ, գավիթ, անրջել, անխառն, բռունցք, աղճատել, ակութ, երազել, անդադար, ըմպանակ, նախասրահ, փարախ, ծաղկաշղթա, կռուփ, աղավաղել, զտարյուն, օջախ

բ) տենդ, նախճիր, մծույգ, նստվածք, անգո, թել, անհողդողդ,

գոտեպնդել, հենակ, առինքնել, երիվար, անհրակական, դերձան, աներեր, անթացուպ, քաջալերել, եղեռն, թովել, նրուր, դողերոցք

զ) դաջել, հողակոշտ, բեղուն, արբեցնող, տարակուսել, զօծել, գիստ, թագուհի, զոհասեղան, կատարածու, բագին, գուղծ, դրոշմել, պատել, զգլխիչ, ագիր, դշխո, երկմտել, զգիր, արգասավոր

ը) բնօրրան, այծ, հրճվել, իղծ, սփոփել, հառնել, երաշխիք, քավոթյուն, անգայթ, կարկառուն, բերկրել, անվանի, ամոքել, նոխագ, հայրենիք, առհավատչյա, բարձրանալ, բաղձանք, ասպաշխարանք, անսայթաք

ե) ակնածել, ծավի, աչալուրջ, ալևոր, ասպատակել, ծաղրել, պարկեշտ, ամբարտավան, ատոմ, անեծք, հարգել, արշավել, հեզնել, նզովք, հյուլե, առաքինի, զառամյալ, բիլ, զգոն, մեծամիտ

զ) գավազան, փոս, գորով, երկմտել, ըմբոստանալ, խոկալ, մատղաշ, լկտի, թանձր, հինավուրց, վիրապ, խանդաղատանք, գայիսոն, կասկածել, վաղնջական, խիտ, լպիրշ, դեռահաս, խորիել, ընդվզել

է) պախուրց, եղջերու, նախրապան, ճարտասան, արարիչ, խեղաթյուրել, գովել, խորշոմել, հիրավի, հոտնկայս, աղճատել, դրվատել, կնճռոտվել, իսկապես, կանգնած, սանձ, ստեղծող, հռետոր, հոտաղ, պախրա

ը) կտրուկ, մուլի, անվեհեր, սիրալիր, կեռման, ուտիճ, կանթ, փեշ, շտեմարան, գուլ, ցեց, ոլորան, ունկ, բարեհաճ, խիզախ, քղանցք, գիրթ, գաղջ, ամբար, կատաղի

թ) անագորույն, մատղաշ, թառանչ, խռչակ, շիվ, պղպեղ, թիրախ, ընչագուրկ, ընչաքաղց, անաչառ, կոկորդ, տաքդեղ, թշվառ, արդարամիտ, ոստ, դժնյա, դալար, ագահ, նշանակետ, հառաչ

ժ) պանդուխտ, նահատակ, շինական, պատուհաս, վարկաբեկել, ծաղկել, շտապել, բեղ, շղարշ, հարդ, պատվագրկել, քող, փթթել, աճապարել, ընչացք, դարման, զոհ, գեղջուկ, փորձանք, վտարանդի

ծա) լուսատտիկ, շաղախ, նողկալ, անհիշաչար, հանրաճանաչ, պերճ, կամակոր, հերյուրել, փուչ, զեխ, քմահաճ, կայծոռիկ, ներողամիտ, ունայն, գարշել, խյուս, զրախոսել, շքեղաշուք, ականավոր, արբշիռ:

Վարժություն 21. Տրված բառերով կազմել հոմանիշների տասը եռյակ:

ա) ռիսակալ, վեհապանձ, անպատկառ, դժգույն, ալեգարդ, ազնվագարմ, խաբեբա, ունևոր, որկրամուլ, հաղթանդամ, հպարտ, հիշաչար, նենգ, մարմնեղ, դալուկ, շատակեր, լլտի, սեգ, ծյունագես, քաջագուն, խարդախ, անկուշտ, թիկնեղ, բարձրատոհմիկ, ճերմակահեր, գունատ, վեհապանձ, քինոտ, անզգամ, սեգ

բ) չքավոր, քծնող, շռայլ, խելագար, կծծի, անշնորհակալ, երևակայական, աղեխարշ, սևեռուն, անխտոր, աղքատ, ժլատ, խենթ, դառնակսկիծ, երախտամոռ, քուռ, ձեռնբաց, անիրական, անքթիթ, անվրեպ, ընչազուրկ, շողոքորթ, զծուծ, ապերախտ, առատածեռն, գիժ, մտացածին, սրտակեղեք, ակնդետ, անշեղ

գ) թաքցնել, մասնատել, ներբողել, նախատել, թախանձել, օգնել, անզգայանալ, գունատվել, սահմռկել, փութալ, քողարկել, պաղատել, գովաբանել, հանդիմանել, պառակտել, աջակցել, թմրել, սփրթնել, ահաբեկվել, շտապել, սքողել, ջլատել, փառաբանել, այպանել, հայցել, օժանդակել, ընդարմանալ, դալկանալ, սարսափել, աճապարել

դ) կշտամբել, լավացնել, սողոսկել, պրպտել, ծանակել, լլկել, մգդակել, կոկել, պղծել, ստույգ, դատափետել, կարել, աներկբայելի, դարմանել, կեղտոտել, տանջել, ապականել, որոնել, ամոքել, այպանել, հեգնել, չարչարել, շուլալել, հղկել, սպրդել, հավաստի, ողորկել, խցկվել, փնտրել:

Վարժություն 22. Տրված հոմանիշներով կազմել բառակապակցություններ:

- ա) սեգ, հպարտ, վեհ, բարձր, վես, խրոխտ
- բ) վճիտ, պարզ, հստակ, մաքուր ականակիտ, անբասիր
- գ) պերճ, շքեղ, ճոխ, զարդարուն, հարուստ, փարթամ
- դ) խիզախ, քաջ, համարձակ, անվախ, կտրիճ, առնասիրտ:

Վարժություն 23. Տրված հոմանիշներով կազմել նախադասություններ:

- ա) խորհել, խոկալ, միտք անել, մտորել
- բ) անոքել, մխիթարել, սփոփել, մեղմել, ապաքինել, փարատել
- գ) ջլատել, ուժագրկել, թուլացնել, պառակտել, մասերի բաժանել
- դ) մտնել, ներխուժել, խցկվել, սողոսկել, սպրդել:

Վարժություն 24. Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:

- 1
ա) Երբբողել, գովաբանել, բևեռել, փառաբանել
բ) ջլատել, ակոսել, մասնատել, պառակտել
գ) նախատել, պախարակել, հանդիմանել, կշտամբել
դ) քողարկել, թաքցնել, սքողել, խճճել
- 2
ա) ազնիվ, անկեղծ, շիտակ, զուտ
բ) խարտյաշ, դեղձան, դեղնաթույր, խաժ
գ) աստանդական, թափառական, պանդուխտ, նժդեհ
դ) աչալուրջ, ուշադիր, ինքնավստահ, զգաստամիտ
- 3
ա) առատածեռն, շռայլ, ընչաքաղց, ձեռնբաց
բ) ըմբոշխնել, ճաշակել, ճարակել, վայելել
գ) անծայրածիր, վաղնջական, հնօրյա, հինավուրց
դ) անսահման, անեզր, անծայր, անհուն
- 4
ա) անհուն, անվերջ, անվարան, անպարփակ
բ) լավատեղյակ, գիտակ, բանհմաց, իրազեկ
գ) վայրագ, մոլեգին, փառամոլ, կատաղի
դ) նրբանկատ, կարեկից, սրտացավ, գթասիրտ
- 5
ա) սնապարծ, մեծամիտ, վես, գոռոզ
բ) ամբարտավան, մեծամիտ, ինքնահավան, պատվարժան
գ) թախանձել, հայցել, պաղատել, փղծկալ
դ) լկտի, անպատկառ, անզգամ, լպիրջ

Վարժություն 25. Հետևյալ բառերը խմբավորել ըստ խոսքիմասային պատկանելության և գրել դրանց հականիշները:

մաքուր, համեստ, արտաշնչել, ազնվաբար, բարիք, թշնամական, բարձրանալ, գիտակցաբար, լավամարդ, մտավոր, հարստանալ, արտաքուստ, աստառ, մեծահոգի, սիրել, երեկ, գագաթ, արտաքին, գալ, առավոտյան, հատակ, բարենպաստ, գովել, վաղ, հյուսիս, զորեղ, ժխտել, նախ, երիտասարդություն, մատչելի, ազդել, հաճախ:

Վարժություն 26. Գրել երկուական բառ, որոնց հականիշները կազմվեն տրված նախածանցների միջոցով:

ան, ապ, դժ, տ, չ, հակ, թեր, ներ, տար:

Վարժություն 27. Գրել տասը բաղադրյալ բառ, որոնց հականիշը կազմվի առաջին բաղադրիչի փոփոխությամբ:
օրինակ՝ արագաշարժ-դանդաղաշարժ

Վարժություն 28. Գրել տասը ածական, որոնց հականիշը տարարմատ է:
օրինակ՝ հին-նոր

Վարժություն 29. Գրել տասը ածական, որոնց հականիշը նույնարմատ կամ համարմատ է:
օրինակ՝ հարթ-անհարթ

Վարժություն 30. Գրել տրված բառերի հականիշները :
ա) երեկ, առավոտ, հարձակում, համակրանք, համասեռ, ներշնչել, թույն, գերակատարել, համաձայնություն, բարություն, մեղմորեն, բարձրադիր, դյուրամարս, միակողմանի, ականապատ, մարդամոտ, երախտագետ, թանձր, ուղղահայց, գովեստ, թերի, կամավոր, հաճախակի, միօրինակ, նախաբան, հնաձև,
բ) գերակատարել, կնասեր, համակրանք, ազգասեր, գնորդ, տեր, դալար, կանխիկ, բազմատեսակ, արական, առաջադեմ, արևելք, հյուսիս, ազգային, օրինավոր, երջանիկ, գլխիվայր, առնելիք, շատություն, հաղորդիչ, ժխտում, անցյալ, արշալույս, ելակետ, կենտրոնանալ, կողմնորոշվել, ներմղել, արտաքուստ, հաճախ, նախապես, միշտ, հոգուտ:

Վարժություն 31. Գրել բառեր հետևյալ իմաստային դրսևորումներով (տարածական, ժամանակային, չափ ու քանակ, ձև ու ծավալ, մի բան անող-կատարող, ֆիզիկական կամ բարոյական հատկանիշ) և դրանց հականիշները:

Վարժություն 32. Գրել առած-ասացվածքներ, բառախաղեր, ուր գործածված լինեն հականիշներ:
օրինակ՝ Մինչև չգա ետինը, չի հիշվի առաջինը:

Վարժություն 33. Արտ-ներ, ստոր-վեր, գեր-թեր նախածանցներով կազմել հականիշ զույգեր:

Վարժություն 34. Գրել տրված բառերի նույնարմատ և տարարմատ հականիշները:

արդար, կարգապահ, երջանիկ, մաքուր, արի, կայուն, ուրախ, գորեղ, շարժական, հարազատ, վախկոտ:

Վարժություն 35. Տրված բառերով կազմել հականիշների տասը զույգ:

ա) բիրտ, տարանջատել, ծանրաքայլ, պոկվել, թավ, լիցքավորել, ժուժկալ, նստակյաց, վեհանձն, շողակրատ, միավորել, քնքուշ, կառչել, թեթևասահ, պարպել, նոսր, անգուսպ, թափառական, քչախոս, սինլքոր

բ) զառամյալ, գարշահոտ, խոսուն, անպաճույճ, փորձառու, արտաքսել, վաստակել, մունջ, հաստատուն, դեռատի, ծավալուն, հյուրընկալ, բուրավետ, զարդարուն, անվարժ, սեղմ, իրագել, վատնել, անտեղյակ, հերքում

գ) ջանասեր, բացահայտ, երբեք, գոց, դրվատել, փթթել, ծուլ, անգոր, չոր, ուժեղ, նենգ, գեր, կայուն, վատաբանել, խոնավ, միշտ, վտիտ, երերուն, բաց, թոշնել

դ) առատաձեռն, անկարող, մշտնջենական, մարդատյաց, հեղիեղուկ, փոքրոգի, օտար, տարանջատ, յուրային, անպտուղ, ունակ, գծուծ, անցողիկ, մարդասեր, արգասավոր, կայուն, վեհանձն, բանիմաց, միաբան, անտեղյակ

ե) սքողված, աշխարհիկ, ստերջ, երկնասլաց, խոչընդոտել, գժտվել, հերքել, վատնել, պախարակել, անթաքույց, բեղմնավոր, ապացուցել, նպաստել, գովաբանել, կուտակել, հաշտվել, գետնամած, անջրդի, հոգևոր, ոռոգելի:

Վարժություն 36. Բացատրել առած-ասացվածքների իմաստը, լրացնել բաց թողնված բառը ընդգծված բառի հականիշով:

Ամառը որ պառկես հովերը, կսատկեն կովերը:

Այսօրվա մի *կանխիկը* երկու լավ է:

Անբանը հաց ուտելիս *առողջ* է, աշխատելիս`..... :

Անպտուղ ծառը կկտրեն, ծառին քար կգցեն:

Աշխատանքը *սև* է, հացն` :

Աշխարհի *շինողն* ու լեզուն է:

Աջով տուր, որ վերցնես:

Բարեկամ *կորցնելը հեշտ* է, է :
Բարին որ չլինի, աշխարհը կքանդի:
Գիշերը գողություն է անում, «Տեր ողորմյա» է ասում:
Գնա մեռի, սիրեմ:
 Գործը վաղվան *մնաց*, իմացիր կորավ :
Դառնություն չճաշակած՝ արժեքը չես հասկանա:
Դուրսը քահանա, սատանա:
 Եղիր *գիտունին* գերի, մի լինիր սիրելի:
Իր համար քնում, համար երազ է տեսնում:
 Լավ է կանգնած *մեռնել*, քան ծնկաչոք :
Կուշտը մանր կբրդի:
 Հագուստի *նորմ* է լավ, ընկերոջ՝ :
Հայալ մազը չի կտրվի, գերանը կկտրվի:
Հաստ ու մի գին է, վայ բարակ մանողին:
 Հողը *լավին* էլ է ընդունում, էլ:
 Մարդն իր տան և *ծառան* է, և :
 Մարդու միտքը *երկար* է, կյանքը :
 Մեկ *ամուսնացողն* է փոշմանել, մեկ :
 Մինչև չգա *հետինը*, չի հիշվի ... :
Մտտիկ հարևանը լավ է, քան ... բարեկամը:
 Մորուք բերելու *գնաց*, բեղը կտրած ետ ... :
 Շատ մի *սիրի* ... կա, շատ *մի ատի*, ... կա:
 Չկա *չարիք* առանց ... :
Սև հավն էլ է ... ձու ածում:
Տերովին տերն է պահել, ... գելն է կերել:
 Ուղտը *մտտիկ* է արածում, բայց ... է տեսնում:
 Օձի կծածը *կլավանա*, լեզվի կծածը ... :
 Օձն իր շապիկը *կփոխի*, բնավորությունը ... :

Վարժություն 37. Ձևով նույն, իմաստով տարբեր (համանուն) բառերով կազմել մեկական նախադասություն:

ա) բազուկ, անարգել, անձուկ, անել, ժամ, ակ, բութ, վարել, գունդ, դաս, մեկնել, եղանակ, աղոտ, շրջել, այր, կետ, բարակ, տոն, դող, գուլ, լալ, դարման, համար, դատել

բ) զատիկ, խոզուկ, հանդերձ, կար, վայրի, աներ, արի, կրի, կարի, այրի, հրի, վագի, կաղին, անցավ, աղային, տալ, խնամի, վանեցին, սիրելիս, նետի, առած, արծակ, բացի, գամ, ինձ

գ) ափ, գազ, բութ, թաղ, մարտ, անհատ, գազել, քանոն, բարդ, թուլցիկ, կիսել, շփոթ, փոկ, բալ, լափ, հանգ, հոն, թուռ, շահ, փոր, վագ

կռուճկ, ցան, աղոտ, փող, լուծել

դ) անթառամ, սուր, ջրածին, կեր, հոր, կար, ոսկրացավ, ածել, աղի, ամեն, աներ, անհաս, ատլաս, ավել, արոր, բարձի, բոժոժ, բուն, գամ, գոտի, դաս, դեղին, եղան, զառ, թառ

ե) ժողովում, կապ, կարող, կետ, կնքել, կտոր, կուռ, հոտ, ճակատ, մաղում, մաշկի, մատաղ, մեկնեց, միալար, մկան, նոթեր, շեն, շրջապատում, շրջել, որդի, չստեր, քոկ, սեր, վրան, ուսել, ամեն:

Վարժություն 38. Տրված բառերը խմբավորել ըստ համանունական արմատների բառիմաստների:

1. գնդապետ, հողագունդ, փոխգնդապետ, գնդասեղ, ձնագունդ, երկրագունդ, զորագունդ, գնդակ

2. հարկատու, երկհարկանի, ցածրահարկ, հարկավճար, եռահարկ, հարկահավաք, հարկաբաժին, եկամտահարկ, շահութահարկ, բարձրահարկ

3. հայրենասեր, սերուցք, ազգասեր, թթվասեր, սիրահոժար, սերակալել, սիրել,

4. քարաղ, աղեկտուր, աղակալել, աղաշատ, աղեստամոքսային, կույրաղի

5. հասուն, երկնահաս, վաղահաս, վերահաս, ուշահաս, անհասանելի, տհաս, չափահաս, հասանելիք, անհաս:

Վարժություններ դարձվածաբանությունից

Վարժություն 1. Տրված դարձվածքների իմաստն արտահայտել մեկ բառով:

ա) լեզուն կծել, լուն ուղտ դարձնել, խաթրը առնել, խաթրին դիպչել, խելքահան անել, մատի փաթաթան դարձնել, մեջք մեջքի տակ, մկան ծակին 1000 թուման տալ, շուն ու կատու դառնալ, ոտքի տակ ընկնել, խելքը գլխին, խելք խելքի տալ, խոսք տանող-բերող, ծանրութեթև անել, կյանքի ու մահու խնդիր, կորած-մոլորած, կրակի կտոր, հոնքերը կիտել, ձայն բարբառո հանապատի, ձեռքերը ծալած նստել

բ) ականջի հետևը գցել, աղ ու հացով, անդանակ մորթել, աչքերը բաց մնալ, աչքի գրող դառնալ, անուն դնել, ատամները հաշվել, բանը բանից անցնել, գլխին նստել, գլուխ հանել, գրպանում մկներ խաղալ, երես թեքել, քիթը կախել, երկու քարի արանքում լինել, ընկած-ելած, թևեր առնել, թոկից փախած, թրջված հավ, լեզու դարձնել, Աստծու կրակ

գ) ականջ դնել, ալարը գալ, անկողին ընկնել, ահ ու դողի մեջ ընկնել, աշխարհ գալ, աշխարհից հեռանալ, աշխարհ տեսնել, աշխարհքով մին լինել, աչքերը խփել, աչքերը չռել, ապրած կենաս, գետինը մտնել, գլխի ընկնել, գելի գլխին Ավետարան կարդալ, գլխին վայ տալ, գլուխը կորցնել, դատարկ ձեռքով, դարան մտնել, դողը սիրտն ընկնել

դ) հոգին դուրս գալ, հոգոց քաշել, հոնքերը կիտել, ձեռ ու ոտ ընկնել, ձեռքը հալալ, ձեռք մեկնել, ճամփան պահել, մատը կծել, մարդի գնալ, միտը ընկնել, մտքում դնել, ոտքերն ընկնել, պոչը քաշել, սիրտ անել, սիրտը լցվել, սիրտը կոտորվել, սիրտ տալ, սիրտը մղկտալ, սիրտը պինդ պահել, սուր ճոճել, քարվան կտորոջ, քիթը տնկել, քոռ ու փուչ անել, օրը սև անել, խոսքը մեկ անել, խոսքը կտրել, կրակ ու պատիժ:

Վարժություն 2. Գրել տրված դարձվածքներին հոմանիշ մեկական դարձվածք:

ա) բերան ծռել, կյանքից հեռանալ, ականջի հետևը գցել, մոր կոճակ կտրող, մեկի ջրաղացին ջուր լցնել

բ) ծալը պակաս, դարմանի տակի ջուր, քարը քարին չթողնել, անարգանքի սյունին գամել, գլուխը քորելու ժամանակ չունենալ

գ) մատի փաթաթան դարձնել, կրակի կտոր, անդանակ մորթել,

խոսքի տակ չմնալ, ահ ու դողի մեջ ընկնել

դ) աչքերը չռել, ոտքերն ընկնել, ապրած կենաս, աչքի գրող դառնալ, դողը սիրտն ընկնել, կորած-մոլորած:

***Վարժություն 2. Գրել տրված դարձվածքներին հակա-
նիշ մեկական դարձվածք:***

ա) տունդ շինվի, մի մատնոց թան չարժի, ձվից նոր դուրս ելած, կրակի գին, յուղը թափես-կհավաքես

բ) խելքը գլուխը հավաքել, աստծո գառ, լեզվի կապերն արձակել, գործը գլուխ բերել, ծալը պակաս

գ) առյուծ կտրել, հոլի պես պտտվել, մոր կաթի պես հալալ անել, ունքամեջը բացվել, աչքի տակ պահել

դ) աչքի գրող, աշխարհ գալ, սիրտը պինդ, շուն ու կատու դառնալ, գրպանում մկներ խաղալ:

Վարժություն 3. Կազմել դարձվածքներ գոյական+գոյական, գոյական+բայ, գոյական+ածական, գոյական+դերբայ կադապարներով յուրաքանչյուրից երկուական:

Վարժություն 4. Բացատրել հետևյալ դարձվածքների իմաստն ու առաջացումը, դրանցով կազմել նախադասություններ:

ա) ավգյան ախոռներ, քիլլեսյան գարշապար, գորոյան հանգույց, դամոկլեսյան սուր, դանայան տակառ, Արիադնայի թել, կռվախնձոր, Յերոստրատի փառք, մարաթոնյան վազք, արգելված պտուղ

բ) Պենելոպեի աշխատանք, սիզիֆյան աշխատանք, տրոյական ձի, հաննիբալյան երդում, ռուբիկոնն անցնել, ֆորտունայի անիվ, աղքատ Ղազարոս, անառակ որդի, բաբելոնյան աշտարակաշինություն, Գողգոթա

գ) եղիցի լույս, երեսուն արծաթ, Կայեն, Յուդայի համբույր, ծայն բարբառո հանապատի, Նոյի տապան, ոչ միայն հացիվ, Սողոմ և Գոմոր, Շամիրամի պարտեզ, կլոր սեղան

դ) վերջին մոհիկանը, լինջի դատաստան, ծագող արևի երկիր, թորգոմյան ազգ, յոթերորդ երկնքում, փառքի զենիթում, Դոն ժուան, ի խորոց սրտի, լավ է կույր աչոք, քան կույր մտոք, ութերորդ հրաշալիք:

Վարժություն 5. Բացատրել աչք բառով կազմված հետևյալ դարձվածքների իմաստը:

աչք ածել, աչքդ լույս, աչք դնել, աչքերը լայն բացել, աչքերը խփել, աչքերը չորս անել, աչքը կտրել, աչքը ճանապարհին, աչքի գրող, աչքի տակ առնել:

Վարժություն 6. Բացատրել գլուխ բառով կազմված տրված դարձվածքների իմաստը:

գլխի խաթա դառնալ, գլխի ճարը տեսնել, գլխի վրա տեղ ունենալ, գլխին անեծք թափել, գելի գլխին ավետարան կարդալ, գլխում միտք ծագել, գլուխ բերել, գլուխը ծեծել, գլուխը կորցնել, գլուխ պահել, գլուխը քարը, գլուխն ազատել:

Վարժություն 7. Բացատրել սիրտ բառով կազմված տրված դարձվածքների իմաստը:

սիրտն ահ ընկնել, սիրտը բացել, սիրտը դող ընկնել, սիրտը կասկած ընկնել, սիրտը կոտրվել, սիրտը հովանալ, սիրտը մղկտալ, սիրտ տալ, սիրտը պինդ պահել, սիրտը սեր ընկնել, սիրտը փուլ գալ, սիրտը քարանալ:

Վարժություն 8. Երեքական դարձվածքային հոմանիշներ գրել տրված բառերի համար:

վախենալ, խնդրել, լռել, տանջվել:

Վարժություն 9. Բացատրել տրված դարձվածքների իմաստները:

ա) աղ ու հացով, անդամակ մորթել, անպոչ գդալ, աշխարհի հետ հաշիվները փակել, աչքերին թոզ փչել, աչքի գրող, աչք-ունքը կիտել, արյունը երակներում եռալ, արյունը երակներում սառչել, բախտավոր աստղի տակ ծնվել

բ) բերանը ջուր առնել, դեմքը թթվեցնել, երկինք հանել, երկու քարի արանքում լինել, էշը ցեխից հանել, ընկած-ելած, թացը չորից ջոկել, թաց տեղ չպառկել, թևեր առնել, թիկունք լինել

գ) թրջված հավ, ինչպես ձուկը ջրում, լեզվից թույն կաթել, լուռ ուղտ դարձնել, խարիխս գցել, խոսքը կտուրը գցել, խոփը քարին դեմ առնել, ծայրը ծայրին հասցնել, ծանրութեթև անել, կրակի կտոր

դ) կրակի վրա յուղ լցնել, հալած յուղի պես, հողին հավասարեցնել, ձեռքերը վճանալ մի կողմ քաշվել, ձեռքը փակ, ձեռքը քարի տակ,

ձվածեղի խաթեր թավի պոչը պաչել, ձվի մեջ մազ փնտրել, ձուկը ծովում բազար անել, մազից կախված լինել

ե) մատը մատին չխփել, մատից հոտ քաշել, մատի փաթաթան դարձնել, մատների արանքով նայել, մեղր ու կարագ դառնալ, մեջք մեջքի տալ, յոթերորդ երկնքում լինել, շունը տիրոջը չճանաչել, շուն ու կատու լինել, ոտքերը գետնից կտրվել

զ) ոտքի տակ ընկնել, ոտքն իր վերմակի չափ մեկնել, պողոս-պետրոս դուրս չգալ, պոչ կպցնել, ջուրը մի առվով չգնալ, վարդագույն երազներ, ուրիշի ապուրին աղ գցել, փորը օձերով լիքը, քարը փեշից թափել, քիթը քարին քսվել:

Վարժություն 10. Գրել կենդանու անուն բաղադրիչներով դարձվածքներ:

արջ, աղվես, առյուծ, ագռավ, գառ, գայլ, շուն, ուղտ, կրիա, ձի, օձ, մուկ, մեղու, էշ, կատու, հավ, կով:

Վարժություն 11. Ո՞ր բնագավառին են վերաբերում հետևյալ դարձվածքները (կրոն, ռազմարվեստ, գյուղատնտեսություն, արվեստ, կենցաղ, բնության երևույթներ, գիտություն, խոհարարություն, կենդանաբանություն, բժշկություն):

ուրիշի ապուրին աղ գցել, շունը տիրոջը չճանաչել, ձուկը ծովում բազար անել, խոփը քարին դեմ առնել, կրակի կտոր, մեղր ու կարագ լինել, արյունը երակներում սառչել, բախտավոր աստղի տակ ծնվել, ձեռքերը լվանալ, էշը ցեխից հանել, հին դարմանը քամուն տալ, անկողին ընկնել, արյունը երակներում եռալ, ջրի ճամփա դարձնել, ջրի երես ելնել, հավասարության մշան դնել, անդամակ մորթել, անպոչ գդալ, հալած յուղի պես ընդունել, թրջված հավ, այբից մինչև ֆե, ընդհանուր հայտարարի գալ, վերջակետ դնել, աղ ու հացով, բերանը բաց, ծանր հրետանի, խարիսխ գցել, թատերաբեմ դարձնել, դարմանի տակի ջուր, աչքերը լայն բացել, ձվածեղի խաթեր թավի պոչը պաչել, գենքերը ցած դնել, կույր աղիք, ծանրության կենտրոն, ձվի մեջ մազ փնտրել, աչքին թոզ փչել, լուն ուղտ դարձնել, ինչպես ձուկը ջրում, վառողը չոր պահել, ականջ դնել, սիրտը քարանալ, գելի գլխին ավետարան կարդալ, աչք դնել

Վարժություն 12. Գրել տրված դարձվածքներին հոմանիշ ածականներ:

<i>ա</i>	<i>բ</i>	<i>գ</i>
խելքը գլխին	ջրի գին	խոսք տանող-բերող
աչքը ծակ	սարի արջ	օձի ծնունդ
կորած-մոլորած	Աստծու կրակ	ճնճղուկի սիրտ
ծեռքից պինդ	ծեռքը հալալ	դարմանի տակի ջուր
կրակի կտոր	քթի մազ	Աստծու գառ
աղ ու հացով	քարվան կտրող	մի մատնոց թանջարժի
քթից թռած	մոր կոճակ կտրող	յուղը թափես-կիավաքես
ընկած-ելած	աչքի սուրմա թոցնող	առյուծ կտրել
թոկից փախած	սատանի ճուտ	աչքը կուշտ
թրջված հալ	ծալը պակաս	հացի կարոտ

Վարժություն 13. Ո՞ր հեղինակի ո՞ր ստեղծագործություններից են ընտրված հետևյալ դարձվածքներն ու արտահայտությունները:

- | | |
|--|--------------------------------|
| 1. մի ծաղկով գարուն | 1. Նոյի ագռավ |
| 2. ձախորդ Փանոս | 2. Կիկոսի մահը |
| 3. անբան Հուռի | 3. պտտվիր, պտտվիր, կարուսել |
| 4. մկների ժողով | 4. կոտրած տաշտակի առաջ կանգնել |
| 5. շուն ու կատու դառնալ | 5. ճառ ասե՞մ, թե՞ զանգ կախեմ |
| 6. ինչքան մտածում եմ, կկուն պիտի կանչի | 6. օրեր են, կմթնեն, անց կկենան |
| 7. Նազարի բախտ | 7. ի խորոց սրտի |
| 8. խելքից պատուհաս | 8. մեռած հոգիներ |

- | | |
|--------------------------------------|-------------------------|
| 9. լինե՞լ, թե՞ չլինել | 9. աչքի սուրմա թռցնող |
| 10. մոր կոճակ կտրող | 10. հացի խնդիր |
| 11. մեծապատիվ մուրացկաններ | 11. անբախտ վաճառականներ |
| 12. երեք մանեթանոց լաց | 12. Նետոյի քարաբաղնիս |
| 13. ամենայն տեղ մահ մի է | 13. տեր Թողիկի դպրոց |
| 14. արգելված պտուղ | 14. անառակ որդի |
| 15. բաբելոնյան
աշտարակաշինություն | 15. Հուդայի համբույր |

Վարժություն 14. Գրել թվական բաղադրիչներով դարձվածքների օրինակներ:

***Վարժություն 15. Գրել գունային բաղադրիչներով դարձվածքներ և վերջինների բառային համարժեքները:
Օրինակ՝ կանաչ-կարմիրը կապել-ամուսնացնել***

Վարժություն 16. Գրել տրված շրջասույթների իմաստն արտահայտող բառը

ա) բիրլիական լեռ, ամենայն հայոց մայրաքաղաք, անապատի նավ, անապատի որդի, անտառի արքա, աշխարհի գարդ, առաջին դեմք, Աստծու ծառա, Աստծու տուն, քարերի երկիր, օդային դարպաս

բ) ավազի օվկիանոս, Արամազդի գոտի, բալզակյան տարիք, բարձունքների տիրակալ, Բաքոսի երկրպագու, գարնան ավետաբեր, Գեղամա գեղեցկուհի, գրքերի գիրք, երեք կրոնների քաղաք, երկիր Նաիրի, տվնջյան լուսատու

գ) Ավարայրի երգիչ, հանճարեղ լռռեցի, անմահ քանաքեռցի, Հայաստանի վերքի երգիչ, առաջին հայ ուսուցիչ, ազատության երգիչ, ամենայն հայոց բանաստեղծ, նորավեպի իշխան, Սկյուտարի սոխակ, հայ երգի Մեսրոպ Մաշտոց, հանճարեղ պատանի, բալթիական մրրկահավ, ծաղրածուն՝ աշունը սրտուն, Հայաստանի սոխակ, հայ օպերայի հայր, հայոց արծիվ, հայրենի գույների վարպետ, գույների կախարդ, Հարդագողի ճամփորդ, մեծ չարչարյալ, Նաիրյան երկրի երգիչ, սև ցելերի սերմնացան, Վասպուրականի արծիվ, Ավարայրի հերոս

դ) տակառում քնող ծերուկ, Օռլեանի կույս, Ֆարսի բլբուլ, ֆուտբոլի արքա, առակագրության Հոմերոս, Տրոյայի երգիչ, երգեհոնի արքա, ծիծաղի արքա, հողմադացների ասպետ, , պղնձե հեծյալ, ջութակի թագավոր

ե) երկնքի աչքեր, թափառող մայրաքաղաքների երկիր, Թորգոմա ազգ, գեղեցիկ սեռ, թույլ սեռ, խաղաղության ավետաբեր, ծագող արևի երկիր, կանաչ ոսկի, սպիտակ ոսկի, սև ոսկի, կապույտ ոսկի, սպիտակ թույն

զ) կյանքի գարուն, կյանքի աշուն, հազար ու մի եկեղեցիների քաղաք, հայոց հավատքի մայրաքաղաք, մառախլապատ Ալբին, Նոյի երկիր, ոսկե բիլազուկ (ապարանջան), ոսկե նեկտար, չորրորդ իշխանություն, պարերի թագուհի, Ռուսաստանի սիրտ:

Բառի ուղիղ և փոխաբերական իմաստ

Վարժություն 1. Հետևյալ բառերը փոխաբերական իմաստով գործածել բառակապակցությունների մեջ:

ա) ապրել, մեծ, արծաթ, ծով, ոսկի, կծու, ծանր, փափուկ
բ) հանգած, կապույտ, ցուրտ, թռիչք, սառը, աշուն, քաղցր, աղ ու հաց

գ) թեթև, կրակ, առողջ, պողպատ, հավվել, փշրվել, փակ, մեջք
դ) ճրագ, փայլել, զմրուխտ, կոտրել, սև, երկաթ, վառվել, ժպիտ:

Վարժություն 2. Տրված նախադասություններում ընդգծել փոխաբերական իմաստով գործածված բառերը:

ա) Գարունն իր հրաշալիքներն էր փռել աշխարհի վրա:

Սուրբ ընկավ, մռայլվեց Ավարայրի դաշտավայրը:

Արդեն արևկող տեղերում զարմացած ու միամիտ նայում էր ուշացած ձնծաղիկը:

Անփորձ գարունը տեղ-տեղ վախով ասեղնագործում էր գետնի կանաչ գորգը:

Բնությունը նայում էր թախծախառն ժպիտով. դեռ նա թույլ էր և դյուրաբեկ:

Ծով են աչքերը Ջավախքի դստեր, Ու կորչում է մարդ նրա հայացքում:

Կապույտ սարերի լանջին նստել էր գյուղը ու ժպտում էր կանաչ այգիներին, սլացիկ բարդիներին:

Փայլում էր մանգաղը, եռում էր գործը, ու ոսկեղեն հունձքը պարզևատրում էր շինականի աշխատանքը:

Լուսնի թախծալի լույսը քարափներից կախվեց ահագին ձորի մթության վրա:

Սուրբ գետնին փարվեց, ոտքը խաղաղվեց, ամեն մարդ յուր սենյակը մտավ:

Օրոր էր ասում աշունն անտառին, Բայց դեռ անտառի քունը չէր տանում:

բ) Գարունը լցվել էր երիտասարդի երակների մեջ:

Հողն անհագ շնչում էր:

Ջայրացած Արաքսը կռվում էր իրեն խեղդող ափերի հետ:

Չորացած տերևները թափում էին քամուց:

Երիտասարդ կեռասենիները խշշում էրն մեղմ քամուց:

Արևը խաղում էր մայրամուտի ամպերի հետ:

Մագաղաթյա ձեռագրերը պատմում են իրենց գլխով անցածը:

Կապույտ ծուխը ձգվում է դեպի վեր և լիզում խոնավ ժայռերը:

Շշուկները մեռան թփերի մեջ:

Ալարկոտ քամին սուլում էր քնաթաթախ:

Ջառամյալ կաղնիները զայրացած կռանում են և նորից շտկվում:

Ծառերը, պատռելով հողի կուրծքը, իրենց արմատները խրում էին ավելի ու ավելի խորը:

Անտառը լուռ ու սրտատրոփ հետևում էր նրանց:

Վարժություն 3. Տրված բառերի ուղիղ և փոխաբերական իմաստներով կազմել երկու նախադասություն:

սև	մեխել	խեղդվել	եռալ	հետապնդել
ջուր	լույս	թույն	փափուկ	գիծ
պեղել	ծաղկել	կարդալ	ծակել	ուտել
կանաչ	թթու	ժպտալ	մաքուր	ճակատ
դրախտ	լռել	կծու	կնիք	գիրկ

Վարժություն 4. Ընդգծել հինգ բառակապակցություն, որոնց առաջին բառը տվյալ դեպքում փոխաբերական իմաստ ունի:

ա) թթու դեմք, կծու արտահայտություն, խաղաղ ծով, քար անտարբերություն, սև կակաչ, միամիտ հայացք, խոր լռություն, վերջին կետ, մտքի խավարում, փայլուն մակերես

բ) սառը ջուր, աշյուծի կաթ, ծանր խոսք, խոր փոս, ձկան ականջ, բախտի խաղ, բաց սիրտ, վերին ատյան, չար աչք, մաքուր թուղթ:

Վարժություն 5. Ոսկի, սիրտ, աչք, երես, գլուխ բառերով կազմել փոխաբերական իմաստ արտահայտող բառակապակցություններ:

Վարժություն 6. Նշել այն բառակապակցությունը, որի մեջ առաջին բաղադրիչը փոխաբերաբար չի գործածված:

ա	բ	գ
կապուտաշյա ձնծաղիկ	հոգնաբեկ մարդ	պատանի գարուն
վարսաթափ ուռի	ծով աչքեր	ծեր անտառ
բյուրեղյա արցունքներ	ոսկե հյուսքեր	ծաղկած բալենի
գանգրահեր տղա	քար անտարբերություն	աղքատ տեղեկություն
ոսկեհեր աշուն	ասեղնահյուս եղյամ	հոգու անապատ

Վարժություն 7. Ընդգծված բառերից ո՞րը փոխաբերական իմաստով գործածված չէ:

ա) Հոգիս աղթնացավ հարավի բույրից, Ինձ է դուրս կանչում զեփյուռը նրա:

բ) Ո՞վ է քնակվում մեր հին հարկի տակ, Ո՞վ է խնկահոտ մեր դուռը բացում:

գ) Օրոր է ասում աշունն անտառին, Բայց դեռ անտառի քունը չի տանում:

դ) Միամիտ չեմ՝ հավատամ քեզ, Տառապանքս փորձ ունի:

ա) Փաթիլները սառած լուսամուտն են քախում:

բ) Կարկաչահոս աղբյուրն այնտեղ թավալում էր մարգարիտ:

գ) Գարուն, ամեն տեղ նոր կյանք ես վառել:

դ) Նայում եմ, մինչև որ անգոր Գլուխս ծնկիդ է քերվում:

Վարժություն 8. Ո՞ր նախադասության մեջ փոխաբերաբար գործածված բառ չկա:

ա) Ծանր նստել է քարափը ձորում...

բ) Իմ մեջ այրվում է մի անհագ կարոտ...

գ) Կածանները ճչում են այնտեղ, Ջրվեժները լռում են...

դ) Ցորենի կանաչ արտի մեջ Առվույտի կապույտ մի ծաղիկ...

Վարժություն 9. Գտնել, թե ամեն տողում փակագծերում նշված բառերից որը փոխաբերական իմաստով կլրացնի տրված բառերին:

ա)

1. ճառագայթ (կիզիչ, ոսկեզօծ, դեղնակարմիր, ջերմացնող)
- 2.
3. դաշտ (հարթ, կանաչ, զմրուխտե, ծաղկաշատ)
- 4.
5. մանուշակ (գեղեցիկ, բուրավետ, թռչնած, համեստ)
- 6.
7. հող (խոնավ, բերրի, տառապած, արգավանդ)
- 8.
9. աչք (կապույտ, խոսուն, անթարթ, խաժ)
- 10.
11. անապատ (անծայրածիր, կիզիչ, հոգու, անհաղթահարելի)
- 12.
13. հեղեղ (կեղտաջրերի, անձրևաջրերի, արցունքների)
- 14.
15. ձեռագիր (մագաղաթյա, նկարազարդ, հին, խոսուն)
- 16.
17. կեռասենի (երիտասարդ, բերքատու, սաղարթաշատ, բարձր)
- 18.
19. անտառ (դարավոր, կանաչ, կենդանաշատ, հուզված)
- 20.

բ)

1. ծաղիկ (բուրավետ, երփներանգ, ժպտուն, կարմիր)
- 2.
3. ամպ (անձրևաբեր, գորշ, հոգնած, ձյունաճերմակ)
- 4.
5. վտակ (լեռնային, ջրառատ, դանդաղահոս, խենթ)
- 6.
7. քամի (տաք, սառը, կատաղած, անապատային)
- 8.
9. կաղնի (սաղարթաշատ, բարձր, ճյուղատարած, ալևոր)
- 10.
11. ձմեռ (դաժան, ցուրտ, ձյունառատ, տաք)
- 12.
13. աղբյուր (սառնորակ, կարկաչահոս, զուլալ, զվարթ)
- 14.

15. աչքեր (գրավիչ, գեղեցիկ, սև, խոսուհ)

16.

17. բերդ (պարսպապատ, քարե, վերանորոգված, ալևոր)

18.

19. արջ (բրդոտ, ծանրաքայլ, վայրի, արու):

20.

Բանավոր խոսքի զարգացմանը նպաստող առաջադրանքներ, վարժություններ և խաղեր

Պատահական չէ, որ դպրոցի վերակառուցման արդի փուլում խոսքի զարգացմանն առանձնահատուկ կարևորություն է տրվում: Խիստ ցավալի երևույթ է այն, որ դպրոցի շրջանավարտների զգալի մասը բանավոր խոսքի մեջ դժվարանում է: Սրա հիմնական պատճառներից մեկը անբավարար ուսուցումն է: Մեր աշակերտների զգալի մասը բավարար չի տիրապետում գրական խոսքին: Սա, իհարկե, առաջին հերթին արտահայտվում է նրանց բառապաշարի աղքատությամբ և գրական լեզվի նորմերից կատարվող շեղումներում: Վերջինս ենթադրում է նաև բարբառային, օտար բառերի և ժարգոնային արտահայտությունների ներթափանցում մեր շատ ու շատ աշակերտների խոսքի մեջ: Դրա համար հենց սկզբից պետք է մաքրել ու հարթել սովորողի խոսքը: Դրան զուգահեռ՝ պետք է նրա մեջ վստահություն, համարձակություն և հավատ ներշնչել, որ ինքը կարող է բանավոր ինքնուրույն հանդես գալ, մտքերը ճիշտ ու կապակցված արտահայտել, խոսքի մեջ տրամաբանական կուռ ու ամբողջական շղթա ստեղծել: Այս նպատակը կարող է իրականանալ միայն այն դեպքում, եթե սովորողի համար հնարավորություններ ստեղծվեն անըմբռնելի վարժվելու և հմտանալու բանավոր խոսքի մեջ: Այդպիսի վարժվածության ու հմտության անհնար է հասնել սոսկ ծրագրով նախատեսված պայմաններում և մեթոդական միօրինակ ձևերի ու եղանակների կիրառմամբ: Սովորողի բանավոր խոսքը զարգացնելու նպատակով լավագույն ուսուցիչը պետք է որոնի և գտնի նաև այլ ուղիներ: Ամենից առաջ այդ նպատակին պետք է ծառայեցնել լեզվական օրենքներն ու օրինաչափությունները: Պետք է ուշադրությամբ լսել աշակերտի խոսքը, անտարբերությամբ չանցնել բանավոր խոսքում նրանց թույլ տված սխալների կողքով, լեզվական նյութի հիմքի վրա բացատրել ու հետևողականորեն ճշտել նրանց բանավոր խոսքի թերությունները, քանի որ ուսուցչի լռությունը աշակերտի կողմից կարող է համարվել համաձայնության, արտաբերված խոսքի ճշտության նշան: Ուսուցիչները ոչ միայն հետևողականորեն պետք է ճշտեն աշակերտների բանավոր խոսքի լեզվաոճական թերությունները, այլև նրանց համար ստեղծեն շատ խոսելու առիթներ ու հնավորություններ՝ այդ «շատախոսությունը» ծառայեցնելով բանավոր խոսքի կազմակերպման զարգացման գործին:

Բանավոր խոսքի մշակույթը բարձրացնելու բազում միջոցներ կան: Անդրադառնանք այդ միջոցներից մի քանիսին.

1. Աշտրկայի ներկայացում - ուսուցիչը աշակերտին տալիս է որևէ առակա ու հրահանգավորում է՝

✓ **Նկարագրիր այն** - ինչ տեսնում ես՝գույնը, ձևը, չափը

- ✓ համեմատիր այն - ինչի է նման, ինչից է տարբեր այն
- ✓ գուզորդիր այն - ինչի մասին է այն ստիպում քեզ մտածել, մտքումդ ինչ է ծագում
- ✓ վերլուծիր այն - պատմիր, թե ինչպես է այն պատրաստված
- ✓ կիրառիր այն - ինչպես կարելի է օգտագործել այն
- ✓ թեր և կողմ փաստարկներ թեր - մի տեսանկյուն ընտրիր քեզ համար և փաստարկներով պատճառաբանիր տեսանկյունդ:

2. Ուղղորդված ընթերցանություն - տեքստը բաժանել հատվածների և յուրաքանչյուր հատվածի ընթերցումից առաջ հարցնել աշակերտներին, թե նրանց կարծիքով ինչ է կատարվելու այս հատվածում:

3. Կանխատեսում - նոր դասի նյութից (մինչև այն անցնելը ընտրել) 5-6 բառ, գրել գրատախտակին: Ասել, որ դրանք վերցված են դասի նյութից: Հրահանգավորել, որ իրենց զույգերի հետ կանխատեսումներ անեն, թե դասի թեման ինչի մասին կարող է լինել և հիմնավորեն իրենց ասածը: Պատասխաններին կարելի է անդրադառնալ մաև դասը ընթերցելուց հետո՝ պարզելու նրանց պատասխանների ճիշտ կամ սխալ լինելը:

4. Բանավոր շարադրանք - մինչև նոր նյութին անցնելը աշակերտներից պահանջել բանավոր շարադրել, թե ինչ գիտեն կամ կուզենային իմանալ տվյալ նյութի մասին:

5. Ստորում նյութի շուրջը - նյութի ընթերցումից հետո աշակերտները պետք է պատասխանեն հետևյալ հարցերին, թե ինչի մասին ստիպեց իրենց մտածել նյութը, որն էր նյութի ամենակարևոր ասելիքը, որն էր նյութի ամենակարևոր նախադասությունը:

6. Կույրը և օգնականը - լսարանը բաժանել զույգերի: Մեկը լինում է կույր, մյուսը՝ ուղեկցող, հետո դերերը փոխվում են: Կույրը ասում է, թե իրեն ուր պիտի տանեն: Փակում են աչքերը: Ուղեկցողը բռնում է կույրի ձեռքը և նկարագրելով արգելքները, որպեսզի կույրը չընկնի, տանում է նրա ուզած տեղը:

7. Ապրումակցում - յուրաքանչյուր մասնակցի տրվում է երկու թուղթ: Մեկի վրա մասնակիցը գրում է, թե ինչու են իրեն սիրում իր շրջապատում, աշխատավայրում և ընկերները, մյուսի վրա գրում է, թե ինչու իրեն չեն սիրում: Հավաքվում է թերթիկները և բաժանվում խառը, որպեսզի մասնակցին չընկնի իր գրածը: Ով ստանում է թերթիկը, նա պետք է կարդա և հիմնավոր բացատրի, թե ինչու են սիրում կամ չսիրում:

րում: Պետք է ասի նաև, թե ինչ պիտի անի, որ բացասական գծերը վերանան:

8. Միայն մի նախադասություն - աշակերտները կանգնում են շրջանաձև և պատմում ուսուցչի առաջարկած վերնագրով մի պատմություն: Յուրաքանչյուրն ասում է ընդամենը մի նախադասություն և ասում այն անձի անունը, ով պետք է ասի այդ պատմության հաջորդ նախադասությունը:

9. Վերջացնել ու կիսատ թողնել նախադասությունը - ամեն զույգ պետք է մի պատմություն պատմի: Խաղում են երկու հոգով: Յուրաքանչյուր մասնակից պետք է վերջացնի ընկերոջ կիսատ թողած նախադասությունը և ասի իր նոր նախադասությունը՝ թողնելով կիսատ:

10. Պատմություն ըստ այբուբենի - մասնակիցները պետք է ստեղծեն մի պատմություն կամ հեքիաթ: Յուրաքանչյուրն ասում է մի նախադասություն՝ այբուբենի հերթական տառով:

11. Պատմություն գրպանից կամ պայուսակից - մասնակիցներից հավաքել որևէ իր, որ կհանեն իրենց պայուսակից կամ գրպանից: Յուրաքանչյուր մասնակից պետք է բացատրի տված առարկայի նշանակությունն իր համար, ինչու ինքն ընտրեց հենց այդ առարկան այլ ոչ մի ուրիշը, ինչ պատմություն է ասոցացվում այդ առարկայի հետ, ինչ կարող է ասել այդ առարկան իր մասին, եթե խոսել կարողանար:

12. Դասախոսություն հանպատրաստից - Լուսչի տված զգացմունք արտահայտող որևէ բառի վերաբերյալ աշակերտը հանպատրաստից կարող է դասախոսություն այդ հասկացության վերաբերյալ:

13. Խնդրի շրջանաձև լուծում - մասնակիցները նստում են շրջանաձև: Յուրաքանչյուր ընտրվում է մի թուղթ, որի վրա ամեն մեկը գրում է իրեն անհանգստացնող մի խնդրի մասին: Երբ բոլորը գրում են իրենց խնդիրները, փոխանցում են թղթերը իրենից աջ գտնվողին: Աջ գտնվողը կարող է գրածը և բանավոր ասում խնդրի լուծման ձևերն ու միջոցները:

14. Թևավոր արտահայտությունների մեկնաբանում - Ինչպես են առաջացել և ինչ են նշանակում հետևյալ թևավոր արտահայտությունները. ավզյան ախոռ, աբիլլեսյան գարշապար, գորոյան հանգույց, դամոկլեսյան սուր, դանայան տակառ, Դիոգենեսի լապտեր, եզոպոսյան լեզու, եվրիկա, լաբիրինթոս և Արիադնայի թել, կովախնձոր, հերկուլես-

յան աշխատանք, Յերոստրատի փառք, մարաթոնյան վագք, ոսկե գեղձ և արգոնավորդներ, պառնաս, Պենելոպեի աշխատանք, սիզիֆյան աշխատանք, տրոյական ձի (հունական դիցաբանությունից) բաժանիր, որ տիրես, բոլոր ճանապարհները տանում են Յոն, եկա, տեսա, հաղթեցի, հաննիբալյան երդում, մարդը մարդուն՝ գայլ, ռուբիկոնն անցնել, ֆորտունայի անիվ (հռոմեական դիցաբանությունից) ակն ընդ ական, աղքատ Ղազարոս, անառակ որդի, բաբելոնյան աշտարակաշինություն, եղիցի լույս, երեսուն արծաթ, զհաց մեր հանապազորդ, Յուդայի համբույր, ձայն բարբառո հանապատի, ձեռքերը լվանալ, Նոյի տապան, ոչ միայն հացիվ, Սողոմոնի դատաստան, սրբություն սրբոց (Յին և նոր կտակարաններից):

15. Խորհուրդ աղջիկներին - տղաներ, ինչ խորհուրդ կտաք աղջիկներին, որ դուր գան ձեզ: Ինչը վայել չէ հայ աղջկան:

16. Խորհուրդ տղաներին - աղջիկներ, ինչ խորհուրդ կտաք տղաներին, որ դուր գան ձեզ: Ինչը վայել չէ հայ տղային:

17. Կենացներ - ելնելով դասանյութի ընձեռած հնարավորությունից՝ առաջարկում եմ ասել դասանյութի թեմային առնչվող կենացներ :

18. Առածի մեկնաբանում - տալ որևէ առած և պահանջել մտածել դրա շուրջը, ստեղծել որևէ պատմություն, այնպիսին, որի բովանդակությունը համապատասխանի մեկ նախադասությամբ արտահայտված այդ առածին:

19. Համառոտել և ընդարձակել - նյութը պատմել համառոտելով և ընդարձակելով:

20. Մեկ նախադասությամբ - մեկ նախադասությամբ ձևակերպել դասանյութի գլխավոր միտքը :

21. Վերարտադրում - չափածո ստեղծագործությունը վերարտադրել արձակ:

Այստեղ մենք ներկայացրինք բանավոր խոսքը զարգացնելու, բանավոր արտահայտվելու ունակությունների զարգացման մի քանի միջոցներ, որոնք, կարծում եմ, կարող են արդյունավետ լինել, եթե խելացիորեն նախապատրաստվեն ու կիրառվեն:

Գրավոր խոսքի զարգացմանը նպաստող առաջադրանքներ, վարժություններ և խաղեր

Գրավոր խոսքը մարդու մտքերն արտայայտող, անցյալը, ներկան ու ապագան շաղկապող կարևորագույն միջոց է, մարդկանց հոգևոր կյանքի պատմությունը:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հայոց լեզվի դասավանդման ընդհանուր համակարգում շատ կարևոր նշանակություն ունի գրավոր խոսքի ուսուցումը, որն ունի իր դժվարություններն ու բարդությունները: Գրավոր խոսքը մի բարդ համակարգ է, որը հնարավոր չէ մեկ-երկու տարում ուսուցանել: Սովորողների գրավոր խոսքի զարգացման գործում վճռական դեր են խաղում ընթերցասիրությունը, գրականության և քերականության դասերի միջև ստեղծվող կապը, ուսուցչի մեթոդական վարպետությունը և էլի շատ բաներ: Սովորողների գրավոր խոսքը կատարելագործելը կապված է լեզվական-քերականական գիտելիքները գործնականորեն կիրառելու շնորհիվ աշակերտների ձեռք բերած հմտությունների և կարողությունների հետ: Ուստի ամենից առաջ հոգ պետք է տարվի ծրագրային նյութերի ըստ էության ուսուցման մասին, դրանց վերաբերյալ գիտելիքները գործնականորեն կիրառելու մասին: Առանց այս նախադրյալների՝ շոշափելի արդյունքի դժվար է հասնել: Գրավոր խոսքն ավելի շատ վերականգնելու, շտկելու հնարավորություն ունի, քան բանավորը: Հետևաբար գրավոր խոսքի զարգացման ընթացքում ձեռք բերված հմտություններն ու կարողությունները կարող են աստիճանաբար նպաստել նաև բանավոր խոսքում տեղ գտած սխալների կանխմանը, այսինքն՝ գրավոր խոսքը կարող է ծառայել նաև բանավոր խոսքի մշակմանն ու զարգացմանը:

Ներկայացնենք մի քանի վարժություններ և առաջադրանքներ, որոնք կնպաստեն գրավոր խոսքի զարգացմանը.

1. Վերադասավորել բառերն այնպես, որ նախադասություն ստացվի

երգ, ուղեկից, անբաժան, մարդ, կյանք, ծնվել, աշխատանք, հետ, տառապանք, ուրախություն (Երգը՝ մարդու կյանքի անբաժան ուղեկիցը, ծնվել է աշխատանքի, տառապանքի, ուրախության հետ):

2. Վերադասավորել նախադասություններն այնպես, որ կապակցված տեքստ լինի

Դա կարոտի գույնն էր: 7

Քո նվիրած վարդի թերթիկները թափվեցին մեկիկ-մեկիկ: 1

Թերթիկը լացեց: 5

Նրանք տխուր խշռոցով փշրվեցին: 3

Ես հավաքեցի այդ թերթիկները և ամուր սեղմեցի կրծքիս: 2
Իմ արցունքի և թերթիկի լացը նույն գույնն ունեին: 6
Իմ արցունքի կաթին ընկավ տերևների փշուրի վրա: 4

3. Ուրդել նախադասությունների սխալները

Ես չեմ հավաքվում բողոքելու: Բարձրացվեցին լուրջ հարցադրումներ: Արամ Մանուկյանը հանդիսանում է հայ նոր պետականության հիմնադիրը: Ինչու՞մն է պատճառը, որ դասի չէիր եկել: Հանձնարարված է կատարել պրոբլեմների ուսումնասիրում, առաջարկությունների մշակում: Նա անընդհատ թժնվում էր պետին: Նա պատկանում է այն բանաստեղծների թվին, որ տեսել է արքայի ու բռնություն: Ոչ ոք տեղյակ չէ նորածնության պահանջներից: Քո հետ խոսել չի լինում: Բռնվիր հայրիկի ձեռքից: Այդ տարածությունները դրվել են հացահատիկի տակ: Ձեր համար նա շատ բան է արել: Դուք չեք մերժում այդ փաստը: Նա ավարտեց իրեն աշխատանքը: Ես ինձ նեղված էի զգում այդ կապակցեթյամբ: Քեզ հետ ինչ պատահեց: Նրա այդ վարմունքը տեղի տվեց ավելորդ վիճաբանությունների: Այդ կռվի ընթացքում նա տուժվեց: Բազմաթիվ փայլուն դիվանագետներ կորցրինք:

4. Խաղ-«Իմ գաղտնի ընկերը»

Թղթի վրա խաղի մասնակիցները գրում են իրենց անունները, ծալում երկու տակ և զգում արկղիկը: Խառնելուց հետո յուրաքանչյուրը քաշում է մի թերթիկ և նկարագրում այն մարդուն, որի անունը գրված է թերթիկի վրա: Պետք է այնպես նկարագրի /բնավորություն, արտաքին, նախասիրություն, բնորոշ գծեր, առանձնահատկություններ, ինչ է սիրում, ինչն է նրան տխրեցնում ինչ բառեր է հաճախակի գործածում, ինչպես է հագնվում, ինչ գույն է նախընտրում/, որ կռահեն լսողները :

5. Խառնված հերթականությունների մեթոդ

Սովորողներին ներկայացվում է թղթի վրա խառը հաջորդականությամբ տեղի ունեցած և պատճառահետևանքային կապի մեջ գտնվող իրադարձություններ: Սովորողը պետք է վերադասավորի ճիշտ հերթականությամբ:

6. Գիրք՝ երկրի մասին

Դասարանը բաժանում են վեց ենթախմբի և հրահանգավորում, որ իրենց օգնությամբ գրելու ենք մի գիրք մեր երկրի մասին: Յուրաքանչյուր ենթախումբ պետք է գրի գրքի մի բաժինը: Ամեն մի ենթախմբից մեկը մոտենում է, ուսուցչի սեղանից վերցնում վեց թերթիկներից մեկը, որի վրա գրված է գրքի վեց բաժնից մեկի վերնագիրը: Գրքի բաժիններն են՝

1. Պատմական անցյալը, աշխարհագրական դիրքը
2. Մշակույթ
3. Սպորտ
4. Գյուղատնտեսություն
5. Արդյունաբերություն
6. Կրթություն:

7. Հարցազրույց ավագ ընկերոջ հետ

Հրահանգավորում-մտածիր և ընտրիր քեզ համար հեղինակավոր մեկին, որի հետ կարող ես մտերմիկ զրույցի բռնվել: Փորձիր նրա հետ հարցազրույց վարել: Գրառիդ հարցազրույցիդ տեքստը և դրա հիման վրա պատրաստիր մի հոդված:

8. Խնդրի շրջանաձև լուծում

Մասնակիցները նստում են շրջանաձև: Յուրաքանչյուրին տրվում է մի թուղթ: Թղթի վրա ամեն մեկը գրում է իրեն անհանգստացնող որևէ խնդրի մասին: Երբ բոլորը գրում են իրենց խնդիրները, փոխանցում են թղթերը իրենից աջ գտնվողին: Աջ գտնվողը կարդում է ընկերոջ խնդիրը, գրում լուծում մի նախադասությամբ և փոխանցում կողքինին: Այդպես այնքան ժամանակ, մինչև յուրաքանչյուրի գրավորն ընկնի իր մոտ:

9. Շարադրություն նկարի շուրջը

Շարադրել՝ պատասխանելով նաև հետևյալ հարցերին- նկարից ստացած ձեր առաջին տպավորությունը, Ինչպիսի՞ կոմպոզիցիա ունի նկարը, ի՞նչ տրամադրություն, ինչպիսի՞ զգացմունքներ, մտքեր և ցանկություններ է արթնացնում տվյալ նկարը, ի՞նչ կարելի է ասել ստեղծագործության հեղինակի մասին, այս նկարը ստեղծագործելիս ինչպիսի՞ զգացմունքներ են հուզել նկարչին:

10. Շարադրություն տրված բառակապակցություններով

ա/ սիրո գարուն, վարդի շուրթեր, գրելու ցանկություն, ծով աչքեր, հավատարմության երդում, ես և դու, անսպասելի հանդիպում, սիրով լեցուն, արցունքի տաք կաթիլներ, լուսին վկան, ոսկե հրաշք, սիրո հեքիաթ, մայրամուտի վերջին շողեր.

բ/ դատարկ ծառուղի, աշնանային վալս, անհուն թախիծ, կիսամերկ ծառեր, ավետափ լցված կարոտիս ծովը, հոգու դատարկություն, խուլ հեծկլտոց, մոլորված արցունքի մի կաթիլ, անհասանելի երազ, կույր սեր, ամուր սեղմեցի կրծքիս

11. Կարծիք, տեսակետ կարողացածի, բեմադրության, համերգի, հանդիսության մասին

12. Ստորումների, խոհերի վերարտադրություն

13. Նամակ՝ տարբեր ոճերով, տարբեր մարդկանց և տարբեր առ-
յանների ուղղված

14. Ինքնակենսագրություն՝ գեղարվեստական և գործնական
բնույթի

15. Մեկական նախադասությամբ ծեր մանկության և պատանե-
կության բնութագրում

16. Տրված հերիաթի համար սկիզբ և ավարտ գրել

17. Տրված տեքստը հարստացնել պատկերավոր արտահայտու-
թյուններով

18. Որևէ առարկայի, բնության երևույթի նկարագրություն

19. Սպորտային մեկնաբանություն

20. Տարբեր առիթների համար գրել հրավիրատոմս

21. Չափածո ստեղծագործության բովանդակության արձակ շա-
րադրանք

22. Արվեստագետի ստեղծագործական դիմանակարի կերտում

23. Թերթի հոդվածի տիպի շարադրանք՝ դատողություններով և
պարզաբանումներով

24. Թերթի հոդվածի տիպի շարադրանք՝ դատողություններով և
հիմնավորումներով

25. Տեքստի խմբագրում

26. Գովազդել որևէ բան

27. Դերքում

28. Լուրեր

Բառապաշարի հարստացմանը նպաստող վարժություններ և առաջադրանքներ

Բանավոր ու գրավոր խոսքի ցածր մակարդակը, պարզունակությունը հետևանք է հատկապես աղքատ բառապաշարի: Ուստի ուսուցանողը ամենից առաջ պետք է մտահոգվի սովորողի բառապաշարի հարստացման հարցով: Բառապաշարի հարստացման աշխատանքը պետք է տանել ն՝ լեզվի, ն՝ գրականության ուսուցման ընթացքում: Ստորև տրվում են մի քանի առաջադրանքներ, որոնք կնպաստեն բառապաշարի հարստացմանը:

1. Հանձնարարել գրել շատ գործածական միջազգային տերմինների հայերեն համարժեքները.

օր.՝ դեմոկրատիա-ժողովրդավարություն, ստրատեգիա-ռազմավարություն, տակտիկա-մարտավարություն, օպոզիցիա-ընդդիմություն, ինֆորմացիա-տեղեկություն, ֆեդերատիվ-դաշնային, սուվերեն-ինքնիշխան, ռեզիոն-տարածաշրջան, պարտնյոր-գործընկեր, կոորդինացնել-համակարգել, մացիոնալիստ-ազգայնամուլ, մասսայական-զանգվածային, սիստեմատիկ-հետևողական և այլն:

2. Տրված բառակապակցություններից կազմել բարդ բառեր.

Աստծուն պաշտող, Աստծու տված, կյանքի փորձ, դյուրությամբ մարսվող, խոտ ուտող, մեղուներ բուծող, աչքի բժիշկ, սեր տեւչացող, մարդկանց սիրող, նրբորեն հյուսված, թևերը տարածած, սակավ խոսող, սրտից բխող, հարողով շաղախված, փոթորկից հուզված, հույզերից խռովված, վարսեր հարդարող, քանդակներով զարդարված, հեքիաթ ասացող, աչքի խռոչ, խորշոմներով պատված, քուն բերող, կյանքով ուրախացող, կյանքով խնդացող, դրամ շորթող, բերդի պարիսպ, Աստծուց վախեցող, երկնքի կամար, տաղ ասող, ինքն իրեն մոռացած, ոսկե գեղմով, մեղմ ձայնով, պարթև հասակով, հողմից հալածված, գետնին տարածված, չորս գագաթ ունեցող:

3. Տալ հետևյալ բառերի բացատրությունները.

հեր, վարս, ծամ, աղվամազ, ձար, ստև, խոզան, բուրդ, ասր, գգաթ, գեղմ, այծյա:

4. Հետևյալ բառերից կազմել զույգեր.

մազ, դեմք, աչք, ականջ, այտ, շրթունք, ատամ, բեղ, ծնոտ, վիզ, կուրծք, բռունցք, ազդր, կրունկ, ոտնատակ, փոր, մեջք, անութ, բերան, ձեռք, հետույք, կուռ, մստատեղ, երախ, թևատակ, թիկունք, որովայն, ներբան, գարշապար, զիստ, կռուփ, ստինք, պարանոց, կզակ, ընչացք, ակռա, պռոշ, թուշ, ունկն, ակն, երես, հեր:

5. Ինքնուրույն կազմել կամ հանձնարարված տեքստում գտնել այնպիսի բարդ բառեր, որոնց և առաջին, և երկրորդ բաղադրիչը դրական իմաստ է արտահայտում, դրական իմաստ է արտահայտում նաև բարդությունը

օր.՝ լուսաժպիտ=լույս (դրական), ժպիտ (դրական), լասաժպիտ (դրական):

6. Ինքնուրույն կազմել կամ հանձնարարված տեքստում գտնել այնպիսի բարդ բառեր, որոնց առաջին բաղադրիչը արտահայտի դրական իմաստ, երկրորդ բաղադրիչը՝ բացասական, իսկ բարդությունն արտահայտի բացասական իմաստ.

օր.՝ հոգեմաշ:

7. Ինքնուրույն կազմել կամ հանձնարարված տեքստում գտնել այնպիսի բարդ բառեր, որոնց և առաջին, և երկրորդ բաղադրիչը բացասական իմաստ է արտահայտում, բացասական իմաստ է արտահայտում նաև բարդությունը.

օր.՝ դառնաթախիծ:

8. Ինքնուրույն կազմել կամ հանձնարարված տեքստում գտնել այնպիսի բարդ բառեր, որոնց առաջին բաղադրիչը բացասական իմաստ է արտահայտում, երկրորդ բաղադրիչը դրական, իսկ բարդությունն արտահայտում է բացասական իմաստ.

օր.՝ դառնաժպիտ:

9. Բացատրել հետևյալ բառերի իմաստը.

աշխետ, արջն, երախշ, գարտակ, սիավ

10. Ինչպե՞ս են անվանում ներքոհիշյալ կենդանիների խումբը, ծայնը, բույնը, ծագին, արուհն, էգին.

առյուծ, ուղտ, արջ, գոմեշ, կով, ոչխար, այծ, էշ, ձի, շուն, գայլ, խոզ, աղվես, ձուկ, հավ, աղավնի, գորտ, մուկ, ագռավ, սագ, մեղու:

11. Գրել հետևյալ բառերի հայերեն անվանումները.

բանան, ապելսին, գրեյֆֆրութ, սմորողինա, կրիժովնիկ, ալվեպիխա, կլուբնիկ, մալինա, բարբարիս, վիշնյա, գիլաս, շլոր, անանաս, կարալոկ:

12. Բառակապակցությունների իմաստն արտահայտել մեկ բառով.

ա) գլուխ տալ, ափին մոտ, էգ ձի, առանց ամուսին, առաջին որդի, պայտ խփող, երկինք հասած, լավությունը մոռացող, հայրենիքից արքսորված, աչքը ճանփին մնալ, կրիայի քայլերով, թագավորի տղա,

առյուծի ձագ, լույս աշխարհի գալ, պարտեզ խնամող, ուժեղ քամի, վատ լուր, լավ լուր, կռվում մեռնել, բոցագույն ձի, գառամյալ տղամարդ, ծառաբնի խռոչ, քաղաքամերձ բնակավայր, հորդ անձրև

բ) դանակի կտրող մասը, սարդի հյուսած ցանց, հագուստ կարող, սաստիկ շոգ, ձիու թեթև, համաչափ ընթացք, սանձը քաշել, գլխի տակ փափուկ բարձ դնել, փակագծերը բացել, գլխին սառը ջուր լցնել, ափերից դուրս գալ, դեմն առնել, ոտքերն ընկնել, սիրտ տալ, արյան գնով, թևաթափ լինել, աշխարհով մեկ լինել, կրակի վրա յուղ լցնել, լուռ ուղտ դարձնել, դիմակը պատռել, զենքերը վայր դնել, ծանր ու թեթև անել, կողը հաստ

գ) սեղան գցել, հավուր պատշաճի, ընկած-ելած, մի գլուխ, մատը կծել, ականջը գցել, քթի տակ, հողին հավասարեցնել, հոգոց հանել, սիրտը շահել, դեմքը թթվեցնել, կանաչ-կարմիր կապել, սև թուղթ, հորձանք տալ, սուր ճոճել, բախտավոր աստղի տակ ծնվել, ուղտի ականջում քնած, մուսան գալ, մեկի դուրսի տակ պարել, կողի ընկնել, կարճ կապել:

13. Գրել ձևով նույն, իմաստով տարբեր (համանուն) բառեր և կազմել մեկական նախադասություն.

14. Գտնել տրված բառերին ընդհանուր վերջ:

- ա) գետ, գավ, թափ, կանգ, կիթ, մաճ, տակ.
- բ) ծով, ձոր, գետ, շաղ, թառ, քար.
- գ) ձագ, կամ, համ, կապ, ար, խավ.
- դ) հյուղ, սուտ, թութ, պահ, մեխ, սոխ.
- ե) պատ, դաս, հուն, շալ, տնտես, մեքենա
- զ) տաղ, օր, սլաք, գործ, նավ
- է) այգ, հանգ, ժամ, համ, դեր, պար.

15. Գտնել տրված բառերին ընդհանուր սկիզբ.

- ա) ափ, ավան, աղ, այր, այծ, հանք.
- բ) գամ, իժ, վար, կեր, առ, շար, ճառ.
- գ) պաս, ափ, ակ, չին, ավանդ.
- դ) աման, անձ, մուկ, ցան.
- ե) սանդ, որդ, պետ, կատու.

16. Տրված տեքստի ընդգծված բառերը փոխել հոմանիշներով.

ա) Արյունարբու Լեկթեմուրը, ճանապարհին սփռելով մահ ու արյուն, իր հրոսակախմբով Սամարղանդից հասել էր հայոց աշխարհը, հիվանդացել ու զամվել անկողնուն: Դեղ հայթաթելու նպատակով նրա

ելուզակներն ընկան սար ու ձոր և վերջապես մի օր արևի ոսկեդեղծան ճառագայթների տակ տեսան լերկ ժայռերին կռթնած մի գողտրիկ վանք, ուր ճգնում էր մեծահամբավ բժիշկ Առաքել Մոկացին: Նրան հապշտապ բերեցին անբարտավան աշխարհակալի մոտ, որի որոտրն-դոստ ձայնն արդեն մարել էր, աչքերը՝ պաղել:

բ) Ազգային ինքնապանության գանազան ձևեր կան, և դրանց մեջ ամենադյուրինը, ըստ իս, սնապարծությունն է, որ նման է տաք ջրով լեզուն լողարանի մեջ սեփական երակը կտրելուն: Մենք շատ քամիներ ենք տեսել և եթե գայսօր գոյատևում ենք, ապա շնորհիվ այն քամի, որ քամիները թռցրել են մեր գլխարկը, բայց ոչ գլուխը: Այնինչ սնամեջ ու հավակնուտ պոռոտախոսությունը, գլուխգոլվանությունը առաջացնում են քամի, որ քնավ էլ գլխարկ չի թռցնում, այլ գլուխ: Աշխարհի ժողովուրդների շարքում մենք թերևս այն հազվագյուտ ժողովուրդն ենք, որ դաժան բախտի և աննախանձելի վիճակի հասանք գուցե այն պատճառով, որ կարգին չսովորեցինք ուրիշին ասելու հատկությունը: Ոչ մի ազգ ու ցեղ չի կարող մեզ հանդիմանել որևէ մեկին ստորագնելու, որևէ մեկին քռնի ձուլելու հանգանքի մեջ:

17. Տրված բառերից առանձնացնել նրանք, որոնք կարող են հատկանիշ դառնալ տրված գոյականի համար և ստացված բառակապակցություններով կազմել նախադասություններ:

տեսարան

պճնազարդ, վետվետուն, կարկառուն, հրապուրիչ, շքեղ, պերճապաճույճ, հոգեպարար, ակնապարար, պանծալի, սիգապանծ, ակնահաճո, շնկշնկան, կախարդական, մոգական, անվայել, պերճաշուք, փառավոր, փառահեղ, սնափառ, գորշ, սարսռազուռ, խղճուկ, զարմանահրաշ, քստմնելի, դյուբիչ:

աչքեր

շողարձակ, մարմրուն, շանթարձակ, հրաշյա, դաժան, մավի, արևաշող, բարեգութ, միամիտ, սրամիտ, բթամիտ, սրտագրավ, սրտառուչ, սրտաբեկ, սրտաշարժ, նվաղկոտ, տրտուն, լուրթ, ապերջանիկ, բիրտ, զթառատ, զուլալ, ակնակիտ, սրատես, գորովագութ, խորամանկ, կախարդիչ, խորունկ, վանող, խոնավ, անարատ, ծով:

հայագք

համառ, ցնորամիտ, տարակա, բացակա, ներկա, տարանցիկ, հպանցիկ, մռայլ, անրջային, լկտի, լքյալ, դաժան, անամոթ, անամոք, անկապ, ցասկոտ, մշուշոտ, միգապատ, առողջ, հիվանդ, հիվանդագին, երերուն, վարանոտ, անբարեհամբույր, անհամ, անզուգական, անհամաչափ, դշխոյական, նվաղկոտ, դժխեն:

18. Գրել տրված դարձվածքների հականիշները.

աչքը կուշտ, աչքի լույս, Աստու գառ, ավգյան ախոռ, բերանը շաղ տալ, բերանը ջուր առնել, գլխից մեծ գործ բռնել, գործը գլուխ բերել, երկինք հանել, լեզուն երկարացնել, խելքը գլուխը հավաքել, կաշին ու ոսկորը մնալ, հուլի պես պտտվել, ձեռքը բաց լինել, ձվից նոր դուրս եկած, յոթ սարի հետևում, ջրի գին ունենալ, փափախը գետնով տալ:

19. Կազմել հոմանիշ դարձվածքների զույգեր.

անփակ բերան, աշխարհով մեկ լինել, աչքակապույթյամբ զբաղվել, աչքի փուշ դառնալ, բախտի անիվը թեքվել, բախտի քմահաճույքին թողնել, բարև տաս՝ Բարեկենդանին կգա, բերան ծռել, գլխին մատեցնել, դարմանի տակի ջուր, երեսը պինդ, ընկած-ելած մարդ, լեղին ջուր կտրել, կաշին ազատել, կաշին քերել, կողի ընկնել, մեկի ջրադացին ջուր լցնել, մի ծաղկով գարուն չի գա, մռուքը կախել, շան ու գելի բաժին դարձնել, սիրտը ճաքել, մի ձեռքը ծափ չի տա, մեկի ասեղը թելել, փորձված գայլ, գլուխն ազատել, երկու ոտքը մի մաշկի մեջ դնել, հոգին հանել, քամուն տալ, դեմքը թթվեցնել, աչքի գրողը դառնալ, կաշին հաստ, երես տալ, վիզ ծռել, երես տաս-աստառ կուզի, բախտը երես թեքել, ինքնահոսի մատնել, մարմանդ գետ, բախտը ժպտալ, անդուռ բերան, աչքին թոզ փչել, ուրախությունից պար գալ:

20. Բացատրել հետևյալ դարձվածքները.

աղ ու հացով, անդանակ մորթել, ատամները հաշվել, արյան կանչ, աքիլլեսյան գարշապար, բանը բանից անցնել, բերանը ջուր առնել, գառան մորթով գայլ, գլխին Ավետարան կարդալ, գլխի ճարը տեսնել, գլխին զոռ տալ, գլուխ պահել, գորդյան հանգույց, երկու քարի արանքում լինել, թացը չորից ջոկել, թևեր առնել, ինչպես ձուկը ջրում, լեզուն կծել, խարիսխ զցել, ծայրը ծայրին հացնել, ծանրութթև անել, կրակի կտոր, կրակի վրա յուղ լցնել, հուդայի համբույր, ձեռք ձեռքի տալ, ձվի մեջ մազ փնտրել, ճանճ բռնել, մազից կախված լինել, մատից փուշ հանել, մատի փաթաթան դարձնել, մատների արանքով մայել, յոթերորդ երկնքում լինել, շուն ու կատու լինել, ոսկի սարեր խոստանալ, ոտքն իր վերմակի չափ մեկնել, պատի ծեփ դառնալ, պողոս-պետրոս դուրս չի գա, պոչ կպցնել, ջուրը մի առվով չզնալ, փորը օձերով լիքը, քարը փեշից թափել

21. Խմբավորել հականիշ դարձվածքները.

տունդ շինվի, մի մատնոց թան չարժի, օգնության ձեռք մեկնել, գրպանում մկներ են խաղում, առյուծի կաթ խմել, գործը առաջ գնալ, տունդ քանդվի, աշխարհ արժի, ցեխի մեջ ընկածին տրորել, նաբոնի պես հարուստ, շավարը ոտներն ընկնել, խոփը քարի դեմ առնել, ձվից

նոր դուրս եկած, լեզուն ատամների տակ պահել, ջրի գին ունենալ, ավգյան ախոռ, խոսքը գետնովը տալ, փողերը քամուն տալ, գլխից մեծ գործ բռնել, երկինք հանել, մի սև փիսիկի կյանք չունենալ, դուռը ցույց տալ, լեզվի կապերն արծակել, կրակի գին ունենալ, գրկաբաց ընդունել, գլխին դնել՝ ման ածել, հողին հավասարեցնել, յուղը թափես կհավաքես, խոսքը գլխից բարձր բռնել, փողը տակը դնել նստել

22. Տրված բառերի հետ գործածել հատկանիշ արտահայտող երկուական բառ:

1. առավոտ, աղբյուր, երկինք, օրիորդ, անտառ
2. վերաբերմունք, օրորվել, կածան, ժպտալ, քաղաք
3. դիմավորել, վերջալույս, օձիք, զեփյուռ, փողոց
4. ավարտել, հուշ, գագաթ, որդի, հագուստ
5. ժամանց, խոսք, հիշել, հանգիստ, օր
6. փաղաքշել, քայլել, ժպիտ, երգ, խինդ
7. գիշեր, խոսել, անցյալ, հյուր, բարդի
8. ծերունի, հյուղակ, նայել, դեմք, հայացք
9. ընկղմվել, տարածություն, ջրվեժ, աղոթել, ալիք
10. սայթաքել, սար, մթնշաղ, ամպ, հող:

Օգտագործված աղբյուրներ

1. Ավդալյան Լ., Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Եղեգնաձոր, 2008:
2. Նազարյան Ռ., Մայրենին բոլորի համար, Երևան, 2000:
3. Ղազարյան Պ., Թելադրության նյութերի ժողովածու, Երևան, 2010:
4. Գյուրջինյա Դ., Հեքեքյան ն. , Հայոց լեզու, Երևան, 2002:
5. Զաքարյան Հ., Կետադրական բառարան, Երևան, 1998:
6. Դավթյան Յ., Հայերենի կետադրության ինքնուսույց, Երևան, 1995:
7. Աբրահամյան Ս., Հայոց լեզու, Երևան, 2004
8. Միրունյան Ս., Հոմանիշ, հականիշ, համանուն..., Երևան, 2005
9. Աղաջանյան Ա., Նույնանունների և դարձվածքների համառոտ բացատրական բառարան, Երևան, 1989
10. Օհանյան Գ., Հայոց լեզվի խոսքային օրինակներ, Հրագդան, 2010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Հայոց լեզու» առարկայի դասավանդումը պետք է հետապնդի հետևյալ խնդիրների լուծումը	3
«Հայոց լեզու» առարկան ուսումնասիրելուց հետո սովորողը պետք է կարողանա	3
Վարժություններ ուղղագրությունից	5
Կետադրություն	
Նախադասության բազմակի անդամների կետադրությունը	18
Տրոհվող որոշչի կետադրությունը	24
Տրոհվող հատկացուցչի և իմաստով չկապվել բառերի կետադրությունը	28
Բացահայտչի կետադրությունը	30
Տրոհվող դերբայական դարձվածի կետադրությունը	39
Մեջբերվող ուղղակի խոսքի և կոչականի կետադրությունը	49
Կոչականի կետադրությունը	53
Տրոհվող բառերի և բառակապակցությունների կետադրությունը	56
Ձայնարկության կետադրությունը	59
Միջանկյալ նախադասության կետադրությունը	63
Բարդ համադասական նախադասության կետադրությունը	67
Բարդ ստորադասական նախադասության կետադրությունը	73
Հրամայական եղանակի բայերի կետադրությունը	78
Ձեղչված ստորոգյալով նախադասության կետադրությունը	80
Վարժություններ հոմանիշներից, հականիշներից համանուններից	82
Վարժություններ դարձվածաբանությունից	93
Բառերի ուղիղ և փոխաբերական իմաստ	100
Բանավոր խոսքի զարգացմանը նպաստող առաջադրանքներ, վարժություններ, խաղեր	105
Գրավոր խոսքի զարգացմանը նպաստող առաջադրանքներ, վարժություններ, խաղեր	109
Բառապաշարի հարստացմանը նպաստող վարժություններ և առաջադրանքներ	113
Օգտագործված աղբյուրներ	118

Կիրակոսյան Գագիկ Հակոբի

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻՑ**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ 2015

Киракосян Гагик Акопович

**ПРАКТИЧЕСКИЕ УПРАЖНЕНИЯ
ПО АРМЯНСКОМУ ЯЗЫКУ**

УЧЕБНОЕ ПОСОБИЕ

ЕРЕВАН 2015

Ստորագրված է տպագրության 16.03.2015թ..
Թղթի չափսը 60x84 ¹/₁₆, 7,5 տպ. մամուլ, 6 հրատ. մամուլ
Պատվեր 176: Տպաքանակ 250:

ՀԱԱՀ-ի տպարան, Տերյան 74